Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ

ԼՈՒՍԱՒԱՌ

3-4(541-542)
11.02.2019
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Лусарар ● ԿՐԹԱԳԻՏԱԿԱՆ ԹԵՐԹ ● Lusarar

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ-150

ՄԵՐ ՈՒԽՏԸ



Մենք ուխտ ունենք՝ միշտ դեպի
լույս,
Ու գընում ենք մեր ճամփով,
Մըրրիկներով պատած անհույս,
Սեվ խավարով, մութ ամպով:

Մենք անցել ենք արյան ծովեր,
Սար ենք տեսել ու կըրակ,
Մեր ճակատը դեմ ենք արել
Մըրրիկներին հակառակ:

Ու թեպետև պատառ-պատառ
Մեր դըրոշը սըրբազան,
Ու մենք չունենք տեղ ու դադար-
Երկրից երկիր ցիրուցան,

Բայց գընում ենք մենք անվեհեր
Ձարկերի տակ չար բախտի,
Մեր աչքերը միշտ դեպի վեր՝
Դեպի լույսը մեր ուխտի:

ՀԱՅՈՑ ԼԵՌՆԵՐՈՒՄ

Մեր ճամփեն խավար, մեր ճամփեն գիշեր,
Ու մենք անհատնում
էն անլույս մըթնում
Երկա՜ր դարերով գընում ենք դեպ վեր
Հայոց լեռներում,
Դըժար լեռներում:

Տանում ենք հընուց մեր գանձերն անգին,
Մեր գանձերը ծով,
Ինչ որ դարերով
Երկնել է, ծընել մեր խորունկ հոգին
Հայոց լեռներում,
Բարձըր լեռներում:

Բայց քանի անգամ շեկ անապատի
Օրդուները սև
Իրարու ետև
Եկա՛ն զարկեցին մեր քարվանն ազնիվ
Հայոց լեռներում,
Արնոտ լեռներում:

Ու մեր քարվանը շըփոթ, սոսկահար,
Թալանված, ջարդված
Ու հատված-հատված
Տանում է իրեն վերքերն անհամար
Հայոց լեռներում,
Սուգի լեռներում:

Ու մեր աչքերը նայում են կարոտ՝
Հեռու աստղերին,
Երկընքի ծերին,
Թե ե՞րբ կըբացվի պայծառ առավոտ՝
Հայոց լեռներում,
Կանաչ լեռներում:

ՀԱՅՐԵՆԻՔԻՍ ՀԵՏ

Վաղուց թեև իմ հայացքը Անհայտին է ու հեռվում
Ու իմ սիրտը իմ մըտքի հետ անհուններն է թափառում,
Բայց կարոտով ամեն անգամ երբ դառնում եմ դեպի քեզ՝
Մըղկըտում է սիրտըս անվերջ քո թառանչից աղեկեզ,
Ու գաղթական զավակներիդ լուռ շարքերից ուժասպառ,
Ե՛վ գյուղերից, և՛ շեներից՝ տըխո՜ւր, դատարկ ու խավար,
Ձարկվա՜ծ հայրենիք,
Ձըրկվա՜ծ հայրենիք:

Խըռնըվում են մըտքիս հանդեպ բանակները անհամար,
Տըրորում են քո երեսը, քո դաշտերը ծաղկավառ,
Ու ջարդարար ոհմակները աղաղակով վայրենի,
Ավարներով, ավերներով, խընջույքներով արյունի,
Որ դարձըրին քեզ մըշտական սև ու սուգի մի հովիտ,
Խեղճ ու լալկան քո երգերով, հայացքներով անժըպիտ,
Ողբի՜ հայրենիք,
Որբի՜ հայրենիք:

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,
Կանգնած խոհո՜ւն, խորհըրդավոր ճամփին նորի ու հընի.
Հառաչանքով սըրտի խորքից խոսք ես խոսում աստծու հետ
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում չարաղետ,
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձըգտում է մեր հոգին-
Հույսի՜ հայրենիք,
Լույսի՜ հայրենիք:

Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած,
Հազա՜ր-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած,
Ու երկնահաս քո բարձունքին, Արարատի սուրբ լանջին,
Կենսաժըպիտ իր շողերը պիտի ժըպտան առաջին,
Ու պոետներ, որ չեն պըղծել իրենց շուրթերն անեծքով,
Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով,
Իմ նո՜ր հայրենիք,
Հըզո՜ր հայրենիք...

Ասուլիս

ՆԱԽԱՐԱՐՆ ԱՄՓՈՓԵՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Փետրվարի 5-ին տեղի ունեցավ ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղաբալյանի մամլո ասուլիսը: Նախարարն անդրադարձավ հաշվետու տարում ոլորտում իրականացված աշխատանքներին, ձեռքբերումներին, առկա խնդիրներին: Նրա բնութագրմամբ՝ 2018 թվականը գերատեսչության համար եղել է ոլորտային խնդիրների ուսումնասիրման, համակարգային մոտեցման, նոր լուծումների նախանշման ու նոր ծրագրերի նախապատրաստման տարի: Ընդհանուր առմամբ աշխատանքներն ակտիվացվել են հետևյալ ուղղություններով. կրթության բոլոր օղակների խնդիրների վերհանում, ուսումնասիրում և նոր ռազմավարության մշակում, ներառական կրթություն, նախնական տեխնոլոգիական կրթություն և կրթական տեխնոլոգիաների ներդրում հանրակրթության մեջ, մասնագետների վերապատրաստում և դպրոցների համալրում նոր մասնագետներով, գործընկերության և կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում:

Ն. Աղաբալյանը ըստ ոլորտների մանրամասնեց կատարված աշխատանքներն ու անելիքները:

Նախադպրոցական կրթության ոլորտում վերջին տասնամյակում զգալի աշխատանքներ են կատարվել. կառուցվել են տասնյակ նոր հաստատություններ մայրաքաղաքում ու շրջաններում, բայց միջոցները բավարար չեն կարճ ժամանակամիջոցում նախադպրոցական տարիքի բոլոր երեխաներին բավարարելու համար: Շուրջ 6000 երեխա այսօր ընդգրկված է նախակրթարաններում, բայց 3500-ը դուրս է մնացել նախադպրոցական կրթությունից: Ուստի պետք է մշակվեն նոր ծախսարդյունավետ մոդելներ, ինչը հնարավորություն կտա ավելի կարճ ժամկետներում բոլոր երեխաներին ընդգրկել ոլորտում, որը շատ կարևոր է ընդհանրապես երեխայի կրթությունը ճիշտ կազմակերպելու համար: Կակտիվացնեն նախակրթարանների ստեղծման աշխատանքները՝ ներգրավելով նաև մասնավոր հատվածը:

Ն. Աղաբալյանը նշեց, որ հարցը հատկապես հրատապ է մայրաքաղաքում, որտեղ մանկապարտեզների համար հատուկ տարածքների խնդիր կա. որպես լուծման տարբերակ է ժամանակին ընտրվել բազմահարկ շենքերի առաջին հարկերը մանկապարտեզներին հատկացնելը: Նախարարն անձամբ կողմ է, որ առանձին շենք-շինություններ լինեն մանկապարտեզների համար, բայց մյուս կողմից առկա է դրանց համաչափ տեղաբաշխման խնդիրը: Մայրաքաղաքի բոլոր հատվածներում չէ, որ կան ազատ տարածքներ՝ մանկապարտեզներ կառուցելու: Եվ այնտեղ, որտեղ չկան ազատ տարածքներ, ստիպված են լինելու բազմահարկ շենքերի առաջին հարկերը հարմարեցնել: Բայց պետք է ամեն ինչ կառուցվի քաղաքաշինության նորմերով, վստահեցրեց նախարարը՝ հավելելով, որ, այնուամենայնի, աշխատանքներն ավելի շատ կուղղեն առանձին շինություններ հատկացնելուն:

Նախարարությունը տարվա ընթացքում մշտադիտարկում է իրականացրել նախադպրոցական հիմնարկներում՝ վերհանելու այդ օղակի խնդիրները, իսկ առաջիկայում նախատեսվում են մեծ սեմինար-քննարկումներ:

Հանրակրթության ոլորտում ավելի մեծ ուշադրությունը դարձվել է **համընդհանուր ներառական կրթությանը,** որովհետև, ինչպես ասաց նախարարը, մեզանում սխալ ընկալում կար դրա վերաբերյալ. ձգտելով կրթության առանձնահատուկ կարիք ունեցող երեխաներին ինտեգրել կրթական միջավայրում՝ նրանց բերել են դպրոց, բայց այդտեղ առանձնացրել, քանի որ չեն պատրաստել ուսուցիչներին, տնօրեններին, այլ ներդրել են միայն մասնագետների՝ հոգեբանի, սոցիալական և հատուկ մանկավարժի ինստիտուտը: Այդ նպատակով հաշվետու ժամանակաշրջանում ակտիվ համագործակցություն է սկսվել ներառականության հարցերով զբաղվող «Հույսի կամուրջ» կազմակերպության հետ, և մի շարք քննարկումներ են իրականացվել, նաև՝ վերապատրաստման դասընթացներ տնօրենների ու փոխտնօրենների համար, որոնց փորձել են վերապատրաստել նաև որպես վերապատրաստողներ՝ հետագայում այդ աշխատանքներին ավելի լայն թափ հաղորդելու:Միևնույն ժամանակ նախարարությունը պայմանավորվածություն ունի Արցախի պետական համալսարանի հետ, որպեսզի մանկավարժական բոլոր մասնագիտություններում անպայման մտցվի ներառական կրթության մոդուլը: Նախարարությունն անչափ կարևորում է ներառական կրթությունը, քանի որ այն բոլորի համար է, ուստի պետք է պատրաստեն բոլոր ուսուցիչներին, որ նրանք կարողանան անհատական վերաբերմունք ցուցաբերել յուրաքանչյուր երեխայի նկատմամբ: Նախարարության կողմից գործնական քայլեր են արվել Ստեփանակերտում մանկավարժահոգեբանական կենտրոն ստեղծելու ուղղությամբ:

Շարունակելով թվարկել հանրակրթության մեջ կատարված աշխատանքները՝ Ն. Աղաբալյանը նշեց, որ ակտիվացրել են աշխատանքները նաև **նախնական տեխնոլոգիական կրթության** ապահովման ու դպրոցներում ժամանակակից կրթական տեխնոլոգիաների ներդրման ուղղությամբ. այս առթիվ համագործակցում են «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի և Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միության (ԱՏՁՄ) հետ: Մասնավորապես այս համագործակցության շնորհիվ «Թումո» հաճախող երեխաների թիվն ավելացել է 350-ով՝ հասնելով 1250-ի: Իսկ ԱՏՁՄ-ի հետ կնքվել է հուշագիր, որի շրջանակներում «Արմաթ» ինժեներական լաբորատորիաներ են բացվել ևս 7 դպրոցներում՝ Ասկերանի, Հադրութի, Մարտակերտի, Մարտունու (ընթացքի մեջ է), ինչպես նաև Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր, Կովսական և Ստեփանակերտի հ. 3 դպրոցներում: 2019-ին ակնկալվում է ևս 15 դպրոցներում ներդնել: Այս ուղղությամբ սկսելու են նաև «Ես» ծրագիրը, որն առայժմ Մարտունու շրջանում է իրականացվելու: Արտաբյուջետային միջոցներով վերապատրաստման դասընթացներ են իրականացվել հանրապետության շուրջ 70 դպրոցների ինֆորմատիկայի ուսուցիչների համար: Ֆիզիկայի եվրոպական ասոցիացիայի Yerevan Young Minds անդամ նախագծի անդամների հետ համագործակցության արդյունքում ստեղծվել է Artsakh Young Minds-ը՝ անդամագրվելով միջազգային ասոցիացիային, որը հնարավորություն կտա նաև գիտական միջավայրում ներկայացնել Արցախը:

Սա արվել է **բնագիտական հոսքի առարկաների** և դասավանդման խթանման նպատակով: Շարունակելով թեման՝ Ն. Աղաբալյանն ասաց, որ 2018-ին նախարարությունը կազմակերպել է «Մեզոսկոպիկ և քվանտային ֆիզիկայի ձեռքբերումներն ու զարգացման միտումները» գիտաժողովը 50-ից ավելի հեղինակավոր գիտնականների և ֆիզիկայի ուսուցիչների մասնակցությամբ՝ ճանաչված ֆիզիկոս, պրոֆեսոր Ալեքսեյ Կավոկինի նախաձեռնությամբ և Հայ-ռուսական(սլավոնական) համալսարանի հետ համագործակցությամբ, դրա շրջանակներում նաև դասընթացներ են կազմակերպվել ֆիզիկայի ուսուցիչների համար: Բնագիտական առարկաների նկատմամբ հետաքրքրություն առաջացնելու և դասավանդումը խթանելու նպատակով նախարարությունը հայտարարել է անվանական կրթաթոշակներ սահմանելու մասին: Այս ուղղությամբ նաև նոր ծրագիր ունեն. 2018-ի նոյեմբերին ԱՀ նախագահը ԱՄՆ-ում համահայկական դրամահավաքի շրջանակներում հանդիպումներ է ունեցել բարերարների հետ, և պայմանավորվածություն է ձեռք բերվել Ստեփանակերտում IT դպրոցի ստեղծման ծրագրի մասով, որը կիրականացվի «Թրփանջյան» հիմնադրամի հետ՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի խողովակներով: Նախագծանախահաշվարկային փաստաթղթերի պատրաստումն ընթացքի մեջ է, աշնանը կմեկնարկեն շինարարական աշխատանքները:

Կներդրվի ուսուցիչների համար փորձուսուցման նոր ծրագիր, նրանց հնարավորություն է տրվելու ուսումնասիրել ՀՀ և Սփյուռքի դպրոցների փորձը, ինչն օգտակար կլինի նոր մեթոդների ներդրման առումով:

2018-ին **մասնագիտական կողմնորոշման** նոր ծրագիր է իրականացվել ԱՀ ՊՆ-ի հետ համագործակցությամբ՝ 9-րդ դասարանցիների համար: Շուրջ 2000 աշակերտ հնարավորություն է ունեցել ծանոթանալու մեր հանրապետությունում գործող արհեստագործական և միջին մասնագիտական կրթություն իրականացնող հաստատությունների ծրագրերին, ինչը դրական ազդեցություն է ունեցել ընդունելության արդյունքներով:

Անդրադառնալով դպրոցները մասնագետներով ապահովելուն և մասնավորապես **ուսուցիչների թափուր տեղերը** համալրելու խնդրին՝ նախարարն ասաց. «Մենք ունենք մեր առանձնահատկությունները: Ինչքան փոքր է համայնքը, այնքան նեղանում է հնարավոր մասնագետների շրջանակը: Հենց այդ պատճառով էլ ունենում ենք մասնագետների խնդիր և ավելի շատ՝ վերաբնակեցվող համայնքների դպրոցներում: Լուծումը կարող էր լինել դպրոցական համակարգի օպտիմալացումը, բայց սա պետք է իրականացնել շատ խորքային ուսումնասիրության և վերլուծության արդյունքում, որ չնպաստենք գյուղից արտագաղթի խթանմանը, այլ փորձենք ամրացնել գյուղը: Այս ուղղությամբ պետք է համագործակցենք տարբեր գերա-

☞ 2

30 ՏԱՐԻ ԱՌԱՋ

1989թ. ՓԵՏՐՎԱՐԸ

Իմ օրագրից

Արդեն լրանում է մեր Շարժման մեկ տարին, բայց, ցավոք, մեր ժողովրդի արդար պահանջի լուծման հեռանկար չեմ տեսնում: Մոսկվան նորանոր որոշումներ է ընդունում, որոնցում միշտ շեշտում է «Ադրբեջանական ՍՍՀ» բառերը, այն դեպքում, երբ ամբողջ աշխարհի լրատվական միջոցները հնչեցնում են «Нагорный Карабах» տերմինը: Մոսկվան՝ «Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար մարզ»-ի մասին է անընդհատ նշում, որն ավելի է գրգռում մեր ժողովրդին ու շիկացնում մթնոլորտը:

1-12.02.1989թ.: Մթնոլորտը քիչ փոխվել է, Հատուկ կոմիտեն համարյա ամեն օր հանդիպումներ է ունենում թե ակտիվի և թե աշխատավորական որոշ խավերի հետ: Այս օրերին 2 անգամ բախտ եմ ունեցել հանդիպել Հատուկ կառավարման կոմիտեի անդամների հետ և չգիտեմ ինչու՝ ուզում եմ համոզվել, որ մեր մարզը լավ արդյունքների է հասնելու, որ մեծ հեռանկարներ են սպասվում: Օրագրիս կցված է ՍՍՀՄ ԳՍ նախագահության հրամանագիրը մարզում կառավարման հատուկ ձև սահմանելու մասին, որը բաղկացած է 7 կետից և գործողության մեջ է 1989թ. հունվարի 20-ից(կետ7): Այս հրամանագրում էլ է գրված «Ադրբեջանական ՍՍՀ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում արտահայտությունը, և հենց առաջին կետը գրգռիչ է. «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում ժամանակավորապես սահմանել կառավարման հատուկ ձև» (լավ է) բայց գրգռիչ է, որ շարունակում է՝ «պահպանելով Լեռնային Ղարաբաղի՝ որպես Ադրբեջանական ՍՍՀ կազմում ինքնավար մարզի ստատուսը»: Ասացի երկու անգամ հանդիպել եմ կոմիտեի անդամների հետ, որը կազմված է 8 հոգուց. հինգը՝ Մոսկվայից, 3-ը մեր մարզից (Ս.Բաբայան, Վլ.Թովմասյան և Վ.Զաֆարով): Ինձ հուզող հարցով դիմել եմ Հատուկ կոմիտեի գաղափարական աշխատանքի պատասխանատու ընկ. Վ.Ա.Սիդորովին՝ նշելով, որ ես վաստակավոր պրոպագանդիստ եմ, պատմության ուսուցիչ, դասավանդում եմ նաև «Իրավունք» առարկան, քաջ տեղյակ եմ ՍՍՀՄ սահմանդրության բոլոր 174 հոդվածներին, որտեղ 119-րդ հոդվածում ոչ մի կետ չգտա, չնայած հրամանագրում գրված է. «...ՍՍՀՄ սահմանադրության 119-րդ հոդվածի 14-րդ կետին համապատասխան որոշում է», և ստանում եմ հետևյալ պատասխանը. «ՍՍՀՄ Գերագույն Սովետի վերջին սեսիայում որոշում է ընդունվել լրացուցիչ փոփոխություններ մտցնել ՍՍՀՄ սահմանադրության մեջ. «В ней какраз были уточнены полномочия Президиума ВС СССР. В частности, за ним было закреплено право вводить в интересах защиты СССР и безопасности его граждан чрезвычайного положение в отдельных местностях... вводить в указанных случиях особые формы управления...»: Բավարարվել եմ այդ պատասխանով և այն հասցրել սաներիս և մասսաներին:

13.02.1989թ.: Դպրոցում իմացա, որ քաղաքի որոշ ձեռնարկություններ չեն աշխատում, որոնց թվում՝ կոշիկի ֆաբրիկան և գյուղատնտեսական մեքենաների վերանորոգման գործարանը: Ես ճիշտ չեմ համարում այդ քայլը, ախր չէ՞ որ ծանոթանալով Հատուկ կոմիտեի պլատֆորմին՝ ակընկալում եմ լավը, Բաքվի ներկայացուցիչների մեզ մոտ գալը բացառված է:

17.02.1989թ.: Ստեփանակերտի կուսքաղկոմի նիստերի դահլիճում տեղի ունեցավ ՍՍՀՄ ԳՍ Ժողպատգամավորների թեկնածուների թիվ 726 ընտրական օկրուգի նախընտրական կոնֆերանսը: Ռեպուտատության տասը թեկնածու՝ մեկ տեղի համար: Խորհրդային տարիներին դա առաջին դեպքն էր: Հենրիխ Պողոսյանի անունը ցուցակի վերջում էր: Նախընտրական թեժ պայքար էր: Ելույթ են ունենում ինձ ծանոթ և անծանոթ մարդիկ և պաշտպանում իրենց կոլեկտիվների կողմից առաջադրված դեպուտատության թեկնածուներին: Ելույթ եմ ունենում նաև ես: Բնութագրում եմ Հենրիխ Պողոսյանին այնպես, ինչպես նրա մասին լսել եմ ժողովրդից, ինչպես նրան տեսել եմ Շարժման սկզբից, ինչպես նրան պատկերացնում էի... Ելույթումս նշում եմ նաև, որ մեր Շարժման առաջին արդյունքներից է այսօրվա մեր նախընտրական ժողովը: Մեր գիտակցական կյանքում ձեզնից ո՞վ է տեսել, որ խորհրդային երկրում դեպուտատության թեկնածու ընտրելիս մի տեղի համար տասը թեկնածու պայքարի, ես չեմ հանդիպել մի տեղի համար նույնիսկ երկու թեկնածուի: Դահլիճում ներկաները բոլորն էլ լավ են ճանաչում դեպուտատության 10 թեկնածուներին, բայց դրանց մեջ ընկ.Պողոսյանը տարբերվում է շատ կողմերով: Ես խնդրում եմ դեպուտատության թեկնածու հարգարժան ընկերներին, որ եթե հասկանում են մեր Շարժման բուն իմաստը, իրենց թեկնածությունները թող ետ վերցնեն, ինքնաբացարկ տան՝ հօգուտ ընկ.Պողոսյանի... Հինգ հոգի իրենց թեկնածությունները ետ է վերցնում: Փակ գաղտնի քվեարկությանը մնում է 5 հոգի: 244 կողմ, 36 դեմ ձայնով ընտրվում է Հ.Պողոսյանը, որին պետք է գրանցեն 726 օկրուգում:

18-21.02.1989թ.: Քաղաքը հանգիստ է, հիմնական զրույցները Գերագույն Սովետի ընտրություններին մասնակցելու շուրջն են, որի հետ մեր հարցի լուծման հույսեր ենք կապում-նույնիսկ, փետրվարի 20-ին, երբ մարզխորհրդի պատմական որոշման տարեդարձն էր նշվում, դարձյալ ընտրություններից էինք խոսում...

22.02.1989թ.: Կրկին Ստեփանակերտի դահլիճում հավաքվել ենք 726 ընտրական օկրուգի նախընտրական ժողովի: Դահլիճ մտավ Արկ.Վոլսկին, քիչ հետո՝ ընկ.Պողոսյանը, որոնց դիմավորում ենք բուռն ծափահարություններով: Ամբիոնին է մոտենում ընտրական հանձնաժողովից մի երիտասարդ և հայտարարում, որ հանձնաժողովը նպատակահարմար չի գտնում կրկին ժողով հրավիրել, բոլորը ծափահարում և ուրախության ճիչեր են արտահայտում: Իսկ Հ.Պողոսյանը, դիմելով դահլիճին, ասում է. «Ընկերներ, մենք նոր ժողով չենք հրավիրում, այլ փետրվարի 17-ի ժողովի շարունակությունն է: Խնդրում եմ թույլ տաք ընտրական բյուլետենում ինձ հետ գրանցվեն նաև մյուս թեկնածուները, որպեսզի հանգիստ լինեմ, թե չէ կասեն. բոլոր կոլեկտիվների կամքը չի արտահայտվում, ես ընտրվեմ, թե չընտրվեմ, միևնույն է, պայքարս շարունակելու եմ մինչև վերջ՝ մեր հարցին դրական լուծում տալը»: Բոլորը միասին ոտքի են կանգնում և գոչում. «Չէ, բյուլետենում միայն Դուք պետք է լինեք, միայն Հենրիխ Պողոսյանը և՝ վերջ, ոչ մի ժողով»: Ես ելույթ եմ ունենում և պաշտպանում ընկ. Պողոսյանի թեկնածությունը: Միևնույն ժամանակ մեր շնորհակալության խոսքն ենք ասում ընկ. Վալերի Աթաջանյանին, որը արտահայտելով քաղաքի և մարզի կոմունիստների կամքը, փետրվարի 17-ի նախընտրական ժողովում, նույնիսկ մինչև այդ, ինքնաբացարկ է տվել, ընկ. Վարդան Հակոբյանին, որ բոլոր գրողների կամքն է արտահայտել, մենք ծափահարություններով ենք ընդունել ընկ.Վիգեն Հայրապետյանի, Մաքսիմ Միրզոյանի հայտարարությունները ինքնաբացարկման մասին: Ճիշտ է, մեզնից յուրաքանչյուրը կարող է քվեարկել Ռ.Քոչարյանի, բժիշկ էդ.Ղուկասյանի օգտին, եթե նրանք Հ.Պողոսյանի հետ մի բյուլետենում չլինեն, այն երկուսի անունները չեմ հիշում, կրկին կոչ եմ անում քվեարկել ընկ.Հ.Պողոսյանի օգտին, թե չէ մեր մեկ տարվա տարած մարտական պայքարը կհավասարվի 0-ի:

Ամբիոնին է մոտենում ընկ.Վոլսկին և հայտնում որ չնայած 17.02.89թ. նախընտրական ժողովն ամեն ինչով օրինական էր, բայց, ցավոք, հինգ թեկնածուները գրանցվեն բյուլետենում, այստեղից 13 հեռագիր է ուղարկվել Մոսկվա, որոնցով պահանջել են հինգ թեկնածուներն գրանցվեն բյուլետենում, դա հենց Հենրիխ Անդրևիչն էլ է Ձեզ խնդրում, որ նրանք գրանցվեն: Դահլիճը կրկին ոտքի է կանգնում և միաբերան պահանջում, որ միայն ընկ.Պողոսյանի անունը պետք է մնա բյուլետենում, համառորեն այդպես է պահանջում, չնայած ընկ.Պողոսյանը նորից է մոտենում ամբիոնին և խնդրում, որ իր հետ մյուս 4 թեկնածուներն էլ գրանցվեն: Հնչում է «ոչ»-ը :

25-26.02.1989թ.: Շաբաթ և կիրակի, քաղաքի բոլոր աշխատողները աշխատանքի վայրում էին: Բոլորն աշխատանքի են գնացել, որպեսզի փետրվարի 27-ին ու 28-ին Սումգայիթի զոհերի հիշատակը հարգեն: Նույնիսկ դպրոցները 26-ին՝ կիրակի օրը, պարապմունքները շարունակեցին:

27.02.1989թ.: Առավոտյան ժամը 9.00-ին բոլոր դպրոցների աշակերտները ծաղիկներով ու ծաղկեպսակներով, սումգայիթյան սպանդը դատապարտող ցուցապաստառներով գնացին Հայրենական պատերազմում զոհվածների հուշահամալիր, այնուհետև արտադրական ձեռնարկությունների աշխատողների շարասյուները մեկը մյուսի հետևից մտան համալիր և ծաղիկներ դրեցին սումգայիթյան զոհերի հիշատակին կառուցված հուշաքարին: Հատուկ կոմիտեի անդամները, ընկ.Վոլսկու գլխավորությամբ, և քաղկոմի աշխատողները նույնպես ծաղկեպսակ ու ծաղիկներ խոնարհեցին, երեկոյան հեռուստացույցով ցուցադրվեց այդ արարողությունը....

28.02.1989թ.: Ուշ երեկոյան Կրկժանի թուրքական թաղամասում խարույկներ վառեցին, որով տոնեցին սումգայիթյան կոտորածների տարելիցը, որը խիստ վրդովմունք և բողոք առաջացրեց հայերի մոտ և գիշերը՝ ժամը 2-ին, մի քանի տանկերով Արկ.Վոլսկին գեներալի հետ գնաց այնտեղ: Թուրքերը ամեն ինչ թաքցրին:

2.03.1989թ.: Կրկժանի հայերն ու թուրքերը ընդհարվեցին վեճով, և այնտեղ դարձյալ գնացին Հատուկ կոմիտեի անդամները միլիցիայի ներկայացուցիչների հետ միասին: Ադրբեջանցիներից 4մարտական հրացաններ փամփուշտներով առգրավվեց միլիցիայի կողմից:

Ահա այսպիսինն էր 1989թ. փետրվարը:

Մաղլեն ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ
Մշակույթի վաստակավոր աշխատող,
20-րդ դարի(Սպեփ.) լավագույն մանկավարժ,
անհատական թոշակառու

ՆԱԽԱՐԱՐՆ ԱՄՓՈՓԵՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

1 ☞ տեսչությունների հետ, այսինքն՝ համաքայլ պետք է արվեն ոչ միայն կրթության համակարգում ներդրումները, այլև քաղաքաշինության, սոցիալական և մյուս ոլորտներում: Եթե ուզում ենք դպրոցը տվյալ համայնքում ուժեղացնել, մասնագետների ներդրմանը զուգահեռ պետք է բնակելի տներն ավելանան, աշխատատեղեր ստեղծվեն, համայնքի զարգացման ծրագրեր իրականացվեն»:

Ն. Աղաբալյանն ասաց, որ առայժմ փորձում են ակտիվացնել աշխատանքները **«Դասավանդիր, Հայաստան»** հիմնադրամի հետ, քանի որ շատ արդյունավետ է, և հիմնականում հենց այդ խոցելի դպրոցներում են նրա նրա գործուղած ուսուցիչները դասավանդում, մյուս կողմից կվերանայվի հեռավոր գյուղեր ուղեգրման կարգը, որը թերևս հնարավորություն կտա հենց հարակից դպրոցների ուսուցիչներին ներգրավել: Այսօր պետությունը խրախուսելու համար հավելյալ վճարում է 30 և ավելի կմ հեռավորության վրա գործուղվող ուսուցչին, իսկ դրանից ավելի մոտ հեռավորության դեպքում հավելավճար չի տալիս, ինչը, նախարարի կարծիքով, ճիշտ չէ. «Այս կտրվածքով պետք է վերանայենք գործող կարգը և հնարավորություններ ստեղծենք այն ուսուցիչների համար, ովքեր ցանկություն կունենան հարևան գյուղում դասավանդել: Կարծում եմ՝ այս կերպ ավելի հեշտ կլինի համալրել թափուր տեղերը»:

Նա միևնույն ժամանակ նշեց, որ հիմնական աշխատանքները պետք է ուղղված լինեն տեղերում ուսուցիչներ պատրաստելուն: Խնդիրը հիմնականում բնագիտական առարկաներից է և տեղեկացրեց, որ առաջիկա օրերին նախատեսում է նպատակային հանդիպում այդ համայնքների 12-րդցիների հետ՝ նրանց ուղղորդելու դեպի այդ մասնագիտությունները:

Մրցութային կարգով դպրոցներում մասնագետների համալրումից բացի կրթության համակարգում նոր սերնդի ուսուցիչների ներգրավման և որակի ապահովման նպատակով հուշագիր է ստորագրվել «Դասավանդիր, Հայաստան» հիմնադրամի հետ, ինչի արդունքում Քաշաթաղի և Մարտակերտի շրջանների և Ստեփանակերտի ֆիզմաթ դպրոցներում աշխատանքի է ընդունվել 13 ուսուցիչ: Նախարարությունը շահագրգռված է այդ հիմնադրամի հետ աշխատանքներն ընդլայնելու, և նախատեսել են գարնանը կազմակերպել կրթական մեծ աշխատաժողով, որը հնարավորություն կտա նոր ռազմավարության մշակման համար ունենալ հստակ ուղղություններ: Կներգրավվեն կրթության ոլորտի ճանաչված փորձագետներ: Առաջիկայում կլինի նախարարության հայտարարությունն այդ մասին. այն ուսուցիչները, ովքեր ունեն նորարարական գաղափարներ և առաջարկություններ, կարող են հայտ ներկայացնել:

2019-ին նախարարությունը մեկնարկել է **ոչ ֆորմալ կրթության ծրագիր՝** դասարշավներ: Դրանք թեմատիկ արշավներ են պատմություն առարկայից. այն թեմաները, որոնք վերաբերում են Արցախի պատմությանը, կազմակերպվում են պատմական վայրերում: Սա երկու խնդիր կլուծի՝ ավելի տեսանելի և շոշափելի կդարձնի պատմությունից հաղորդվող գիտելիքները, հայրենաճանաչողության առումով, մեծապես կխթանի ու նաև կօգնի համագործակցության զարգացման առումով:

Ամառային հանգստի կազմակերպման ծրագրում նորություն էր ՀՀ ԿԳՆ-ի հետ ԱՀ ԿԳՄՆ համատեղ կազմակերպված Պատարայի ամառային ճամբարը ՀՀ և Արցախի դպրոցականների մասնակցությամբ: Նախարարությունը կարևորում է ինտեգրումը, աշակերտների և ուսուցիչների համագործակցությունը ՀՀ և Սփյուռքի կրթօջախների հետ: Դպրոցների գործունեության գնահատման համար անպայման հաշվի է առնվելու նաև այս կետը, տեղեկացրեց նախարարը:

Նախարարությունը փորձում է կրթությունը համապատասխանեցնել աշխատաշուկայի պահանջարկին և այդ նպատակով մասնագիտական ոլորտում նպատակ ունի ստեղծել նոր հաստատություններ: Այս ուղղությամբ աշխատանքներ են իրականացվում ԱՄՆ-ում գործող «Աբրահամյան» կրթական հիմնադրամի հետ, և պայմանավորվածություն կա Բերձոր քաղաքում ստեղծել ժամանակակից չափանիշներով գյուղատնտեսական քոլեջ, որը կպատրաստի այնպիսի մասնագետներ, որոնք անհրաժեշտ են կոնկրետ տարածաշրջանային ծրագրերի իրականացման համար՝ հաշվի առնելով ռեսուրսները և Քաշաթաղի շրջանի գյուղատնտեսական նշանակությունը:

Անդրադառնալով **բարձրագույն կրթության** ոլորտին՝ Ն. Աղաբալյանն ասաց, որ սկսվել է բուհերի հավատարմագրման գործընթացը, որը պետք է ավարտին հասցվի մինչև ընթացիկ տարվա վերջը: Սա շատ կարևոր է բուհական կրթության բարեփոխումների իրականացման առումով և մեծապես կնպաստի կրթության որակի բարելավմանը:

Գիտության ոլորտում կվերանայվի գիտական թեմաների մրցույթի, ինչպես նաև հաշվետվությունների ներկայացման կարգը, ինչը հնարավորություն կտա նաև բացահայտել գիտական ներուժը և ներգրավել արտերկրում առկա մեր գիտնականներին, ապահովել կիրառական արդյունք:

Սպորտին անդրադառնալով՝ նախարարը խոսել է ունեցած մեծ ձեռքբերումների, ոլորտի զարգացման ու առողջ ապրելակերպին ուղղված նախաձեռնությունների մասին: Այն աշխատանքները, որ իրականացվում են պետության և մասնավորապես նախարարության կողմից սպորտի ոլորտում զարգացումը խթանելու ուղղությամբ, շոշափելի արդյունք են արձանագրել: Վերջին երկու տարում շուրջ 60 տոկոսով ավելացել են սպորտի ոլորտին հատկացումները: Եվ մեր բոլոր մարզիկներին հնարավորություն է ընձեռվում մասնակցել ինչպես ՀՀ, այնպես էլ Եվրոպայի և աշխարհի առաջնություններին, արժանանալ մեծ պարգևների պետության կողմից: Բայց այդ ոլորտում կանոնակարգման խնդիր կա. իրականացվող քաղաքականությունը, խթանելով սպորտի զարգացումը, մյուս կողմից չպետք է խոչընդոտի օլիմպիական մարզաձևի զարգացմանը: Ու նաև՝ որպեսզի ոչ օլիմպիական մարզաձևերով զբաղվողներին ապահովել մասնակցությունը այն մրցումներին ու առաջնություններին, որոնք իրականացվում են միջազգային ճանաչում ունեցող կազմակեպությունների կողմից:

Ամռանը սպասվում է մեծ միջոցառում՝ Անկախ ֆուտբոլային ասոցիացիայի կոնֆեդերացիայի (ConIFA) հովանու ներքո Արցախում կանցկացվի Ֆուտբոլի Եվրոպայի առաջնություն, որին մասնակցության հայտ է ներկայացրել 12 թիմ: Նախատեսվում է խաղերը կազմակերպել Ասկերանի, Մարտակերտի, Մարտունու և Ստեփանակերտի մարզադաշտերում: Սա ծախսատար է, բայց մյուս կողմից հնարավորություն կտա աշխուժացնել նաև շրջանները: Եվ արդեն բոլոր մարզադաշտերում սկսված են ConIFA-ի պահանջներին համապատասխանեցման աշխատանքները: Արդյունքում կունենանք պատրաստի ենթակառուցվածքներ այսօրվա միջազգային չափանիշներին համապատասխան, որը կօգտագործվի Արցախում ֆուտբոլի և ընդհանրապես սպորտի զարգացմանը, առողջ ապրելակերպի խթանմանը: Մեզ համար ամենակարևոր նպատակներից մեկը հենց սա է:

Նախարարը տեղեկացրեց, որ բացի դրանից, նախատեսվում է ստեղծել բաց մարզահրապարակներ տարբեր բնակավայրերում. Ստեփանակերտում և Շուշիում գործընթացն արդեն սկսված է, ինչը հնարավորություն կտա ցանկացողներին զբաղվել սպորտով, առողջ ապրելակերպ վարել: Առաջիկա օրերին սպասվում է ևս մեկ մարզական ֆեդերացիայի՝ սպորտային մարմնամարզության մուտքն Արցախ:

Անելիքների շարքում Ն. Աղաբալյանը նշեց **նոր մտածելակերպի,** կրթական նոր միջավայրի ձևավորման անհրաժեշտությունը: «Պետք է վերանայվեն կրթության նպատակները, կարողանալ դուրս գալ նեղ կենցաղային սահմաններից և աշակերտներին սովորեցնել դնել ու ձգտել մեծ նպատակների: Իսկ դրա համար պետք է գլոբալ մտածողություն, այսինքն՝ ոչ թե հարմարվել իրավիճակին, այլ սովորեցնել ինչպես փոխել կյանքը: Եթե մենք կարողացանք սա իրականացնել, կհասկանանք, որ մեր կրթությունը ծառայում է իր նպատակին»,- ամփոփեց նախարարը:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՄԵԾ ՈՒ ԱՆՀԱՍ

ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍՏԵՂԾԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՐԾՉԻ ԿԵՆՍԱՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ



Գրականությունը խոսուն արվեստ է և ստեղծվել է մարդկությանը սնուցելու, կրթելու, հարստացնելու: Նրա չափանիշը ճշմարտության արարումն է և հոգիներ զինավառելը: Գրականությունը սնվում է Հանճարի ոգուց: Հանճարները ստեղծում են երկեր, որոնք մարդկությանը ոգեկոչելու արժեք ունեն: Նրանք խմում են երկնային պռնկից՝ դառնալով ոգու և մտքի թարգման:

Հանճարների ժառանգությունը մարդկության ավանդն է: Նրանց երկերը ծնվում են անհրաժեշտությունից և դառնում պահանջ:

Այդպիսի հանճար էր մեծն Թումանյանը:

Անգնահատելի է Հովհաննես Թումանյանի վաստակը հայ գրականության զարգացման գործում: Նա երևան հանեց հայ ժողովրդի անհատնելի գանձերը, մարդկային վսեմությունը և հոգևոր գեղեցկությունները՝ մատուցելով պարզ ու հասկանալի:

Թումանյանն այն հանճարների թվին է պատկանում, որով հպարտանալու իրավունք ունի ոչ միայն աշխարհի հնագույն ազգերից մեկը՝ հայությունը, այլև ողջ մարդկությունը: Նա խոսեց ու գրեց կյանքի ու գործի,անցողիկի ու անանցի մասին՝ հատկանշելով, որ չկա մի պաշտոն ու կոչում, որ հավասար լինի կամ կարելի լինի համեմատել մարդ կոչումի հետ:

Թումանյանը գրում էր հստակ, բայց խորունկ, արմատները խրում էր հողի մեջ,հանում մինչ այդ չպեղված գանձերը, դառնում ազգի վիթխարի հովանին՝ պաշտպանելով ժողովրդին մահաբեր խորշակներից: Ճիշտ է նկատել Վարպետը, որ մեր թռիչքը Թումանյանի արվեստի գոհարակերտ բարձունքից այն կողմ չի անցել:

Թումանյանը մեծ էր մեծերից իր հանճարով, լեզվամտածողությամբ ու ճկունությամբ, մարդամոտությամբ, սրտացավությամբ, բարյացակամությամբ, ժողովրդականությամբ, ընտանիքով: Նրա խնամատարությամբ իր ընտանիքում 10 զավակ էր մեծանում ու սնուցվում մեծ սիրով: Երբ տնից հեռու էր լինում, իր զավակներին նամակ գրելիս սկսում էր. «Իմ ջանիկ-մանիկներս…»: Ու շարունակվում է կարոտակեզ հոր գորովալից շարադրանքը. «Իրիկունները պառկում եմ, թե չէ, սկսում եմ ձեր մասին մտածել…»:

Մերթ Պոլսում էր, մերթ Թիֆլիսում, մերթ իր ծննդավայր Լոռու հեռավոր գյուղերում, մերթ էջմիածնի պատերի տակ պատսպարված գաղթականների հետ, մերթ հայադրբեջանական ընդհարումների շիկացած վայրերում սպիտակ դրոշ էր պարզում՝ նոր արյունահեղությունները կանխելով: Առանց այն էլ Եղեռնի տարտարոսում հայոց երկիրը շատ էր ավերվել: Եղեռնյան դժնդակ տարիներին նա նեցուկն էր իր ազգի: Վահան Թոթովենցը Թումանյանին մեկ անգամ տեսել է էջմիածնի վանքի բակում և գրել. «Երկարահասակ էր, նիհար, սպիտակ մորթով և մազերով. ուներ լայն ճակատ, ժպտուն, ոչ խորը, բայց իմաստուն աչքեր…

Վանքի բակում հավաքվել էր տասնյակ հազարավոր գաղթականություն: Ամեն կետում մարդ էր մեռնում: Քաղցը, Արարատյան տապը, ճանապարհի սարսափը և անկարեկիր հոգնածությունը կծկել էին այդ ժողովուրդը:

Թումանյանը վազում էր կետից կետ, վրանից վրան, խմբից խումբ, մի մեռնողից դեպի մյուս մեռնողը: Կարգադրում էր, հրամայում, կշտամբում, ժպտում, շոյում, զայրանում:

Մեռնում էր մի ամբողջ ժողովուրդ….

Մահվան սև քամին անցնում էր ահավո՛ր թևերով:

Պայծառորեն հիշում եմ, որ այդ օրն անձրև եկավ: Արարատյան երկնքի վրա հանկարծ թուխ ամպեր լողացին, խտացան, սևացան, ծածկեցին կապույտը: Որոտ: Սկսվեց տեղատարափ: Երբ անձրևն սկսեց հեղեղել գետինը, և տասնյակ հազարներ մնացին կավային ցեխի մեջ, թշվառությունը աճեց: Ամեն տեղ լցվեց գաղթականներով, բայց հազարներ դեռևս դուրս մնացին, տեղատարափի և ոռնացող կայծակի ահեղ սպառնալիքի առաջ:

Թումանյանը վազեց, բռնի բաց արավ նոր կառուցվող հայրապետական Վեհարանը, որ մինչև այդ անձեռնմխելի էր:

Գաղթականները լցվեցին ներս:

Դա զայրացրել էր Վեհափառին (Գևորգ Ե):

Ասում էին, որ երեկոյան Վեհափառը կանչել էր Թումանյանին,հանդիմանել նրան այդ «բռնի»գործողության համար:

Թումանյանը սկզբում ժպիտով էր պատասխանել, բացատրել էր հայոց հայրապետին, որ հազարներ անձրևի տակ, ցեխի մեջ են մնացել: Վեհափառը չէր կակղել: Թումանյանը պնդել էր, որ ինքը ճիշտ է վարվել: Վեհափառը նրան պատվիրել էր ուրիշ անգամ այդպիսի փորձ չանել: Թումանյանը պատասխանել էր, որ պիտի անի, եթե անհրաժեշտություն լինի: Հայոց հայրապետը կանգնել էր ոտի և գոռոզությամբ հայտարարել.

- Դուք խոսում եք Ամենայն հայոց հայրապետի հետ:

Թումանյանը նրան պատասխանել էր.

- Իսկ դուք խոսում եք ամենայն հայոց բանաստեղծի հետ»:

Թումանյանը հայ մարդու կենսագիրն էր իր բազմաժանր ստեղծագործությամբ՝ լինի չափածո թե արձակ բանաստեղծություն, լեգենդ, զրույց, բալլադ, պոեմ, քառյակ, պատմվածք, հեքիաթ, հրապարակախոսություն, նամակ, փոխադրություն, թարգմանություն… Նա արծարծեց մարդկությանը հուզող բոլոր թեմաները՝ հայրենապաշտություն ու լավատեսություն, փիլիսոփայական մտորումներ ու հազարամյա ավանդույթներ, սեր և նվիրում, հերոսություն, կյանքի գնահատում և հաղթանակ:

Թումանյանն աշխարհ եկավ մարդկանց նվիրվելու առաքելությամբ և արժանի գտնվեց այդ կոչմանը. «Եթե անհատը կամ ժողովուրդը ունի բարոյական մի կոչում, կյանքի վսեմ մի խորհուրդ, յուր մեջ կրում է աստվածային մի տարր…»: Իսկ եթե ոչ, մարդը խճճվում է հոգսերի սարդոստայնում: Հասուն կենսափիլիսոփայությամբ Մեծ մտածողը իր գոհարազարդ քառյակներում գրում էր կենսափորձով հարստացած իմաստուն ու հղկված տողեր, որոնք մարդու ճանաչողությունն ընդլայնելու ամենավառ օրինակներն են: Եթե մարդը ճանաչում է աստվածայինը, կճանաչի նաև իրեն: Իսկ դա հեշտ չէ: Բանաստեղծի վկայությամբ՝ մարդու՝ իրեն ճանաչելը ամենամեծ հաղթանակն է.

Տիեզերքում աստվածային մի ճամփորդ է իմ հոգին…

Երկրից անցվոր, երկրի փառքին անհաղորդ Բանաստեղծի խորհուրդը կյանքը ճիշտ ապրելու մեջ է: Եվ մինչ կյանքը հոսում է «տիեզերքում զնգալեն», չպիտի սպասել արտառոց որևէ բանի, պիտի ապրել պահը, թասն էլ՝ լիքը պահել…

Ցավոք, Թումանյանն ապրել է մի ժամանակաշրջանում, երբ աղետված էր հայրենիքի ճակատագիրը: Արևմուտքի ստրուկները՝ մեքենայի և ոսկու, արյունալի աղետներով ներխուժեցին մեր երկիրը: Ու վտանգվեց հայոց աշխարհը: Այդ վտանգը դարձավ սպառնալիք և խլեց մեր բուն հայրենիքը՝ մեր բյուր գանձերով: Ավարներով, ավերներով խուժած թուրք գազանը խլեց մեր հողը, տունը, երկիրը, ու հոշոտվեցին մեր մարմինն ու հոգին…

Զարկվածի ու զրկվածի ողջ դառնությամբ մղկտում է մեր հոգին ցայսօր: Էրգիրը դարձել էր սև ու սուգի մի հովիտ, անժպիտ հայացքների, ողբի, որբի հայրենիք: Բայց ապրելու ուժով, հին ու նոր վերքերը խեղդելու տոկունությամբ ելավ խոհուն ժողովուրդը, հառաչանքով խորհեց չարաղետ տանջանքների մասին, կանգնեց հնի և նորի սահմանին և ձգտեց դեպի լույսի ու հույսի հայրենիքը:

Եկավ հանուր կյանքի արշալույսը: Երկնահաս Արարատի բարձունքից ճառագած կենսաժպիտ շողերով գովերգեց հայը նոր կյանքը, հզոր հայրենիքը:

Մարգարեական լավատեսությամբ 1915 թ. գրված այս՝ «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը եղեռնազարկ հայ ժողովրդի տառապանքների ու նեղությունների, մեր ուժի, կորովի, լուսավոր ապագայի լավագույն արտահայտությունն է.

Ու պոետներ, որ չեն պղծել իրենց շուրթերն անեծքով,

Պիտի գովեն քո նոր կյանքը նոր երգերով, նոր խոսքով

Իմ նոր հայրենիք,

Հզո՛ր հայրենիք:

Դեռ ժողովրդի հոգեհանգիստը չավարտված՝ այսպիսի տողեր գրելը մարգարեական պատգամ էր՝ ուժեր հավաքելու և նոր կյանքի հիմքերը դնելու: Իսկ հոգեհանգիստը մեր ազգի անբախտ զոհերի խնկարկումն էր՝ անմեղ ու մարած: Փռված ու ցրված էին նրանք հազարհազարով շեն ու քաղաքում, սար ու հովիտում, ծովից մինչև ծով: Հայոց հրդեհի կարմիր բոցերից կրակ առած հայոց աշխարհի մեծ կերոնները՝ Մասիսն ու Արան, Սիփան, Նեմրութ, Սրմանց, Թանդուրեք լեռները, մեկ-մեկ վառվելով, Սուրբ Արագածի կանթեղն էլ միշտ վառ, կանչեցին թշվառ հոգիներին, որ հավիտյան ցրված, լուռ ունկնդիր են ազգի պոետի մեծ հեծեծանքին.

- Հանգե՛ք, իմ որբե՛ր… իզո՛ւր են հուզմունք, իզո՛ւր և անշահ…

Մարդակեր գազան մարդը դեռ երկար էսպես կմնա…

Գալարուն ցավն էր տարածվում, իսկ ոճրագործի արյունոտ ձեռքերին թաթախված արյունը դառնում էր խարան ու դատակնիք իր անվանն ու ճակատին.

Բերանն արնոտ Մարդակերը էն անբան

Հազար դարում հազիվ դառավ Մարդասպան.

Ձեռքերն արնոտ գնում է նա դեռ կամկար,

Ու հեռու է մինչև Մարդը իր ճամփան:

Իզուր չէ Վիկտոր Հյուգոն թուրքական ոճիր տեսնելիս գրել. «Այստեղով թուրքն է անցել…»:

Ազգի ճակատագրի անամոք ցավով լցված Թումանյանը գրել է իրական հիմք ունեցող հուզիչ մի պատմություն՝ «Երկու հայր». 1896թ. կոտորածի ձմեռն էր: Մի խումբ փախստականներ Սասունից հասել են էջմիածին: Նրանց մեջ էր Սասնա գյուղերից մեկի քահանա տեր Սարգիսը, որի ամբողջ գերդաստանը սրի էր քաշվել: Եկել էր մխիթարանք գտնելու Խրիմյան Հայրիկի կողմից: 20 հոգուց կազմված նրա գերդաստանը ոչնչացվել էր: Հայրիկի առջև կանգնած էր հայ մարդը, որն այլևս ոչ մեկին չուներ: Իմանալով քստմնելի եղելությունը՝ հայոց Հայրիկը վերապրում է նրա ցավը, բայց իր ցավն ավելի ծանր էր: Իմանալով կորստի չափը և սրտով մղկտալով՝ Վեհափառն ասում է, որ նա կորցրել է 20 որդի, իսկ ինքը՝ 20000 ու 20, ուստի ո՞ւմ վիշտն է մեծ: Քահանան ցնցվում է ու լուռ կանգնում: Հայրիկն ասում է, որ գա, աչը դնի իր գլխին, աղոթի ու օրհնի, որ այդ վշտին կարողանա դիմանալ: Քահանան սկսում է աղոթք մրմնջալ, ու աչքերը լցվում են արտասուքով… Նա օրհնում էր հայոց կաթողիկոսին… Նրա առջև խոնարհած էր Հայոց Հայրիկը… Ահա այսպիսին էր հայոց ողբերգությունը:

Հայոց վշտից տառապած՝ ծառս էր լինում բանաստեղծի հոգին: Ծովացել էր հայոց վիշտը, որ խավար ծովի պես լափել էր ուզում մեր ժողովրդի հոգին, որ ո՛չ հատակն էր գտնում, ո՛չ հասնում երկինք… Հայոց վշտի մեծ ծովի մեջ լող էր տալիս իր և իր ժողովրդի հոգին:

…Մեր ճամփեն խավար էր, գիշեր: Երկար դարերով էինք գնում էինք հայոց «դժար» լեռներով: Սակայն մեծ տառապանքներ կրելով՝ տանում էինք նաև հնուց երկնած մեր ծով գանձերը դեպի «բարձր» լեռները: Բայց «օրդուները սև» քանի՜-քանի անգամ զարկեցին «մեր քարվանն ազնիվ» «հայոց լեռներում, արնոտ լեռներում»: Այնուհանդերձ, հայոց քարավանը կանգ չառավ երբեք. թեկուզ ջարդված, սոսկահար ու հատված-հատված՝ տանում էր իր վերքերն անհամար «հայոց լեռներում, սուգի լեռներում»՝ չկորցնելով, սակայն գալիք պայծառ օրվա հույսը ա յն լավատեսության երաշխիքն է, որով լցված՝ հայ ժողովուրդը կերտեց իր պայծառ առավոտը «հայոց լեռներում, կանաչ լեռներում»:

Հույսը դարձավ հավատ, ինքնավստահություն ու պայքար, որ զինեց մեր ժողովրդին, տարավ մարտադաշտ, կռեց Սարդարապատ, պահեց ազգ ու պետություն՝ անկախ Հայաստան: Հայաստանի Հանրապետությունը իր մաքրագրված էջերում դնում է այսօրվա ու ապագայի հիմքերը, որպեսզի ոչ մի ավագ սերունդ նորին չասի. «Ապրե՛ք, երեխե՛ք, բայց մեզ պես չապրեք»:

Կյանքի անարդարություններն ու սոցիալական անհամաչափությունները գեղեցիկ աշխարհի մեջ հայրենիքները դարձնում են անձուկ: Բանաստեղծի հզոր հոգին բարձրից անչար, անաչառ, ամենատես հայացքով տեսնում էր ժողովուրդների կեղեքվելն ու անպատում վշտով նայում աշխարհին. «Տեսավ ուտում են ամենքն ամենքին.// Ամեն հայրենիք՝ իրեն զավակին…»:

Իր մեծ խոհերում նա կրում էր ցավը աշխարհի, որին հաղթում է բարի կամքով, մեծ սրտով.

Ամեն մի սիրտ ցավով լցվեց մեր դարում,

Ցաված սրտով աշխարհ լցվեց մեղր դարում.

Ցավոտ աշխարհն եկավ լցվեց բովանդակ,

Իմ սիրտը բաց, իմ սիրտը մեծ մեր դարում:

Հանճարներն ապրում են հավետ: Անցողիկ կյանքին լույս տալով, հուր դառնալով են սպառվում:

Արագածի բարձունքին վառվում է Լուսավորչի կանթեղը: Այդ կանթեղը վառ են պահում հայոց մեծերը: Մեծերից ամենամեծը Թումանյանն է՝ մեր ամենաժողովրդական բանաստեղծը, պետական գործիչն ու ժողովրդի հույզերի արտահայտիչը:

Թումանյանի հանճարով սնված ժողովուրդը կապրի հար ու հավիտյան: Նա պատգամաբերն էր լավի ու բարու. «Աշխատեցեք ձեր սիրտը պահել մաքուր ու լիքը ամենալավ ու բարի զգացմունքներով և աշխարհին ու մարդուն նայեցեք բարի սրտով ու պայծառ հայացքով»:

Ինչպես բարձր է պահել մեծ փիլիսոփան գրականության դերը, այնքան կարևորել է դպրոցի և ուսուցիչների դերը. «Դպրոցը գրականության հիմքն է, գրականությունը՝ դպրոցի բովանդակությունը»:

- Թանկագին ուսուցիչներ և սիրելի աշակերտներ, դուք էլ կռվում եք այն լուսավոր գաղափարների համար, որոնք պիտի բերեն եղբայրություն և ազգերի համերաշխություն, հավասարություն, լույս, արդարություն:

Թումանյանը հայ հանճարի խտացումն է, պոետ, որ «Արարատն է մեր նոր քերթության» (Ե.Չ), մեր հավիտենական ամենամարդամոտ բանաստեղծը; Նա քննեց աշխարհն ու մարդուն՝ կառչելով մարդկային վեհ հոգուց:

Թումանյանի մեծության հանճարը դրսևորվեց շատ ոլորտներում՝ Ամենայն հայոց բանաստեղծն է՝ ցավով ու լավով գրված տողերով, պետական գործիչն էր անպետական ժողովրդի իր ջանք ու գործով, Մարդ էր՝ մտահոգ հայոց աշխարհի բոլոր հոգսերով: Ահա թե ինչու պիտի շեշտել. «Նա մեծ էր ավելի, քան եղավ,//Արմատներ ուներ նա հողում» (Ե.Չ.):Նա այն վիթխարի ընկուզենին է, որի տակ հովացել է հայի դաղված սիրտը, որի տակ հայոց պապերն են օրհնանք տվել:

Ապրու՞մ ենք, ինչպես Մարգարեն է ասել, թե՞ դեռ փոխելու շատ բան ունենք, կիմանան ժամանակը և մարդը:

Իսկ ժամանակը շատ բան է փոխում՝ սրբագրելով ամե՜ն-ամեն ինչ: Մնում է բանաստեղծի հանճարեղ կերպարը, որ մեզ հետ է՝ փիլիսոփայի բարի աչքերով ու խորհուրդներով: Մնում է մինչև վերջ հասցնել «մեր ներսի» փոփոխությունը, զի ներսից պիտի փոխվենք ու մեր ճակատագիրը ամուր կռենք:

Հովհ. Թումանյանի ծննդից՝ 1869թ. փետրվարի 7 (19)-ից, անցել է 150 տարի, բայց միշտ ապրում է նա իր անանց երկերով, բարի հայացքով, իր պոեզիայի գաղտնիքը հանդիսացող պարզ, ընկալելի և սիրված ստեղծագործություններով:

Հովհ. Թումանյանն ազգընտիր բանաստեղծ է: Նրա մեծ անունը շուք է տալիս հայոց գրական անդաստանին, որի քերթության «էս»-ն ու «էն»-ը Խայամի գինուց ավելի անուշ են:

Իսկ որտե՞ղ է Մեծ Լոռեցին. նա աշխարհի մեծերի՝ Հոմերի, Գյոթեի հետ քեֆի է նստել՝ միտք ու խոսք փոխանակելով, մեծարանք տալով ու առնելով: Իսկ մենք ինչի՞ ենք սպասում, պիտի թասը բերենք ու զնգացնենք՝ հայ ժողովրդի անմահության կենացը խմելով…

Վարդիթեր ՀԱԿՈԲՅԱՆ

ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

ՕՐԸ ՍԿՍՎԵՑ ՈՒ ԱՎԱՐՏՎԵՑ ԹՈՒՄԱՆՅԱՆՈՎ

Գիտելիքն ու մասնագիտական կարողությունները միշտ զարգանում ու հարստանում են շփումների և քննարկումների, օժանդակ նյութերի, փորձի փոխանակման շնորհիվ: Եղած մեթոդական ձեռնարկներն ու ուղեցույցները թերևս այն ազդեցությունը, ներգործությունը չեն ունենում, ինչքան մասնագետների կենդանի շփումների ընթացքում ծնված արդյունքը: Իսկ երբ այդ շփումները տեղի են ունենում երիտասարդ ու փորձառու մասնագետների միջև, դրանից շահում է միայն ուսումնական գործընթացը, շահում է երեխան, որին այսօր դժվար է կտրել ինֆորմացիայի այն հեղեղից, որ հոսում է բազմաթիվ տեղեկատվական աղբյուրներով, և անհրաժեշտ է հետաքրքրություն առաջացնել ուսման նկատմամբ:

Ուրեմն՝ այսօր ավելի է դժվարացել մատաղ սերնդի կրթության ու դաստիարակության ծանր բեռն իրենց ուսերին առած և ավելի մեծ պատասխանատվություն ունեցող մասնագետների ուսումնական գործունեությունը:

Հենց այս հանգամանքով էլ պայմանավորված են Ասկերանի շրջանի Խնապատի, Խրամորթի, Նախիջևանիկի, Ուղտասարի և շրջկենտրոնի ուսուցիչների՝ ավանդական դարձած հանդիպումները և այդ հանդիպումների շրջանակում կազմակերպվող ընդօրինակման դասերն ու մշակութային միջոցառումները, դրանց քննարկումները: Դասեր, որ կազմակերպվում են ոչ միայն ուսուցչի մասնագիտական ու մեթոդական կարողությունները ցուցադրելու, այլև երեխաների ձեռք բերած գիտելիքների ու դրանք գործնականում կիրառելու մասին գաղափար կազմելու նպատակով: Միայն այն փաստը, որ ընդօրինակման դասին հետևողականորեն նախապատրաստվում են և՛ երեխաները՝ անցած նյութերը կրկնելով ու նորովի յուրացնելով դրանք, և՛ ուսուցիչները՝ նորանոր մեթոդների, աղբյուրների փնտրտուքով, ուրիշի աչքերով ինքն իրեն մի նոր կողմից բացահայտելու և ստուգելու ձգտումով, արդեն դրվատանքի է արժանի: Ամեն ուսուցիչ փորձում է պատշաճ կերպով ներկայանալ գործընկերներին, ինչն էլ պահանջում է տքնաջան աշխատանք: Այդ հանդիպումների ընթացքում նրանք հաճախ փորձում են գտնել իրենց հուզող հարցերի պատասխանները, առաջարկություն անել որոշ թեմաների ու ձևակերպումների վերաբերյալ, խոսել դասագրքերի կառուցվածքի ու բովանդակության մասին:

Մի խոսքով, դրանք շատ օգտակար են ու պահանջված:

Հերթական հանդիպումը Խրամորթի միջնակարգ դպրոցում էր, որտեղ ուսուցիչները, արհամարհելով ցանկացած դժվարություն ու խոչընդոտ, զբաղված են մի կարևոր առաքելությամբ՝ ըստ ամենայնի կրթել մատաղ սերնդին, որի մոտ դեռևս պահպանվում է ուսման ծարավը, և որի համար առաջնային է ռազմահայրենասիրական դաստիարակությունը: Դպրոցի հմուտ տնօրեն Անուշ Գաբրիելյանի ջանքերով այստեղ ձևավորված է համախոհների ու նվիրյալների մի հանրույթ, որ լավ է հասկանում իր գործունեության բուն իմաստը ու պատվով է կատարում իր պարտականությունները:

Առաջին ընդօրինակման դասը կազմակերպվեց հայոց լեզվի և գրականության փորձառու ուսուցչուհի Հասմիկ Անդրյանի մոտ՝ 8-րդ դասարանում, գրականությունից: Տեղեկությունների առատությունից ու բազմազանությունից շահեց դասի սկիզբը: Աշակերտները հանդես բերեցին իրենց հարուստ գիտելիքները գրողի կենսագրության, բազմաժանր ժառանգության, նրան վերագրվող շրջասույթների վերաբերյալ: Նրանք գիտեն «Հովհաննես» անվան հունարեն նշանակությունը՝ հնազանդություն, որն այնքան ներդաշնակ է մեծ գրողի բնույթին, այն շռայլ բնութագրիչները՝ «Հանճարեղ Լոռեցի», «Ամենայն հայոց բանաստեղծ», «Ամենայն հայոց որբերի հայրիկ», «Պետական գործիչ պետություն չունեցող ժողովրդի», «Նահիրյան խոսքի ավագ նահապետ», «Հայ գրականության անմահ փառքը», «Հայ ժողովրդի ազնիվ կենսագիրը», «Բանաստեղծության մեծ ճարտարապետ», «Հայ Պուշկին» և այլն, որ տրվել են Հովհաննես Թումանյանին: Արտասանեցին Պ.Սևակի «Անլռելի զանգակատուն» պոեմի սկզբնամասը՝ «Հազար ինը հարյուր վաթսունինը թվին հայոց այգիներն ի՞նչ պտուղ տվին…», մեջբերեցին Թումանյանի մասին մեծերի խոսքերից, ներկայացրին հանճարեղ գրողի ընտանիքի կազմը, տեղեկություններ նրա հասարակական գործունեությունից: Հետաքրքիր տպավորություն թողեց «Դսեղ» անվան ստուգաբանության երկու տարբերակը, որ նշեցին երեխաները.

ա) Դսեղ՝ նշանակում է դուրս տեղ, այսինքն՝ բնակավայրից առանձնացված տեղ (գեղ):

բ) Ըստ ավանդազրույցի՝ ձորի գյուղերից տարբերելու համար բարձրադիր գյուղը կոչել են Դրսի գեղ կամ Դզզի գեղ, որը հետագայում հնչյունափոխվել է ու դարձել Դսեղ: Ուսուցչուհու հանձնարարությամբ աշակերտները դուրս էին գրել «Թմկաբերդի առումը» պոեմի իրենց դուր եկած հատվածները, և պատճառաբանում էին, թե ինչու են հատկապես տվյալ հատվածն ընտրել: Ավանդազրույցի հիման վրա ստեղծված պոեմի թումանյանական լուծումները հետաքրքիր էին հնչում երեխաների շուրթերից: Մեծ ոգևորությամբ էին նշում առանձնապես այն հատվածները, որ վերաբերում են Թմկա տիրուհու՝ Նադիր շահին տված զղջման պատասխանին.

- Քաջ էր ու սիրուն քեզնից առավել.
Մի բարձր ու ազնիվ տղամարդ էր նա.
Կնոջ մատնությամբ ամրոց չէր առել,
Չէր եղել կյանքում երբեք խաբեբա…

10-11-րդ դարերի «Ֆարսի բյուլբյուլ», անմահ Ֆիրդուսու իմաստուն խոսքերը.

Ի՞նչը կհաղթի կյանքում հերոսին
Թե չլինին
Կինն ու գինին…

Յուրաքանչյուր հատվածի համար աշակերտներն ունեին յուրովի մեկնաբանություն: Ուսուցչուհու այն հարցին, թե ինչու թափառական աշուղը հենց «սիրուն տիկնանց» ու «ջահել տղերքին» է ուղղում իր խոսքը. «Լա՛վ ուշ դրեք իմ խաղին…», նրանք հանդես եկան հետաքրքիր մեկնաբանությամբ. քանի որ հնարավոր է՝ նրանք էլ երիտասարդ տարիքում նման սխալներ թույլ տան ու միշտ հիշեն.

Անց են կենում… միայն անմահ
Գործն է խոսվում լավ ու վատ.
Ա՜խ, երանի՝ ո՛վ մարդ կգա
Ու մարդ կերթա անարատ:

Պատմությանն առնչվող բոլոր փաստերին տեղյակ էին երեխաները, ինչը հավաստում է, որ 8-րդ դասարանի աշակերտների ունեցած գիտելիքների այդ ընդգրկուն պաշարը գնահատանքի է արժանի:

Այս ամենն ուղեկցվում էր տեսանյութով, որ ներկայացնում էր Թումանյանի ծննդավայրը՝ Դսեղը, Դեբեդ գետը, Ջավախքի հրաշագեղ բնաշխարհը, Թմուկ բերդը, Փարվանա լիճը, գրողի տուն-թանգարանը, նրա տարիքը խորհրդանշող աստիճանները, որով այցելուները թանգարան են բարձրանում: Օգտագործվեց նաև քարտեզ, որի վրա երեխաներն անսխալ ցույց էին տալիս գործածվող աշխարհագրական անունները:

Թերևս ամենատպավորիչը նյութի ամփոփման պահն էր, երբ դասարանը ոտքի ելավ (10 աշակերտ) ու իրար փոխանցելով՝ արտասանեց պոեմը սկզբից մինչև վերջ: Ուրեմն այս աշակերտները ողջ կյանքում իրենց հոգում ու սրտում կրելու են մեծ բանաստեղծի անմոռաց անունը, նրա իմաստուն մտքերի դասերը:

Ամեն ինչ, ինչ պտտվում էր Թումանյանի շուրջ, շոշափվեց դասին, ընդհուպ Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերան: Այսինքն՝ հասկացան, որ «Թումանյանն է անհաս Արարատը մեր նոր քերթության»:

Այնուհետև ուսուցչուհին, հղում անելով նախորդ դասարանում անցած նյութերին, խոսք բացեց սիրո հավերժության թեմայի մասին, և երեխաներն իսկույն վերհիշեցին Գ. Մահարու «Բալլադ Չալոյի և առաջին սիրո մասին» երկը:

Հասմիկ Անդրյանը ներկայացրեց «Փարվանա» բալլադի բովանդակությունն ու հիմնական գաղափարը՝ սիրո հավերժությունը: Գեղեցկությունը ոչ միայն արտաքին փայլն է, այլև ներքին՝ հոգեկան շռայլ երանգները, որոնց կրողը Փարվանա արքայադուստրն է: Նրա հոգեկան բյուրեղյա գեղեցկությունն ամփոփված է հորը ներկայացրած պայմանի մեջ.

- Գուցե, հայրի՛կ, տկար լավին
Հաղթի մի վես տմարդի,
Բայց չի կարող լինել երբեք
Նա սիրելին իմ սրտի…

Սա է Թումանյանի զորությունը, որ մագնիսի պես իրեն է քաշում բոլորին:

Ամբողջ դասին բոլոր աշակերտներն ակտիվ էին, ինչի համար ուսուցչուհին գնահատեց բոլորին: Քննարկման ժամանակ էլ գործընկերները նշեցին, որ ուսուցչուհին, իրոք, զգալի աշխատանք է կատարել՝ երեխաների հոգու խորքում ծավալուն տեղ հատկացնելով հայ գրականության անմահ փառքին: Երիտասարդ ուսուցիչներն ընդօրինակելու շատ բան ունեին, փորձառուներն էլ՝ գնահատելու ու բացերը լրացնելու:

Երկրորդ ընդօրինակման դասը կազմակերպվեց վեցերորդ դասարանում՝ մաթեմատիկայից,երիտասարդ ուսուցչուհի Աննա Ավանեսյանի մոտ: Թեման «Ռացիոնալ թվերն» էր, որի համար նա նպատակ էր դրել. ա) ամրապնդել սովորողների կարողությունները ամբողջ թվերի վերաբերյալ, բ) խորացնել նրանց գիտելիքները երկրաչափական պատկերների վերաբերյալ, գ) ծանոթացնել ռացիոնալ թվերին:

Ուսուցչուհին հետաքրքիր մեթոդներ օգտագործեց՝ սովորողների ուշադրությունը սևեռելով բուն նյութի վրա: Երկրաչափական տարբեր մարմինների մեջ տեղադրելով բազմաթիվ հարցեր ու վարժություններ՝ նա պահանջում էր աշակերտներից, որ մոտենան, հանեն իրենց բաժին հասած հարցը, պատասխանեն տեղում, իսկ վարժությունները լուծեն գրատախտակին:

Նոր նյութի հաղորդման ժամանակ թվային բազմություններն ավելի մատչելի ու պատկերավոր բացատրելու համար օգտագործեց տարբեր գույների ու չափերի էլիպսաձև կտրտված թղթեր, որոնց վրա նշված էին բնական, ամբողջ և ռացիոնալ թվերի տառային նշանակումները:

Ամփոփման համար օգտագործեց խաչբառ, որի արդյունքում ստացվեց բանական (հասկանալի), լատիներեն՝ ռացիոնալ բառը:

Դասի ընթացքում հանդես բերվեց ուսուցչուհու մանկավարժական մոտեցումը, որ դրսևորվեց աշակերտների հետ ունեցած մեղմ ու քնքուշ, հարգալից ու ու ոգևորող վերաբերմունքով:

Քննարկման ժամանակ նրա գործընկերներն ընդգծեցին, որ նախորդ դասերի համեմատությամբ այսօր ուսուցչուհու մոտ զգալի աճ կա ու ձգտում նոր ձեռքբերումների համար:

Այս հանդիպմանը հնարավորություն ստեղծվեց, որ Խնապատի միջնակարգ դպրոցի տնօրեն Լյուդմիրա Մոսիյանը հանդես գա իր առաջարկություններով ու երիտասարդ մասնագետներին ուղղված խորհուրդներով: Եվ քանի որ ինքն էլ առաջին տարին է դասավանդում վեցերորդ դասարանում, նկատել է դասագրքում մինչ այժմ տեղ գտած որոշ անճշտություններ կանոնների, սահմանումների ձևակերպումների մեջ և հարկ է համարում տեղյակ պահել մասնագետներին: Օրինակ՝ 1. Ամբողջ թվերի բաժանման կանոնների դասագրքի ձևակերպումներից հետևում է, որ ցանկացած երկու ամբողջ թվերի բաժանումից քանորդում միշտ կստացվի ամբողջ թիվ:

Միշտ չէ այդպես:

2. Ցանկացած ամբողջ թվի բացարձակ արժեքը (մոդուլ) բնական թիվ է: Հաշվի չի առնված, որ 0-ի մոդուլը 0 է, իսկ 0-ն բնական թիվ չէ:

Խորհուրդ տվեց դասին ներկայանալուց առաջ պատշաճ կերպով ուսումնասիրել տեսական նյութը, լավ նախապատրաստվել և նոր միայն մատուցել:

Ասկերանի միջնակարգ դպրոցի տնօրեն Մարելլա Ավանեսյանը ևս, գնահատելով ուսուցիչների օրվա աշխատանքը, կարևորեց մի հանգամանք՝ հասնել նրան, որ աշակերտը դասը յուրացրած տուն գնա:

Խրամորթի միջնակարգ դպրոցում օրն սկսվեց ու ավարտվեց Թումանյանով: Այս անգամ ակնդիրը դարձանք Հասմիկ Անդրյանի կողմից կազմակերպված «Անուշ» պոեմի բեմադրությանը: Աչք շոյեց մանավանդ այն փաստը, որ ավագ դասարանի տղաներն այդքան սիրով ու պատասխանատվությամբ էին նախապատրաստվել իրենց դերերին: Արենը (Սարո), Արսենը (Մոսի), Աշոտը (անցվոր եղբայր) հաճելի պահեր պարգևեցին հանդիսատեսներին: Իսկ աղջիկներից Լուսինեն (Անուշ), Սուսաննան (Նանի), Սաթենիկը (Սարոյի մայրը) կատարյալ էին իրենց դերերում:

Միջոցառմանը ներկա էր Ասկերանի կրթության և սպորտի բաժնի վարիչ Կառլեն Մայիլյանը, որը խոստացավ, որ Թումանյանի 150-ամյանկին նվիրված լավագույն միջոցառումների կազմակերպիչ ուսուցիչների համար էքսկուրսիա կկազմակերպի դեպի Ջավախք:

Սուրայա ՂԱԶԱՐՅԱՆ

Հովհ. ԹՈՒՄԱՆՅԱՆ

ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՄԵՆՔ

Եվրոպական և ռուսական թերթերի էջերը մեծ մասամբ բռնված են քաղաքական հարցերով: Ինչո՞ւ, որովհետև այդ ժողովուրդները ապրում են քաղաքական մեծ պայքարներով, երկիրներ ու ազգեր տիրելու և կառավարելու ծրագիրներ ունեն, առևտուրի մեծ շուկաներ ու ազդեցությունների ասպարեզներ ձեռք բերելու խնդիրներ ունեն, միլիարդներով փոխառություն անելու, դաշնակցություններ կապելու հոգսեր ունեն, խաղում են իրենց ահռելի ուժերով, աշխարհքներ ու ազգեր են շարժում և արքուն ուշի ուշով հետևում են ամեն մեկը մյուսի կամ ամբողջ աշխարհքի քաղաքական կյանքի ընթացքին, մանրամասն հաշվի են առնում դիմացինի այս կամ այն շարժումը, նավերի թիվն ու զորաբանակը, աշխատում են գուշակել մեկը մյուսի տեսակցությունն ու խոսակցությունը, զբաղվում են դրանով, խորհրդածություններ են անում, և այդ պատճառով իրենց թերթերն ու հոդվածներն էլ նվիրում են դրանց:

Այս ամենը շատ է պարզ ու շատ է հասկանալի: Բայց մի բան, որ շատ է անհասկանալի ու անհեթեթ, այն է, որ մեր մամուլն էլ, մենք էլ ամենայն եռանդով միշտ հետևել ենք և հայ ընթերցողների հետ զրույց ենք արել, հաշիվ ենք տեսել քաղաքական այդ բոլոր դեպքերի ու դեմքերի մասին, շարունակ առաջնորդողներ ենք նվիրել մեկի ու մյուսի քաղաքականությանը, խորհրդածություններ արել, եզրակացություններ հանել, սխալներ գտել, և, թող զարմանալի չթվա, նույնիսկ զգուշացրել ու սպառնալիքներ արել:

Եվ այս սովորությունը, այս ադաթը այնպես է արմատացել մեր մեջ, այնպես է տիրել մեր ուղեղին, որ, շատ է հավանական՝ շատերի զարմանքն են հարուցանելու մեր տողերը, թե՝ հապա ի՞նչ կերպ կարող է լինել: Կասեն՝ մենք կուլտուրական ժողովուրդ ենք, մենք մամուլ ունենք, ինչպես չհետևենք լուսավոր ազգերի քաղաքական կյանքին: Բայց երբ այդ կուլտուրական ժողովրդի մամուլի ներկայացուցչին, բարերարին ու գյուղատնտեսին դուրս են անում հայ գյուղից, նոր են խոստովանում, թե չեն ճանաչել հայ գյուղացուն ու հայ գյուղը, մի խոստովանություն, որ նորերս արին «Մշակում», կամ թե չէ, այդ քաղաքակիրթ բազմությունը, որ քանի-քանի անգամ տեսել է եվրոպական ազգերի կուլտուրական ու քաղաքական գործերի հաշիվը, նոր է իմանում, որ իր թեմական դպրոցներում աշխարհաբար հայերեն լեզու չկա, և հալածված է եղել իր գրականությունը նրանց մեջ, ինչպես վերջերս բացվեց «Հորիզոնի» էջերում:

Իսկ եթե մենք պետք է զբաղվեինք քաղաքականությամբ, այդ ամենից առաջ այն էր լինելու, որ մի ճշմարիտ հայացք լինեինք ստեղծած, մի պարզ վերաբերմունք լինեինք մշակած դեպի այն պետությունները, որոնց ձեռքի տակ գտնվում ենք: Մի գիտակցական, մտածված վերաբերմունք, որ գոյություն չունի ամենևին, և միշտ առաջնորդվում ենք քամու հոսանքներով, նախապաշարումներով ու թյուրիմացություններով, ամեն անգամ էլ դառնությամբ հաշվելով մեր կոպիտ սխալներն ու կորուստները, ամեն անգամ էլ ամեն մեկս ետին թվով հանդիսանալով խելոք ու հեռատես, երբ եղածն անցել է անդառնալի: Եվ որտեղի՞ց պետք է լինի այդ գիտակցությունն ու մտածված վերաբերմունքը, քանի որ միանգամայն տգետ ենք մեր նույնիսկ մոտիկ անցյալին և այսօրվա անցած դարձածին:

Այսպես է, դժբախտաբար, եվրոպական պետությունների քաղաքականության վրա խորհրդածող կուլտուրական ժողովուրդը: Եզոպոսի աստղաբաշխի նման, որ դիտակն աչքերին, աստղերը դիտելով, առանց իր ոտի տակի ճանապարհը նայելու, առաջ է գնում ու գնում է ընկնում ջրհորը:

Անշուշտ, քաղաքական աշխարհքից պետք է երբեմն-երբեմն տալ տեսություններ և այդ շատ է հեշտ, որովհետև պատրաստ գալիս է տպված, բայց առաջին ու մեծ տեղը պետք է բռնեն մեր աշխարհքը, մեր կյանքը, այդ կյանքի հարցերն ու նրանց լուրջ, ամենակողմանի ուսումնասիրությունը, այն, որ դժվար է և գուցե դրա համար էլ ամենից քիչ տեղ է ունեցել մեր մամուլի մեջ:

ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«5» փետրվարի 2019թ. N38-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2019 -2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2019-2020 ուսումնական տարվա մասնագիտությունների և ընդունելության քննությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

Հավելված
Արցախի Հանրապետության
կառավարության
2019 թվականի փետրվարի 5-ի
N38-Ն որոշման

Ց Ա Ն Կ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
1.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ (գ)**		
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	✹ 011401.01.6 Կենսաբանություն	Կ(գ) կամ Քգ)	Քգ)** կամ Կ(գ)**		Հլգ(գ)*
	✹ 011401.02.6 Քիմիա	Քգ) կամ Կ (գ)	Կ (գ)** կամ Քգ)**		Հլգ(գ)*
	✹ 011401.03.6 Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ)**		Հլգ(գ)*
	✹ 011401.04.6 Ֆիզիկա	Ֆ(գ) կամ Մ(գ)	Մ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ(գ)*
	✹ 011401.05.6 Մաթեմատիկա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.11.6 Կերպարվեստ	Գծն	Գն		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
023201.00.6	**Լեզվաբանություն**				
	023.201.01.6 Թարգմանչական գործ /ըստ լեզուների/	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
031201.00.6	**Քաղաքագիտություն**				
	031201.01.6 Քաղաքագիտություն	ՀԺՊ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
031301.00.6	**Հոգեբանություն**				
	031301.01.6 Հոգեբանություն	Հլգ(գ)	Օտլ (գ)	Կ(գ)**	
032101.00.6	**Լրագրություն**				
	032101.01.6 Լրագրություն	ՍԱ(գ)	Հլգ(գ)		Օտլ(գ)*
041101.00.6	**Հաշվապահական հաշվառում և հարկում**				
	041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում /ըստ ոլորտի/	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
041201.00.6	**Ֆինանսներ**				
	041201.01.6 Ֆինանսներ /ըստ ոլորտի/	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
041301.00.6	**Կառավարում**				
	041301.01.6 Կառավարում /ըստ ոլորտի/	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
061101.00.6	**Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)**				
	061101.02.6 Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա	Մ(գ)	Ֆ(գ)** կամ Անգլ (գ)		Հլգ(գ)*
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
101501.00.6	**Զբոսաշրջություն**				
	101501.01.6 Զբոսաշրջություն	Ա(գ) կամ ՀԺՊ(գ)	Օտլ (գ)**		Հլգ(գ)*

✹ *- Նշված մասնագիտություններով ԱրՊՀ առկա ուսուցման համակարգի դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար, որպես մրցութային գնահատական, կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը: Մրցութային երկու առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:*

1.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ (գ)**		
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.01.6 Կենսաբանություն	Կ(գ) կամ Քգ)	Քգ)** կամ Կ(գ)**		Հլգ(գ)*
	011401.03.6 Աշխարհագրություն	Ա(գ)	Մ(գ)**		Հլգ(գ)*
	011401.04.6 Ֆիզիկա	Ֆ(գ) կամ Մ(գ)	Մ(գ)** կամ Ֆ(գ)**		Հլգ(գ)*
	011401.05.6 Մաթեմատիկա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
041101.00.6	**Հաշվապահական հաշվառում և հարկում**				
	041101.01.6 Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ(գ)	
053101.00.6	**Քիմիա**				
	053101.02.6 Դեղագործական քիմիա	Կ(գ) կամ Քգ)	Քգ)** կամ Կ(գ)**		Հլգ(գ)*
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

2.«ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
2.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
041801.00.6	**Ագրոբիզնես**				
	041801.01.6 Ագրոբիզնես	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
071301.00.6	**Էներգետիկա**				
	071301.03.6 Էլեկտրաէներգետիկա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
071601.00.6	**Տրանսպորտային համակարգեր**				
	071601.03.6 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
071602.00.6	**Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ**				
	✹071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

072101.00.6	**Պարենամթերքի տեխնոլոգիա**				
	✹072101.01.6 Պարենամթերքի տեխնոլոգիա	Մ(գ) կամ Ֆ(գ) կամ Քգ)	Ֆ(գ)** կամ Քգ)** կամ Մ(գ)**		
073101.00.6	**Ճարտարապետություն**				
	073101.01.6 Ճարտարապետություն	Նկ	Գծ	Մ(գ) **	Հլգ(գ)*
073201.00.6	**Շինարարություն**				
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
	073201.03.6 Ջրային համակարգերի շինարարություն և շահագործում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
081101.00.6	**Ագրոնոմիա**				
	✹ 081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Քգ)**		Հլգ(գ)*
084101.00.6	**Անասնաբուժություն**				
	✹084101.01.6 Անասնաբուժություն	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Քգ)**		Հլգ(գ)*

2.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
041801.00.6	**Ագրոբիզնես**				
	041801.01.6 Ագրոբիզնես	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
071301.00.6	**Էներգետիկա**				
	071301.03.6 էլեկտրաէներգետիկա	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
071601.00.6	**Տրանսպորտային համակարգեր**				
	071601.03.6 Փոխադրումների և ճանապարհային երթևեկության կազմակերպում և կառավարում	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
071602.00.6	**Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ**				
	✹071602.01.6 Գյուղատնտեսության մեքենայացում, մեքենաներ և սարքավորումներ	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*
073201.00.6	**Շինարարություն**				
	073201.01.6 Արդյունաբերական և քաղաքացիական շինարարություն	Մ(գ) կամ Ֆ(գ)	Ֆ(գ)** կամ Մ(գ)**		Հլգ(գ)*
081101.00.6	**Ագրոնոմիա**				
	✹ 081101.01.6 Ագրոնոմիա, սելեկցիա և գենետիկա	Մ(գ) կամ Կ(գ)	Կ(գ)** կամ Քգ)**		Հլգ(գ)*

«Շուշիի տեխնոլոգիական համալսարան» հիմնադրամի դիմորդներն անվճար ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար, որպես մրցութային գնահատական, կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

✹ - Նշված մասնագիտություններով վճարովի ուսուցման համակարգի ընդունելության մրցույթին մասնակցելու համար, որպես մրցութային առարկաների գնահատական, դիմորդը կարող է դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:

Մրցութային առարկաներից միասնական քննություն հանձնող դիմորդներն օգտվում են առաջնահերթ ընդունվելու արտոնությունից:

2.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0601	էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
2202	Տեղեկատվության մշակման և կառավարման ավտոմատացված համակարգեր (հիմնական կրթությամբ)
2401	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում (հիմնական կրթությամբ)
2916	Քաղաքաշինական կադաստր (հիմնական կրթությամբ)
3102	Գյուղատնտեսագիտություն (հիմնական կրթությամբ)
3104	Անասնաբուժություն (հիմնական կրթությամբ)
3106	Գյուղատնտեսության մեքենայացում (հիմնական կրթությամբ)

3. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

3.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ (գ)**		
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ***	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)**		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն***	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ***	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

3.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ (գ)**		
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.09.6 Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ***	Մասն.	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.16.6 Նախնական զինվորական պատրաստություն	ՆԶՊ (բ)	ԸՖՊ		Հլգ(գ)*
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն***	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
061105.00.6	**Տեղեկատվական տեխնոլոգիաներ**				
	061105.01.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ***	Մ(գ)	Ֆ(գ)**		Հլգ(գ)*

3.3 ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0207	Թարգմանություն և գործավարություն (հիմնական կրթությամբ)
0302	Հայոց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ)
0303	Ռուսաց լեզվի դասավանդում (հիմնական կրթությամբ)
0307	Ֆիզիկական կուլտուրա և սպորտ (հիմնական կրթությամբ)
0312	Դասավանդում տարրական դասարաններում (հիմնական կրթությամբ)
0313	Նախադպրոցական կրթություն (հիմնական կրթությամբ)
0416	Ատամնատեխնիկական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0601	էկոնոմիկա, հաշվապահական հաշվառում և աուդիտ (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
0602	Մենեջմենթ (կառավարում) (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
0603	Ֆինանսներ (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
2203	Հաշվողական տեխնիկա և ավտոմատացված համակարգերի ծրագրային ապահովում (հիմնական կրթությամբ)
2307	Զբոսաշրջություն (հիմնական կրթությամբ)
2401	Փոխադրումների կազմակերպում և կառավարում տրանսպորտում ըստ տրանսպորտի տեսակների) (հիմնական և միջնակարգ կրթությամբ)

ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

4. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
4.1 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ (գ)**		
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
022802.00.6	**Կովկասագիտություն**				
	022802.01.6 Կովկասագիտություն ***	ՀԺՊ(գ)	Հլգ (գ)		Օտլ (գ)*
023201.00.6	**Լեզվաբանություն**				
	023201.01.6 Թարգմանչական գործ /ըստ լեզուների/	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
041301.00.6	**Կառավարում**				
	041301.01.6 Կառավարում /ըստ ոլորտի/	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
061101.00.6	**Ինֆորմատիկա /համակարգչային գիտություն/**				
	061101.01.6 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	Մ(գ)	Ֆ(գ) կամ Օտլ (գ)		Հլգ(գ)*
061104.00.6	**Տեղեկատվական համակարգեր**				
	061104.01.6 Տեղեկատվական համակարգեր	Մ(գ)	Ֆ(գ) **		Հլգ(գ)*

4.2 ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
011301.00.6	**Ընդհանուր մանկավարժություն**				
	011301.01.6 Տարրական մանկավարժություն և մեթոդիկա	Հլգ(գ)	Մ(գ)** կամ Օտլ**		
011401.00.6	**Մասնագիտական մանկավարժություն**				
	011401.18.6 Պատմություն	ՀԺՊ(գ)	ԸՊ(գ) կամ Հլգ(գ)		Օտլ (գ)*
	011401.19.6 Հայոց լեզու և գրականություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ) **		Օտլ(գ)*
	011401.20.6 Ռուսաց լեզու և գրականություն	Ռլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
	011401.21.6 Անգլերեն լեզու և գրականություն	Անգլ(գ)	Հլգ(գ)		ՀԺՊ(գ)*
022802.00.6	**Կովկասագիտություն**				
	022802.01.6 Կովկասագիտություն ***	ՀԺՊ(գ)	Հլգ (գ)		Օտլ (գ)*
031101.00.6	**Տնտեսագիտություն**				
	031101.01.6 Տնտեսագիտություն	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
041301.00.6	**Կառավարում**				
	041301.01.6 Կառավարում (ըստ ոլորտի)	Մ(գ)	Հլգ(գ)	Օտլ (գ)	
042101.00.6	**Իրավագիտություն**				
	042101.01.6 Իրավագիտություն	Հլգ(գ)	ՀԺՊ(գ)	Օտլ (գ)	
061101.00.6	**Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)**				
	061101.01.6 Ինֆորմատիկա (համակարգչային գիտություն)	Մ(գ)	Ֆ(գ) կամ Օտլ (գ)		Հլգ(գ)*
061104.00.6	**Տեղեկատվական համակարգեր**				
	061104.01.6 Տեղեկատվական համակարգեր	Մ(գ)	Ֆ(գ) **		Հլգ(գ)*

5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ «ԳՅՈՒՐՋՅԱՆ» ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ
ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը, կրթական ծրագիրը	Ընդունելության քննությունները			
		Մրցութային			Ոչ մրցութային
1	2	3	4	5	6
021201.00.6	**Դիզայն**				
	021201.01.6 Դիզայն	Կոմպ	Գծն	Գն	Հլգ(գ)*
	021201.03.6 Հագուստի մոդելավորում	Կոմպ	Գծն	Գն	Հլգ(գ)*

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

(բ)	բանավոր	Հլգ	Հայոց լեզու և գրականություն
(գ)	գրավոր	Մ	Մաթեմատիկա
Ա	Աշխարհագրություն	Մասն.	Մասնագիտական
Անգլ	Անգլերեն	ՆՁՊ	Նախնական զինվորական պատրաստություն
Գծ	Գծագրություն		
Գծն	Գծանկար	Նկ	Նկարչություն
Գն	Գունանկար	Ռլ	Ռուսաց լեզու
ԸՊ	Ընդհանուր պատմություն	ՍԱ	Ստեղծագործական աշխատանք
ԸՖՊ	Ընդհանուր ֆիզիկական պատրաստություն	Ք	Քիմիա
		Օտլ	Օտար լեզու****
Կ	Կենսաբանություն	Ֆ	Ֆիզիկա
Կոմպ	Կոմպոզիցիա		
ՀԺՊ	Հայ ժողովրդի պատմություն		

Ծ Ա Ն Ո Թ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

**Ոչ մրցութային քննության գնահատականը փոխանցվում է միջնակարգ կրթության ատեստատից կամ համապատասխան ավարտական փաստաթղթից:*

***Վճարովի ուսուցման համակարգում թափուր տեղեր առաջանալու դեպքում այդ տեղերի մրցույթին մասնակցելու համար դիմորդները մասնագիտությունների և քննությունների ցանկում երկու աստղանիշերով նշված առարկաների համար որպես մրցութային գնահատական կարող են ընդունելության դիմում-հայտում նախապես հայտագրել միջնակարգ կրթության ատեստատի կամ համապատասխան ավարտական փաստաթղթի՝ այդ առարկաների պետական ավարտական քննությունների գնահատականը, իսկ պետական ավարտական քննական գնահատականի բացակայության դեպքում՝ տարեկան գնահատականը:*

****Ոչ պետական բուհի չհավատարմագրված մասնագիտություն:*

*****Օտար լեզու (Ռուսաց լեզու, Անգլերեն, Գերմաներեն, Ֆրանսերեն):*

Օտար լեզու մրցութային կամ ոչ մրցութային քննություն կարող է ընտրվել նշված չորս առարկաներից մեկը՝ դիմորդի հայեցողությամբ:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊԵՏ- ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«5» փետրվարի 2019թ. N39-Ն

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետության նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների առկա և հեռակա ուսուցման 2019-2020 ուսումնական տարվա մասնագիտությունների ցանկը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Հաստատում եմ»
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ՝ Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2019 թվականի փետրվարի 5-ի
N39-Ն որոշման

Ց Ա Ն Կ
ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԿԱ ԵՎ ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ 2019-2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

1. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ Թ. ՔԱՄԱԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՔՈԼԵՋ
(ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0402	Մանկաբարձական գործ (հիմնական կրթությամբ)
0406	Քույրական գործ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0418	Բուժական գործ զինված ուժերում (հիմնական կրթությամբ)

2. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱՅԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ
(ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0501	Գործիքային կատարողական արվեստ (ըստ գործիքների տեսակների) (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0502	Երգեցողություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0503	Երգչախմբավարություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0504	Երաժշտության տեսություն (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
0505	Էստրադային երաժշտարվեստ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)

3. ՇՈՒՇԻԻ ԱՐՍԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ՔՈԼԵՋ
3.1 ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Դասիչը	Մասնագիտությունը
0514	Դիզայն՝ ըստ ճյուղերի (հիմնական կրթությամբ)
0515	Զարդարային-կիրառական արվեստ և ժողովրդական արհեստներ (հիմնական կրթությամբ)
2014	Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (ըստ ճյուղերի) (հիմնական կրթությամբ)
2808	Հագուստի մոդելավորում և նախագծում (հիմնական կրթությամբ)

3.2 ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Դասիչը	Մասնագիտությունը
2302	Սպասարկման կազմակերպում հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում (միջնակարգ կրթությամբ)

4.ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ՊԱՐԱՐՎԵՍՏԻ ՔՈԼԵՋ
(ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0319	Պարի ուսուցում (միջնակարգ կրթությամբ)
0506	Դասական պար (4-րդ դասարանն ավարտած)
	Ժողովրդական պար (8-րդ դասարանն ավարտած)

5. ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԻ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
(ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
0608	Առևտուր (ըստ ճյուղերի) (միջնակարգ կրթությամբ)
2014	Ռադիոէլեկտրոնային տեխնիկայի տեխնիկական սպասարկում և նորոգում (հիմնական կրթությամբ)
2203	Համակարգիչների շահագործում (հիմնական կրթությամբ)
2304	Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2311	Հասարակական սնունդ (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) (հիմնական կրթությամբ)
2603	Փայտամշակման արտադրությունների սարքավորումների շահագործում և տեխնոլոգիա (հիմնական կրթությամբ)

6. ՄԱՐՏՈՒՆՈՒ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
(ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
1207	Եռակցման աշխատանքների տեխնոլոգիա (հիմնական կրթությամբ)
2203	Համակարգիչների շահագործում (հիմնական կրթությամբ)
2304	Վարսավիրական արվեստ և զարդարային դիմահարդարում (հիմնական կրթությամբ)
2401	Տրանսպորտային միջոցների շահագործում և նորոգում (ըստ տեսակների) (հիմնական կրթությամբ)
2704	Գինեգործություն և հյութերի արտադրություն (հիմնական կրթությամբ)
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա (հիմնական կրթությամբ)
2905	Ճանապարհաշինարարական և բարելավման աշխատանքների տեխնիկական ապահովում (հիմնական կրթությամբ)

7. ՇՈՒՇԻԻ «ԵԶՆԻԿ ՄՈՎՍԵՅԱՆ ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
(ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՈՒՄ)

Դասիչը	Մասնագիտությունը
1002	Էլեկտրասարքավորումների տեխնիկական շահագործում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
1006	Ջերմաէներգետիկ սարքավորումների և ջերմային ցանցերի տեխնիկական շահագործում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
1210	Մետաղների մեխանիկական մշակում հաստոցների և գծերի վրա (հիմնական կրթությամբ)
2311	Հասարակական սնունդ (հիմնական կրթությամբ)
2809	Կարի արտադրության տեխնոլոգիա (հիմնական կրթությամբ)
2902	Շինարարամոնտաժային և վերանորոգման աշխատանքների իրականացում (հիմնական և միջնակարգ կրթությամբ)
2907	Ատաղձագործական, մանրահատակագործական, ապակեգործական աշխատանքներ (հիմնական կրթությամբ)
2908	Հարդարման շինարարական աշխատանքների իրականացում (հիմնական կրթությամբ)

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

ՔԱՅԼՈՒՄ ԵՆՔ ԱՌԱՋ

«Բազուկդ պինդ, սիրտդ՝ աներկյուղ» խորագրով տոնական հանդեսը Բերձորի պետական մանկապարտեզում մեծ ոգևորություն պարգևեց ներկաներին: Կրթօջախի ավագ խմբի սաները, որոնք օրեր առաջ Հայոց բանակի զինվորի համար նաև նվերներ էին պատրաստում, այս անգամ հանդես եկան որպես զինվոր ու զինվորին աջակից: Հանդեսի սկզբում ասացին, որ հանդիսատեսին զարմացնելու են, ուրախացնելու են և մի փոքր տխրեցնելու: Այդպես էլ եղավ: Սկզբում փոքրիկները ներկայացրին Աթաբեկ Խնկոյանի «Ճպուռն ու մրջյունը» մանկական բանաստեղծությունը: «Ի՞նչ է ճպուռը» հարցին պատասխանելու համար խմբի սաներ Ադամն ու Ռոբերտը բեմահարթակ կանչեցին Գիտունիկին՝ Դավիթին, որը եկավ իր ցուցափայտով և բացատրեց՝ ով է կամ ինչ է ճպուռը: Ճպուռներին մարմնավորում էին խմբի աղջնակները, որոնք թըռի-վըռի անցան ուրախ պարելով՝ չմտածելով ապագայի մասին: Գիտունիկը ներկայացրեց նաև աշխատասեր ու մաքրասեր, բարի մրջյուններին՝ տղաներին՝ լի պարկերը շալակներին: Փոքրիկները հումորով վարժ ներկայացրին Խնկոյանի գործը: Ինչպես գրել է Խնկո Ապերը.

Մին էլ ըհը, ծմեռը
Փռեց իրեն թևերը,
Բացեց գորգը սպիտակ,
Դաշտերն առավ ձյունի տակ…

Մի տեղ՝ ծառի տակ ճպուռներն են, որ մրսում են, սոված են, չունեն ծածկ ու սնունդ, իսկ մրջյուններն իրենց տաքուկ տնակում ապրում են հաշտ, ուրախ, կուշտ: Ճպուռներից ավագը դիմեց մրջյուններին՝ խնդրելով օգնություն: Մրջյունը զարմացած հարցրեց՝ ի՞նչ էին անում ամռանը: Եղավ հայտնի պատասխանը՝

- Էդպես բանի, սանամեր,
Էլ ժամանակ ո՞վ ուներ.
Էն խոտերում բուրավետ
Երգում էինք մերոնց հետ:

Մրջյունը չցանկացավ օգնել անբան ճպուռին և խորհուրդ տվեց, որ նա հիմա էլ «Տրնգի» պարի: Սակայն եկավ Բարի Փերին՝ Նելլին և առաջարկեց օգնել նեղության մեջ ընկածին: Իհարկե, օգնեցին՝ խնդրելով Խնկո Ապոր ներողամտությունը, որ փոխել են նրա գործը: Միասնության, աշխատասիրության, համախմբվածության և նեղության մեջ ընկածին օգնելու խորհուրդն էր փոքրիկների ներկայացրածը: Այնուհետև նրանք համախմբվելով՝ միասնաբար մարմնավորեցին հայ զինվորին: Երգով ու ասմունքով փառաբանեցին Հայոց բանակը: Բեմականացրին փոքր տեսարաններ բանակային կյանքից: Եկավ նաև փոստատարը՝ Հովհաննեսը՝ բերելով նամակներ: Ներկաներին բաժանեց Հայոց բանակի օրվան նվիրված շնորհավորանքի խոսքերով բացիկները: Մանկապարտեզի տնօրեն Ինֆա Բաբայանը շնորհավորեց ներկաներին Հայոց բանակի օրվա առթիվ և բոլորին մաղթեց բարին, փոքրիկներին՝ երջանիկ մանկություն:

Շրջվարչակազմի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչ Վարդուշ Մովսիսյանն իր շնորհավորանքի խոսքում շնորհակալություն հայտնեց երեխաներին, նրանց դաստիարակներին, հանդեսի կազմակերպիչներին: Օրեր առաջ մանկապարտեզի կողմից նվերներով լի արկղեր էին պատրաստել, որոնց վրա գրված էին երեխաների անունները, նկարված նրանց ձեռքերը: Հունվարի 28-ին նվերները հասցրինք առաջնագիծ: Երեխաներին տեղեկացրի, որ զինվորները շատ էին ուրախացել՝ տեսնելով արկղերին երեխաների ձեռքերի նկարները, նրանց անունները: Զինվորները խնդրեցին, և ես փոխանցեցի նրանց ուղերձը մեր ժողովրդին, հատկապես՝ երեխաներին, որ բոլորս լինենք հանգիստ և վստահենք հայ զինվորին:

Հանդեսին ներկա էին շրջանային զինկոմ մայոր Ստեփան Օհանջանյանը, զինկոմիսարիատի և բանակի ներկայացուցիչներ, շրջվարչակազմի ղեկավարի նախկին տեղակալ Արտուշ Մխիթարյանը, որը մշտապես ներկա է լինում մանկապարտեզի միջոցառումներին, ծնողներ, հյուրեր:

Հանդեսից հետո մանկապարտեզի տնօրեն Ինֆա Բաբայանը տեղեկացրեց, որ ավագ խմբում կա 25 սան, դաստիարակներն են Լուսիկ Գեղամյանը և Ալլա Գուլյանը: Հավելեց, որ շուտով կնշեն Գիրք նվիրելու օրը՝ ներկայացնելով նաև նոր հանդես՝ նվիրված Հովի. Թումանյանի 150-ամյակին:

Ջուիրաբ ԸՌՔՈՅԱՆ

ԳԹԿ

ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1. Պատասխանների ձևաթղթի լրացման կարգը

Քննության ընթացքում առաջադրանքներին պատասխանելու համար շրջանավարտը պետք է լրացնի պատասխանների ձևաթուղթ, որի ճիշտ լրացումից է կախված աշակերտի քննական արդյունքը: Պատասխանների ձևաթուղթը տեղադրված է թեստ-գրքույկի վերջում, իսկ **«Մաթեմատիկա»** առարկայի պատասխանների ձևաթուղթը տրամադրվում է առանձին:

Պատասխանների ձևաթղթում **ընտրովի պատասխանով** յուրաքանչյուր առաջադրանքի համարի ներքևի մասում կա չորս վանդակ: Տրված առաջադրանքի ճիշտ պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է տվյալ պատասխանի համարին համապատասխանող վանդակում գրառել «X» նշանը: Օրինակ՝

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների (ենթաառաջադրանքների) պատասխանների գրառման համար պատասխանների ձևաթղթում նախատեսված են համապատասխան տեղեր:

Պնդումների փնջում տրված են չորս պնդումներ, որոնցից յուրաքանչյուրին հնարավոր է տալ երեք տիպի պատասխան՝ «Ճիշտ է», «Սխալ է» կամ «Չգիտեմ»: Պատասխանների ձևաթղթում պնդումների փնջի յուրաքանչյուր պնդման համարի ներքևում տրված է երեք վանդակ: Տրված պնդման պատասխանը գտնելուց հետո անհրաժեշտ է դրան համապատասխանող վանդակում դնել «X» նշանը: Օրինակ՝ 31-րդ առաջադրանքը պնդումների փունջ է, և յուրաքանչյուր պնդման համար ընտրված պատասխանը լրացվում է հետևյալ ձևով՝

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները պետք է կատարել թեստ-գրքույկի համապատասխան տեղում, իսկ **«Մաթեմատիկա»** առարկայից՝ պատասխանների ձևաթղթի հատկացված տեղում:

Աշակերտն ունի սխալ պատասխանն ուղղելու հնարավորություն: Եթե անհրաժեշտ է փոխել սխալ նշված պատասխանը, ապա պատասխանների ձևաթղթի՝ «Սխալ նշված պատասխանները փոխելու տեղը» դաշտում անհրաժեշտ է նշել առաջադրանքի համարը և կատարել նոր նշումը: Որպես վերջնական պատասխան ընդունվում է վերջին նշումը:

2. Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշները

Ընտրովի և կարճ պատասխան պահանջող առաջադրանքներից (ենթաառաջադրանքներից) յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Պնդումների փնջից հնարավոր է վաստակել առավելագույնը 4 միավոր:

Յուրաքանչյուր պնդման դիմաց ճիշտ նշված «Ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար տրվում է մեկական միավոր: «Չգիտեմ» պատասխանի համար միավոր չի տրվում: Յուրաքանչյուր սխալ նշված «Ճիշտ է» կամ «Սխալ է» պատասխանի համար առաջադրանքին տրվող միավորներից հանվում է մեկական միավոր: Եթե տրվող և հանվող միավորների տարբերությունը դրական է, այն համարվում է առաջադրանքի գնահատականը, իսկ եթե զրո է կամ բացասական թիվ է, ապա առաջադրանքի գնահատականը համարվում է 0:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքների (ենթաառաջադրանքների) գնահատման չափանիշները տրվում են յուրաքանչյուր առարկայի ուղեցույցում:

Ամփոփիչ վերջնական գնահատականը որոշվում է թեստի առաջադրանքներից աշակերտի վաստակած բոլոր միավորների գումարից, որը համապատասխանեցվում է գնահատման 20-միավորանոց համակարգին՝ համաձայն համապատասխան սանդղակի:

Մաթեմատիկա և բնագիտական առարկաներ

Միավորներ	Գնահատական	Միավորներ	Գնահատական
0-1	1	15-17	11
2	2	18-20	12
3	3	21-23	13
4	4	24-26	14
5	5	27-28	15
6	6	29-30	16
7-8	7	31-32	17
9-10	8	33	18
11-12	9	34	19
13-14	10	35	20

Հայոց լեզու

Միավորներ	Գնահատական	Միավորներ	Գնահատական
0-1	1	17-18-19	11
2	2	20-21-22	12
3	3	23-24-25	13
4	4	26-27-28	14
5	5	29-30-31	15
6	6	32-33-34	16
7-8	7	35-36	17
9-10	8	37-38	18
11-12-13	9	39	19
14-15-16	10	40	20

3. Աշխատանքի համար հատկացվող ժամանակը

Քննական աշխատանքի կատարման համար հատկացվում է 120 րոպե:

4. Օժանդակ նյութեր

Մաթեմատիկայի և բնագիտական առարկաների քննության ժամանակ աշակերտը կարող է օգտագործել պարզագույն հաշվիչ, քանոն, կարկին, քիմիա առարկայի քննության ժամանակ՝ նաև Մենդելևի պարբերական աղյուսակը, մետաղների լարվածության էլեկտրաքիմիական շարքը, աղերի, թթուների և հիմքերի լուծելիության աղյուսակը:

Քննական թեստի առաջադրանքների կատարումը մեծ ուշադրություն է պահանջում:

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության:

Առաջադրանքի պահանջը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նախ ուշադիր կարդալ այն, ապա անցնել պատասխանի ընտրությանը կամ խնդրի լուծմանը:

Խելամի՛տ օգտագործեք ժամանակը: Թեստը կատարելու համար սահմանափակ ժամանակ է տրվում, և, քանի որ առաջադրանքներն իրենց բնույթով տարբեր են ու կատարման համար շատ կամ քիչ ժամանակ պահանջող, ապա պետք է կարողանաք ձեր ժամանակը ճիշտ բաշխել: Եթե ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք դրան անդրադառնալ ավելի ուշ:

Թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը կարող եք օգտագործել սևագրության համար:

Թեստ-գրքույկը և պատասխանների ձևաթուղթը լրացվում է կապույտ գրիչով, իսկ ստուգումը կատարվում է կարմիր գրիչով:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Թեստը բաղկացած է 32 առաջադրանքներից:

1-18 առաջադրանքներն ընտրովի պատասխանով առաջադրանքներ են՝ նպատակաուղղված աշակերտների հենքային գիտելիքների ստուգմանը, որոնք համապատասխանում են հանրակրթական դպրոցի ծրագրով նախատեսված նվազագույն պահանջներին:

19-29 առաջադրանքները կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են, որոնց միջոցով ստուգվում են աշակերտի ծանոթ կամ փոքր-ինչ փոփոխված իրավիճակում գիտելիքների օգտագործման կարողությունները: Կարճ պատասխան պահանջող յուրաքանչյուր առաջադրանքից հետո նշված տեղում աշակերտը գրում է ճիշտ պատասխանը, առանց չափման միավորի անցկացնում ձևաթղթի համապատասխան մաս:

30-32 առաջադրանքներն ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ են, որոնց կատարումը պահանջում է մաթեմատիկայի տարբեր բաժիններից ստացած գիտելիքների կիրառում: Դրանց համար պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացվի լուծման ամբողջ ընթացքը պատասխանների ձևաթղթի համապատասխան տեղում:

1-29 առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր: Սխալ պատասխանի կամ պատասխանի բացակայության դեպքում միավոր չի տրվում: 30-32-րդ առաջադրանքների յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 0-2 միավոր (գնահատման քայլը՝ մեկ միավոր): Քննական աշխատանքին տրվող առավելագույն միավորը 35 է:

ԿԵՆՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Թեստը բաղկացած է 32 առաջադրանքից, որոնք ըստ առաջադրանքների, կառուցվածքային տեսակների և առաջադրանքներին տրվող միավորների բաշխված են հետևյալ համամասնությամբ.

Քննական թեստի առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

Հ/հ	Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի	Առաջադրանքների քանակն ըստ մասերի	Առաջադրանքների բաշխումն ըստ միավորների
1.	ընտրովի պատասխանով	22	22
2.	կարճ պատասխանով	8	8
3.	պնդումների փունջ	1	4
4.	ընդարձակ պատասխանով	1	1
	ընդամենը	32	35

Առաջադրանքների բաշխումն ըստ ծրագրային նյութի բաժինների

Հ/հ	ԹԵՄԱ	ՄԻԱՎՈՐԸ
1.	Կենդանի օրգանիզմների բազմազանությունը	7
2.	Մարդ	11
3.	Ընդհանուր օրինաչափություններ	17
	Ընդամենը	35

Քննական առաջադրանքների կառուցվածքային տեսակները և գնահատման չափանիշները

Ընտրովի պատասխաններ են պահանջում 1-22-րդ առաջադրանքները, որոնցից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքներում (23-30-րդ) անհրաժեշտ է գրել պահանջվող թիվը, բառը, բառակապակցությունը: Յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Պնդումների փնջում (31-րդ) տրված են կենսաբանական գործընթացների, երևույթների վերաբերյալ չորս պնդումներ:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքը մեկն է՝ 32-րդը, որի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Քննական աշխատանքին տրվող առավելագույն միավորը 35 է:

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Քննական թեստում ներառվելիք բաժինները եւ դրանց մոտավոր համամասնությունները

Հ/Հ	ԲԱԺԻՆ	Համամասնություն (%-ով)
1	Ընդհանուր տեղեկություններ Երկիր	3
2	Աշխարհագրական թաղանթը և նրա ոլորտային կառուցվածքը	17
3	Մայրցամաքներ և օվկիանոսներ	14
4	Հասարակական աշխարհագրություն	14
5	Տարածաշրջաններ և երկրներ	26
6	Հայաստան	26
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը	100

2. Թեստի կառուցվածքը

Թեստը բաղկացած է 32 առաջադրանքներից:

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ են 1-22-րդը:

Օրինակ առաջադրանք **8. Ո՞ր շարքում է տրված մարզերի և մարզկենտրոնների ճիշտ համապատասխանությունը:**

1.	Արագածոտն	ա.	Արտաշատ
2.	Լոռի	բ.	Իջևան
3.	Տավուշ	գ.	Աշտարակ
4.	Արարատ	դ.	Վանաձոր

1) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
2) 1-գ, 2-դ, 3-բ, 4-ա
3) 1-բ, 2-գ, 3-ա, 4-դ
4) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են 23-30-րդը:

31-րդ առաջադրանքը **պնդումների փունջ է:**

Պնդումների փնջում տրվում է որևէ թեմայի վերաբերյալ 4 պնդում, որոնցից յուրաքանչյուրին հնարավոր է տալ երեք տիպի պատասխան՝ «Ճիշտ է», «Սխալ է» կամ «Չգիտեմ»:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանք է 32-րդը:

ԳԹԿ

32-րդ առաջադրանքի հիմնավորումները մանրամասնորեն պետք է գրել առաջադրանքից հետո բաց թողած տեղում:

Միավորների բաշխումը

Ըստ առաջադրանքների տիպերի միավորները բաշխվում են հետևյալ կերպ՝

1. ընտրովի պատասխանով առաջադրանքներ՝ 22 միավոր,
2. կարճ պատասխանով առաջադրանքներ՝ 8 միավոր,
3. պնդումների փունջ՝ առավելագույնը 4 միավոր,
4. ընդարձակ պատասխանով առաջադրանք՝ 1 միավոր:

Քննական աշխատանքին տրվող առավելագույն միավորը 35 է:

ՔԻՄԻԱ

1. Քննական թեստում ներառվելիք բաժինները և դրանց մոտավոր համամասնությունը

Հ/Հ	Բաժին	Մոտավոր համամասնությունը(%)
1	Ընդհանուր քիմիա	56
2	Անօրգանական քիմիայի տարրական հիմունքներ	41
3	Օրգանական նյութերի վերաբերյալ նախնական պատկերացումներ	3
	Ընդամենը	100

2. Թեստի կառուցվածքը և գնահատման կարգը

Թեստը ներառում է 29 առաջադրանք:

1-22-րդ առաջադրանքներն **ընտրովի պատասխանով** են: Դրանցում ընդգրկված են քիմիայի առարկայական ծրագրի գրեթե բոլոր թեմաները:

23-րդ առաջադրանքը համապատասխանեցում է:

Օրինակ. Համապատասխանեցրե՛ք ռեակցիաների հավասարումները և տեսակները:

Ռեակցիաների հավասարումներ	Տեսակներ
Ա) $Ba(OH)_2+H_2SO_4=BaSO_4+2H_2O$	1) քայքայման
Բ) $2Cu(NO_3)_2 = 2CuO + 4NO_2 + O_2$	2) միացման
Գ) $Fe + H_2SO_4 = FeSO_4 + H_2$	3) տեղակալման
	4) փոխանակման

23.

Ա	Բ	Գ
4	1	3

24-րդը և 25-րդը **կարճ պատասխանով** առաջադրանքներ են: Առաջադրանքների և ենթաառաջադրանքների պատասխանները դրական ամբողջ թվեր են (0-9999): Թեստ-գրքույկում դրանց լուծումից ստացված պատասխանների միայն թվային արժեքները պետք է լրացնել այդ նպատակի համար հատկացված տեղում՝ ձևաթղթում նախատեսված հորիզոնական չորս վանդակներից յուրաքանչյուրում գրելով մեկ թվանշան:

26-րդ առաջադրանքի պատասխանը բառ է կամ բառակապակցություն: Յուրաքանչյուր առաջադրանքի և ենթաառաջադրանքի ճիշտ պատասխանը գնահատվում է 1 միավոր:



27-րդ առաջադրանքը **«Պնդումների փունջ»** է:

28-րդը և 29-րդն **ընդարձակ պատասխանով** առաջադրանքներ են: Այդ առաջադրանքները կատարելու համար պետք է թեստ-գրքույկում մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ողջ ընթացքը՝ պահանջվող քիմիական ռեակցիաների հավասարումներով, բոլոր քայլերի գրանցումով և հաշվարկներով: **28-րդ առաջադրանքի լուծումը գնահատվում է 0-2 միավոր** (գնահատման քայլը՝ 1 միավոր), **29-րդ առաջադրանքի լուծումը գնահատվում է 0-3 միավոր** (գնահատման քայլը՝ 1 միավոր):

Օրինակ 29. Ավելցուկով վերցրած կալիումի կարբոնատի լուծույթի և 10% զանգվածային բաժնով բարիումի նիտրատի լուծույթի փոխազդեցությունից առաջացել է 3,94 գ նստվածք: Ի՞նչ զանգվածով (գ) բարիումի նիտրատի լուծույթ է փոխազդել:

Խնդրի լուծման քայլերը

28.	1) $K_2CO_3+Ba(NO_3)_2=2KNO_3+BaCO_3$
	2) $Ba(NO_3)_2$-0,02 մոլ
	3) $m(լ-թ)_{Ba(NO3)2}$=52,2 գ

Խնդրի գնահատման չափանիշները

եթե նշված երեք պատասխաններն էլ ճիշտ են գրառված	3 միավոր
եթե ճիշտ է գրառված երկու պատասխան	2 միավոր
եթե ճիշտ է գրառված մեկ պատասխան	1 միավոր

3. Քննական թեստում միավորների բաշխումը

Ըստ առաջադրանքների տիպերի միավորները բաշխվում են հետևյալ կերպ.

1. **Ընտրովի պատասխանով** առաջադրանքներ՝ 22 միավոր
2. **Կարճ պատասխանով** առաջադրանքներ՝ 4 միավոր
3. **Պնդումների փունջ՝** 4 միավոր
4. **Ընդարձակ պատասխանով** առաջադրանքներ՝ 5 միավոր

Քննական աշխատանքին տրվող առավելագույն միավորը 35 է:

ՖԻԶԻԿԱ

1. Առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

Թեստը բաղկացած է 32 առաջադրանքներից:

Ներկայացման ձևը	Առաջադրանքի համարը	Ընդհանուր միավորը
Ընտրովի պատասխանով	1-22	22
Կարճ պատասխանով	23-26	4
Պնդումների փունջ	27	4
Ընդարձակ պատասխանով	28-32	5
ԸՆԴԱՄԵՆԸ	1-32	35

Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների պատասխանները (բառ, բառակապակցություն, թիվ, թվային արժեք՝ չափման միավորով) պետք է գրել պատասխանների ձևաթղթում՝ դրա համար առանձնացված տեղում (օրինակ՝ մագնիս, կինետիկ էներգիա, 12, 45 կգ, 21 մ/վ և այլն): Պատասխանը պարտադիր պետք է բերված լինի միավորների ՄՀ համակարգի, եթե առաջադրանքում լրացուցիչ հրահանգ չկա:

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները կատարելու համար թեստ-գրքույկի համապատասխան տեղում պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել առաջադրանքի կատարման ողջ ընթացքը (կատարվող բոլոր քայլերի գրանցումով, պահանջվող բանաձևերով, մաթեմատիկական հաշվարկներով և պատասխանի ստացումով):

Եթե թեստ-գրքույկում բացակայում է կարճ և ընդարձակ պատասխաններով առաջադրանքների լուծման ընթացքը, ապա միայն պատասխանների ձևաթղթում պատասխանի գրառման համար միավոր չի տրվում:

2. Առաջադրանքների բաշխումն ըստ դասընթացի բաժինների

Ստուգվում են աշակերտի գիտելիքներն ու կարողությունները ծրագրով նախատեսված բոլոր բաժիններից՝ հետևյալ մոտավոր համամասնություններով.

Հ/Հ	Թեմա	Միավորներ
1	Մեխանիկական երևույթներ	16
2	Ջերմային երևույթներ	6
3	էլեկտրամագնիսական երևույթներ	6
4	Օպտիկական երևույթներ	3
5	Ատոմային միջուկի կառուցվածքը	2
6	Աստղագիտություն	2
ԸՆԴԱՄԵՆԸ		35

3. Ցուցումներ

Բոլոր այն առաջադրանքներում, որտեղ հատուկ վերապահում չկա, թվաբանական հաշվարկները հեշտացնելու և պատասխանների միարժեքությունն ապահովելու նպատակով, պետք է ընդունել.

$\pi = 3{,}14;\ \pi^2 = 10;\ \sqrt{2} = 1{,}4;\ \sqrt{3} = 1{,}7,$ իսկ $g = 10$ Ն/կգ:

Հայոց լեզու

9-րդ դասարանի հայոց լեզվի ավարտական քննությունը անցկացվում է թեստով: Թեստը բաղկացած է տեքստից և տեքստի հիման վրա կազմված 36 առաջադրանքներից: Տեքստը կարող է լինել գեղարվեստական կամ գիտահանրամատչելի: Գեղարվեստական տեքստը ընդգրկում է 300-400 բառ, գիտահանրամատչելի տեքստը՝ 200-300 բառ:

Առաջադրանքներից 20-ը ընտրովի պատասխանով են (տրվում են 4 տարբերակներ, որոնցից միայն մեկն է ճիշտ), 15-ը՝ կարճ պատասխանով՝ տրված հարցի պատասխանի ինքնուրույն դուրսբերմամբ, 1-ը՝ շարադրանք: Ընտրովի և կարճ պատասխանով յուրաքանչյուր առաջադրանքի ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր: Թեստի առավելագույն միավորը 40 է:

Շարադրանքի գնահատման չափանիշները

Շարադրանքը պետք է պարունակի շուրջ 50-70 բառ: Շարադրանքը գնահատվում է առավելագույնը 5 միավորով առաջադրանքի պատասխանի (կարծիքի հայտնման, կերպարի բնութագրման, իրավիճակի վերլուծության և այլն) լիարժեք և գրագետ շարադրման դեպքում:

Շարադրանքը գնահատվում է երկու բաղադրիչով՝ 1. *բովանդակություն* (ընթերցածի վերաբերյալ արտահայտվելու կարողություն և մտքերը որպես կապակցված խոսք ձևակերպելու հմտություն), 2. *շարադրանքի որակ* (լեզվական գրագիտության նորմերի պահպանում): 1-ին բաղադրիչի համար տրվում է 3 միավոր, 2-րդի համարէ 2 միավոր: Յուրաքանչյուր բաղադրիչի համար տրվելիք առավելագույն միավորից միավորներ են հանվում ըստ ստորև ներկայացված սկզբունքների:

Առանց 2-րդ բաղադրիչի գնահատականը հաշվի առնելու առաջադրանքը գնահատվում է 0, եթե շարադրանքը՝

- տեքստի բովանդակության հետ առնչություն չունի,
- տեքստի կամ դրա մի հատվածի սոսկական վերարտադրությունն է,
- պարունակում է 30-ից պակաս բառ[1]:

Նախատեսված ծավալից պակաս, սակայն գնահատման շեմի սահմաններում գտնվող աշխատանքը (30-45 բառ) գնահատվում է տրվելիք բազային միավորի մի մասով՝ առավելագույնը 3 միավորով: Սահմանված ծավալից պետք է բացառել տեքստի նախադասությունների նույնությամբ մեջբերումները:

[1] Որպես շարադրանքի բառաքանակ չի հաշվարկվում տեքստից բառացիորեն մեջբերված նախադասությունների բառաքանակը:

Բովանդակություն (առավելագույն միավորը՝ 3)

Շարադրանքի բովանդակության (կարծիքի հայտնման, կերպարի բնութագրման, իրավիճակի վերլուծության և այլն) առումով աշակերտն ազատ է: Այս բաղադրիչի գնահատումը չի ենթադրում աշակերտի շարադրած բովանդակության և ստուգողի աշխարհայացքի համընկնում: Սակայն արտահայտված մտքերը չեն կարող հակասել տրված տեքստի բովանդակությանը կամ չբխել նրանից: Առավելագույն միավոր ստանալու համար աշակերտը պետք է ոչ միայն կարծիք հայտնի, այլև հիմնավորի այն: Հիմնավորումները նույնպես չեն կարող հակասել տրված տեքստի բովանդակությանը կամ չբխել նրանից: Առանց հիմնավորումների, միայն կարծիքների հայտնումից բաղկացած շարադրանքի այս բաղադրիչը կարող է գնահատվել առավելագույնը 1 միավորով:

Տրվելիք միավորից միավորներ են հանվում հետևյալ դեպքերում.

- միևնույն մտքի մեկից ավելի կրկնությունների համար՝ 1 միավոր,
- հայտնած կարծիքի և դրա հիմնավորման անհամապատասխանության յուրաքանչյուր դեպքի համար՝ 1-ական միավոր,
- հայտնած կարծիքի կամ դրա հիմնավորման՝ տեքստի հետ հակասության կամ տեքստից չբխելու յուրաքանչյուր դեպքի համար՝ 1-ական միավոր,
- իրար հաջորդող նախադասությունների միջև տրամաբանական կապի յուրաքանչյուր խախտման համար՝ 1-ական միավոր:

Շարադրանքի որակ (առավելագույն միավորը՝ 2)

Այս բաղադրիչն իր հերթին բաղկացած է 4 բաղադրիչներից՝ 1. *ուղղագրություն,* 2. *կետադրություն* , 3. *բառագործածություն,* 4. *քերականություն:*

Սրանցից յուրաքանչյուրից թույլ տրված սխալների համար միավորներ են հանվում՝ ըստ ստորև տրված կարգի:

1. Ուղղագրություն.
- 1-2 սխալ - 1 միավոր
- 3 և ավելի սխալ - 2 միավոր

2. Կետադրություն.
- 2-3 սխալ - 1 միավոր
- 4 և ավելի սխալ - 2 միավոր

3. Բառագործածություն (բառագործածության սխալ պետք է համարել նաև կապերի ու շաղկապների ոչ ճիշտ գործածությունը).
- 1-3 սխալ - 1 միավոր
- 4 և ավելի սխալ - 2 միավոր

4. Քերականություն (խնդրառություն, համաձայնություն, շարադասություն).

ԳԹԿ

- 1-3 սխալ - 1 միավոր
- 4 և ավելի սխալ - 2 միավոր

Ցուցումներ

- 2-րդ բաղադրիչից հանվող միավորների թիվը որոշ դեպքերում կարող է գերազանցել 2-ը, այսինքն՝ այս բաղադրիչի համար տրվելիք առավելագույն միավորը: Այդ դեպքում 2-րդ բաղադրիչը գնահատվում է 0, սակայն 1-ին բաղադրիչին տրվելիք միավորը մնում է **անխախտ**. 2-րդ բաղադրիչի սխալների համար 1-ին բաղադրիչին տրվելիք միավորներից միավոր **չի հանվում:**
- 1-ին բաղադրիչը համարվում է **գերակա**: Այս բաղադրիչին տրվող միավորները գումարվում են թեստի այլ առաջադրանքներից հավաքած միավորներին անգամ այն դեպքում, եթե 2-րդ բաղադրիչից աշակերտը որևէ միավոր չի հավաքում:
- Բացառիկ ինքնատիպ մտքի կամ պատկերավոր ձևակերպումների համար տրվելիք միավորներին կարող է ավելացվել ևս 1 միավոր, եթե տրվելիք միավորների թիվը չի գերազանցում 5-ը:
- Շարադրանքում 3 ջնջում կամ ուղղում ունենալու դեպքում հանվում է 1 միավոր, 3-ից ավելի յուրաքանչյուր ուղղման կամ ջնջման համար հանվում է մեկական միավոր:

Թեստի նմուշ

Կարդա՛ տեքստը և կատարի՛ր առաջադրանքները:

I

1. Ուրախ կլանչոցով շունը նետվեց դեպի կածան: 2. Մի պահ ես էլ ուրախացա ու վազեցի: 3. Խաշամը խշխշում էր խլացնելու չափ ուժգին ու չոր: 4. Այդ խշխշոցն էր, երբ վազում էի. իմ ականջներում միայն այդ խշխշոցն էր: 5. Խաշամը հասնում էր ծնկներիս: 6. Երբ կանգ էի առնում, լուռ լռություն էր. այդ լռության ու լույսի մեջ, հազիվ լսելի սվսվալով, օրորվում էին թափվող տերևները: 7. Սև մոշահավը կչկչոցով թռավ իմ ոտքերի տակից, և դարձյալ խոր լռություն էր: 8. Ինձ թվում էր, թե ես լսում եմ անտառի խաղաղ շնչառությունը:

II

1. Ես հետ նայեցի: 2. Իմ հորեղբայրը ծնկել էր աղբյուրի մոտ և ինչ-որ բան էր անում: 3. Մի քիչ էլ խորանալով անտառի մեջ՝ ես դարձյալ հետ նայեցի: 4. Ինձ թվաց, թե հորեղբայրն արդեն գնացել է, բայց չէր գնացել, դեռ կռացած էր աղբյուրի վրա և դժվար էր նկատվում, քանի որ հողագույն էին և՛ ճանապարհը, և՛ նրա հագուստը: 5. Ես նստեցի ծառի հետևը և որպեսզի ինքս ինձ խաբեմ, թե որևէ բան եմ անում, բացեցի սխրագործությունների մասին գիրքը:

III

1. Գիրքը, սակայն, ես չէի կարդում. գրքի վրա կռացած՝ ես սպասում էի, թե իմ հորեղբայրը երբ է հեռանալու վերադարձի ճանապարհից: 2. Նա հիմա նստել էր աղբյուրի մոտ, ծխում էր, և ինչպես ինձ էր թվում, նայում էր անտառի մեջ ինձ: 3. «Օրինակ՝ ինչո՞ւ ես էդպես պարապ նստել,- մտածեցի ես,- խոզ գտնելը ձեր գործն է, գիրք կարդալը՝ իմ. ես ահա կարդում եմ իմ գիրքը, իսկ դուք պարապ նստել եք»: 4. Եվ որպեսզի ինքս ինձ ավելի խաբեմ, ես ականջներս փակեցի մատներով ու նայեցի միայն գրքին: 5. Իբր թե կարդում եմ, իբր թե միայն կարդում եմ:

IV

1. Հեռավոր թույլ խշխշոց էր լսվում: 2. Ես հայացքս գրքից բարձրացրի և ականջներս բացեցի, խշխշոցը շատ ուժեղ էր և շատ մոտիկ: 3. Բայց ես չհասցրի վախենալ, որովհետև նույն պահին էլ տեսա մեր շանը: 4. Նա թափով կպավ ինձ, ցատկեց, նորից ցատկեց, վնգստաց ու կանչեց դեպի Պարզ բացատ: 5. Որպեսզի նա նորից չկլանչի ու խշխշացնի, ես իմ հացի կեսը տվեցի նրան:

1 Տեքստի I հատվածում դեպքը ո՞ր ***եղանակի*** բայաձևերի միջոցով է պատմվում:
1) սահմանական
2) ըղձական
3) ենթադրական
4) հարկադրական

2 Ո՞ր միտքն է ***հակասում*** տեքստի բովանդակությանը:
1) Գործողությունները տեղի են ունենում աշնանային անտառում:
2) Տղան կարծում էր, թե հորեղբայրը հեռվից իրեն էր հետևում:
3) Տղան մեծ հետաքրքրությամբ կարդում է քաջագործությունների մասին գիրքը:
4) Հորեղբայրը դժվար էր նկատվում, որովհետև նրա հագուստի գույները ծուլվում էին շրջապատի գույներին:

3 Տեքստում ո՞ր ձայնի մասին խոսք ***չկա:***
1) շան վնգստոց
2) մոշահավի կչկչոց
3) աղբյուրի ջրի քչքչոց
4) չոր տերևների խշխշոց

4 Ո՞ր բառում հնչյունափոխություն ***չկա:***
1) խլացնել
2) շնչառություն
3) աղբյուր
4) լռություն

5 Ո՞ր բառն է ***սխալ*** գրված:
1) հայացք
2) լվածք
3) գնացք
4) նայվածք

6 Ո՞ր բառն է ***սխալ*** գրված:
1) որևէ
2) որևիցե
3) միջօրէ
4) մանրէ

7 Սխրագործություն բառի վանկատման ո՞ր տարբերակն է ***ճիշտ:***
1) սըխ-րա-գոր-ծու-թյուն
2) սըխր-ա-գոր-ծու-թյուն
3) սըխ-րա-գործ-ություն
4) սըխ-րա-գործ-ութ-յուն

8 Տրված բառերից ո՞րն ***ածանցավոր չէ:***
1) կլանչոց
2) լսելի
3) լռություն
4) խաղաղ

9 Ո՞ր դեպքում է գոյականի հոլովը ***սխալ*** նշված:
1) հորեղբայրը - ուղղական
2) ճանապարհից - բացառական
3) մատներով - գործիական
4) անտառի - ներգոյական

10 Ո՞ր բառն է ենթարկվում ***արտաքին հոլովման:***
1) հորեղբայր
2) լռություն
3) շուն
4) ծունկ

11 Ո՞ր բայաձևն է ***ապառնի*** ժամանակ ցույց տալիս:
1) լսվում էր
2) բարձրացրի
3) կպավ
4) չկլանչի

12 Ո՞ր բայաձևը ***չ*** բայածանց ունի:
1) կպավ
2) կլանչի
3) կանչեց
4) ցատկեց

13 Ո՞ր կապակցության մեջ կապ ***չկա:***
1) դեպի կածան
2) խլացնելու չափ
3) այդ խշխշոցը
4) լույսի մեջ

14 Նախադասության անդամներից որի՞ ձևաբանական վերլուծության մեջ ***սխալ*** կա:
Ես նստեցի ծառի հետևը և, որպեսզի ինքս ինձ խաբեմ, թե որևէ բան եմ անում, բացեցի սխրագործությունների մասին գիրքը:
1) ***նստեցի*** - I դեմքի բայ, անցյալ կատարյալ
2) ***խաբեմ*** - I դեմքի բայ, ըղձական ապառնի
3) ***որևէ*** - ածական, դրական աստիճան
4) **որպեսզի** - ստորադասական շաղկապ

15 Ո՞ր նախադասությունն է կազմությամբ ***պարզ:***
1) I. 2
2) II. 2
3) II. 3
4) III. 5

16 Ո՞ր նախադասությունն է ***բարդ համադասական:***
1) I. 8
2) II. 4
3) III. 4
4) IV. 2

17 III հատվածի ո՞ր նախադասության մեջ ենթակայի զեղչում ***չկա:***
1) 1-ին
2) 2-րդ
3) 3-րդ
4) 4-րդ

18 III հատվածի ո՞ր նախադասության մեջ ստորոգյալի զեղչում ***կա:***
1) 1-ին
2) 2-րդ
3) 3-րդ
4) 4-րդ

19 Ո՞րը որոշիչ-որոշյալի կապակցություն ***չէ:***
1) ուրախ կլանչոց
2) լսելի սվսվալ
3) խաղաղ շնչառություն
4) թափվող տերևներ

20 Նախադասության անդամներից որի՞ շարահյուսական վերլուծության մեջ ***սխալ կա:***
Ես հայացքս գրքից բարձրացրի և ականջներս բացեցի, խշխշոցը շատ ուժեղ էր և շատ մոտիկ:
1) ***հայացքս*** - ուղիղ խնդիր
2) ***ականջներս*** - ենթակա
3) ***գրքից*** - անջատման անուղղակի խնդիր
4) ***ուժեղ էր*** - բաղադրյալ ստորոգյալ

21 I հատվածից դո՛ւրս գրիր **արահետ** բառի հոմանիշը:
Պատասխան՝_____

22 Գրի՛ր **ծխում էր** բայաձևի անորոշ դերբայը:
Պատասխան՝_____

23 Տեքստի ո՞ր բառն է նշանակում **«ծառերից թափված աշնան տերևները»**:
Պատասխան՝_____

24 I հատվածից դո՛ւրս գրիր այն բառը, որը փոխաբերաբար նշանակում է **«ոչնչով չխանգարվող, անվրդով»**, նաև՝ **«տևական»**:
Պատասխան՝_____

25 I հատվածից դո՛ւրս գրիր **նորից** բառի հոմանիշը:
Պատասխան՝_____

26 I հատվածից դո՛ւրս գրիր **արմատ+հոդակապ+արմատ** կազմությամբ բառը:
Պատասխան՝_____

27 I հատվածի 7-րդ նախադասության մեջ **և**-ից առաջ ինչո՞ւ է ստորակետ դրվել:
Պատասխան՝_____

28 II հատվածից դո՛ւրս գրիր **արմատ+արմատ** կազմությամբ բառը (առանց հոդակապի):
Պատասխան՝_____

29 II հատվածից դո՛ւրս գրիր դիմորոշ հոդով դերանունը:
Պատասխան՝_____

30 III հատվածից դո՛ւրս գրիր խոսակցական բառապաշարին պատկանող բառը:
Պատասխան՝_____

31 IV հատվածից դո՛ւրս գրիր երկու բառ, որոնք հոմանիշ են:
Պատասխան՝_____

32 IV հատվածից դո՛ւրս գրիր **երկնչել** բայի հոմանիշը:
Պատասխան՝_____

33 IV հատվածից դո՛ւրս գրիր երկու բառ, որոնք հականիշ են:
Պատասխան՝_____

34 Գրի՛ր **բարձրացնել** բայի հրամայական եղանակի եզակիի ձևը:
Պատասխան՝_____

35 **Լույս** արմատով մեկ բարդ բա՛ռ կազմիր:
Պատասխան՝_____

36 Ի՞նչ կարծիք կազմեցիր տղայի մասին, ինչո՞ւ: *Մտքերդ շարադրի՛ր 50-70 բառով:*
_____
_____
_____
_____
_____
_____:

ԱՌԱՋԱՄԱՐՏԻԿՆԵՐ

«ՔՈ ԱՆՈՒՆԸ ՈՍԿԵ ՏԱՌԵՐՈՎ Է ԳՐՎԵԼՈՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ»

(Սլավիկ Առուշանյանի ծննդյան 70-ամյակի առթիվ)

Սլավիկ ԱՌՈՒՇԱՆՅԱՆԸ ոչ մի այլ Լեռնային Ղարաբաղում, այլև հայ իրականության մեջ առաջիններից է, ովքեր դրել են մեր ազգային-ազատագրական պայքարի նոր փուլի սկիզբը, կանգնած են եղել Արցախյան շարժման ակունքներում: Նրա կյանքը նախապատրաստություն էր այդ պայքարին, վաղ տարիքում գուցեև լիովին չգիտակցված: Մորական տատի պատմածները Շուշիի հայերի ջարդի, Ղայբալիշենի կոտորածի մասին փոթորկել են պատանու հոգին, և ծնվել են «ինչու»-ները:

- Ովքե՞ր են հետք թողել Ձեր աշխարհայացքի ձևավորման վրա:

- Մեր նախնիները՝ պատմական առումով, բայց կենդանի շփման առումով ինձ վրա խորապես ազդել է մորս մայրը, որն ապրում էր Կրկժանում: Այն ժամանակներում շատերը վախենում էին խոսել ազգամիջյան հարցերից, ծնողներս նույնպես զգուշանում էին: Երբ մեծ մաման ինձ պատմեց ու ցույց տվեց ժայռերը, որոնցից ցած են նետել հայերին, մենակ ինքս գնացի՝ ապացույցներ որոնելու: Ու մի ժայռի տակ տեսա մարդու ոսկորներ, նույնիսկ գանգոսկր: Հիսունական թվականներին էր:

Ինձ ոգևորել է 18-րդ դարի մեր ազգային-ազատագրական պայքարը, Դավիթ Բեկի պայքարը թուրքերի դեմ: Հասկացա, որ փոքրաթիվ, բայց նվիրյալ մարդկանց միջոցով հնարավոր է հաջողությունների հասնել: Երբ 60-ական թվականներին մտավորականությունը ղարաբաղյան հարցը բարձրացրեց, մեր ուսուցիչներից Վերդի Խաչատրյանն առաջին անգամ, թեկուզ երկչոտությամբ, շոշափեց թեման դասին: Ու հետաքրքրությունս ավելի մեծացավ: Երբ սկսեցի գիտակցել, թե ինչ է կատարվում, սկսեցի ինքնուրույն ուսումնասիրել հարցը, համալսարանում ուսանելու տարիներին՝ ավելի գիտականորեն և եկա այն համոզման, որ եթե ոչինչ չձեռնարկենք, ապա Արցախը Նախիջևանի նման խաղաղ ձևով կորցնելու ենք:

Հայրական գյուղը Դահրավն է: Ծնողները, սակայն, աշխատում էին հարևան Պատարայի դպրոցում, այդ գյուղում էլ բնակվում էին: 1949թ. հունվարի 1-ին ծնվում է Առուշ և Ռոզա Առուշանյանների առաջնեկը՝ Սլավիկը:

- Ո՞րն է Ձեր ծննդավայրը՝ Դահրա՞վը, թե՞ Պատարան:

- Յուրատեսակ պատասխան ունեմ այդ հարցին: Երբ մայրս ֆիզարձակուրդ է վերցրել, տեղափոխվել է Դահրավ, և այստեղ էլ լույս աշխարհ եմ եկել: Սակայն իմ ծննդավայրը համարում եմ Պատարան: Երեք ամսական էի, երբ վերադարձանք Պատարա: Իմ պատանեկությունն անցել է այս գյուղում: Հենց Պատարայում եմ ձևավորվել որպես հայրենասեր մարդ. նրա տարածքը հարուստ է պատմական հուշարձաններով: Արյունով Դահրավի ժառանգորդ եմ, և Դահրավն էլ իմ կյանքում կարևոր դեր է կատարել, քանի որ բազմաթիվ նշանավոր մարդիկ է տվել:

Ընտանիքում հինգ երեխա էին: Մինչև մոր՝ դպրոցից վերադառնալը նրանց խնամել, տան ու դրսի գործերն արել է հորական տատը:

- Այաս ընդամենը տառաճանաչ էր, բայց բազմաթիվ հայրենասիրական քառյակներ գիտեր, նաև՝ Ասկերանի բերդի մասին: Նրա հայրը սովորել է Թիֆլիսի Ներսիսյան դպրոցում, եղել է Ռաֆֆու ընկերը: Ռաֆֆին Դահրավ էր եկել, մինչև օրս նրա հիշատակն այստեղ պահպանվում է:

Հարցից կարծես շեղվեցինք:

Ծնողներս շատ չէին ոգևորված, որ երեք եղբայրներով ներգրավվել ենք Շարժման մեջ: Պատերազմի նախօրյակին մայրս խնդրեց, որ մեզնից գոնե մեկը մի քիչ հեռու մնա, որպեսզի մի բան պատահելու դեպքում երեխաներին տիրություն անի: Հույսներս մեր փոքր եղբայրն էր, որ չի խառնվի, բայց պարզվեց, որ նա մեզնից ոչ պակաս հայրենասեր է և նույնպես ամբողջությամբ պայքարի մեջ է:

Ս. Առուշանյանի կյանքը հարթ չի ընթացել: Խորհրդային բանակում ծառայելուց հետո է ընդունվել Երևանի պետհամալսարանի պատմության ֆակուլտետ: Ե՛վ սովորել է, և՛ աշխատել. արդեն ընտանիք էր կազմել:

- Հազիվ հասցնում էի: Երբ ուսումս ավարտեցի, ցանկություն հայտնեցի վերադառնալ Ղարաբաղ: Պատմության ֆակուլտետի դեկանը, որն արցախցի էր, ուրիշ բան առաջարկեց. «Համաձայնվիր՝ քեզ ուղարկենք Սարդարապատ: Մի տարի հետո թանգարանի տնօրենը թոշակի է անցնելու, իսկ դու կուսակցական ես, նրա պաշտոնը կզբաղեցնես»: Ես իմը պնդեցի: Որ շատ համառեցի՝ չէ ու չէ, գնում եմ, վրդովվեց. «Գնում ես ի՞նչ անես: Ղարաբաղն արդեն չկա, այսպիսի լավ հեռանկարից մի՛ հրաժարվիր»: «Եթե ոչ մի բան անել չկարողանամ, չորս հոգով հայերի քանակն ավելացնելու եմ, որ գնամ»,- այս որ լսեց՝ հանձնվեց:

- Դուք բազմաթիվ արհեստների եք տիրապետում: Կյա՞նքն է ստիպել:

- Ոչ, ինքս հետաքրքրություն ունեի: Դեռ մանկությունից երազում էի ինժեներ դառնալ, բայց հետագայում, տեսնելով Ղարաբաղում տիրող դրությունը, որոշեցի իրավաբանական կրթություն ստանալ՝ միամտորեն ենթադրելով, թե իրավաբանը կարող է իրավիճակ փոխել: Ընկերս, որ դասախոս էր աշխատում, խորհուրդ տվեց իզուր ժամանակ չկորցնել, իրավաբանականից ձեռք քաշել: Պատմության ֆակուլտետում սովորելու տարիները մեծ նշանակություն ունեցան ինձ համար: Ես արդեն պատմական փաստերով ու տեսականորեն գիտեի, թե ինչ պիտի անել, ինչպես պիտի գործել՝ նպատակին հասնելու համար:

Ս. Առուշանյանն ընտանիքով վերադարձել է Ղարաբաղ: Ասկերանի շրջանը նոր էր ստեղծվել, և նա աշխատանքի է ընդունվել կուսակցության շրջկոմում:

- Երբ 1985 թվականին Գորբաչովն իշխանության եկավ, մեր հարցը լուծելու նոր հույս արթնացավ: Սկզբնական շրջանում գլխավորապես Իգոր Մուրադյանն էր գործը ղեկավարում: Հետագայում, տեսնելով, որ նրա արածի արդյունքն այն չէ, նախաձեռնություններ առաջ քաշեցինք:

- Եղել եք Ասկերանի նախաձեռնող խմբի ղեկավարը: Ի՞նչ է արել խումբը, որ ուրիշ շրջաններում չեն արել: Ի՞նչ է արել պայքարը համաժողովրդական դարձնելու համար:

- Աշխարհն ընդունում է, որ Շարժումը ոտքի է կանգնել 1988-ի փետրվարին: Փետրվարի սկզբից մինչև «Կռունկ»-ի ստեղծումը բոլոր հիմնական նախաձեռնությունների աղբյուրը եղել է Ասկերանը:

Մինչև փետրվարի1-ը նամակներ էինք ուղարկում ԽՄԿԿ Կենտկոմ, պատվիրակություններ էին գնում Մոսկվա: Հունվարի վերջին հասկացա, որ Կենտկոմը չի ցանկանում լուծել մեր հարցը, ձգձգում է, և նոր նախաձեռնություն առաջ քաշեցինք՝ Շարժման ուղղությունը 180 աստիճանով փոխելով: Վերևներին դիմելն անիմաստ էր, ուստի որոշեցինք հենվել ժողովրդի վրա: Ձանգվածներին ոտքի կանգնեցնելու առաջին քայլը եղավ ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու մասին հռչակագիրը կոլեկտիվներում, ասել է թե՝ համաժողովրդական քննարկման դնելը: Այդ մասին որոշում էր ընդունվել Նորագյուղի փետրվարի 1-ի գաղտնի ժողովում: Այդ գաղափարն սկսեցին իրագործել և մյուս շրջաններում, Ստեփանակերտում: Այդ հարցում մեզ օգնեցին Ի. Մուրադյանն ու Վաչե Սարուխանյանը: Դրանից հետո միայն Ադրբեջանը սկսեց գործողություններ ձեռնարկել՝ Շարժման ընթացքը կասեցնելու համար: Առաջին կազմակերպված հակահարվածը Բաքվի էմիսարներին Ասկերանում էր: Առաջին դրոշակները, առաջին քաղաքական կարգախոսը բարձրացվել են Ասկերանում: Այսօր ոմանք ուրիշ բան են ասում, բայց 88-ի փետրվարի 12-ին ոչ մի տեղ ո՛չ կարգախոս, ո՛չ դրոշ չի բարձրացվել: Մեր մյուս կարևոր նախաձեռնությունը. հենց Ասկերանում է որոշվել փետրվարի 13-ին Ստեփանակերտում հանրահավաք անցկացնել և պահանջել մարզը միացնել Հայաստանին: Նույնիսկ փետրվարի 13-ի բազմահազարանոց ցույցից հետո Հայաստանի իշխանությունները, լրատվամիջոցները շարունակում էին լռություն պահպանել: Եվ մեր խմբի նախաձեռնությամբ Ասկերանի շրջանից պատվիրակություն ուղարկվեց Երևան, որպեսզի մայր հայրենիքը տեր կանգնի մեզ: Այստեղ շահագրգիռ ուժերի կողմից կազմակերպվեց Արցախի հարցով առաջին հանրահավաքը, որի մասնակիցները Հայաստանի կոմկուսի Կենտկոմից պահանջում էին վերջ տալ հանցավոր անտարբերությանը: Սլավիկ Միրզոյանը հանրահավաքի ժամանակ ներկայացրեց ակտիվիստների՝ ՀԽՍՀ իշխանություններին և հայ ժողովրդին ուղղված կոչը: Պատվիրակության այցը, որը, Սիլվա Կապուտիկյանի բնութագրմամբ, պատմական էր, մեծապես նպաստեց, որ Հայաստանի մեր հայրենակիցները ոտքի կանգնեն: Փետրվարի 22-ին մեր նախաձեռնող խումբն առաջինը հասկացավ, որ հարցը խաղաղ ձևով լուծել հնարավոր չէ, և նույն օրը Աղդամից արշաված բազմահազարանոց հրոսակախմբի հետ ընդհարման վայրում հանձնարարվեց ստեղծել առաջին մարտական ջոկատները:

Կամո Նարիմանյան, *1988թ. Կարմիր գյուղի կոլվարչության նախագահ.*

- Շարժմանը մասնակցելու համար ոչ թե պաշտոններ էին խոստանում, այլ հետապնդում էին: Եվ միայն արտակարգ խիզախներն էին կյանքը չխնայելով նվիրվում պայքարին: Նվիրյալներից մեկը Ս. Առուշանյանն էր: Նրա շուրջն էին համախմբված շրջանի լավագույն տղաները՝ Սլավիկ Միրզոյանը, Կոմիտաս Դանիելյանը, Մարատ Հակոբջանյանը, Ալյոշա Գաբրիելյանը... Բացարձակապես իր մասին չէր մտածում: Մեզ էր զգուշացնում. «Եթե հանկարծ ձեզ բռնեն, կասեք՝ ոչնչից տեղյակ չեք, որ ես եմ կազմակերպիչը: Մաքուր հոգի ունի, անշահախնդիր է, անշահախնդիր՝ բոլոր գործերում: Հպարտանում եմ, որ նրա մոտիկ ընկերների մեջ եղել ու կամ նաև ես: Նա Շարժման առանցքային դեմքերից է, ինձ համար՝ ազգի իսկական հերոս: Չի արել նրա համար, որ գնահատվի. հայրենիքին ծառայելը, անկախությունը, ազատությունը այդ մարդու էությունն է: Նրա կերպարը իմ կյանքում միշտ ինձ ուղեկցում է: Ես էլ, իմ զավակներն էլ ձգտում ենք, եթե հայրենասեր ենք, լինենք Սլավիկի նման:

* * *

- Ձեր տիկինը՝ Մելանյան, չի՞ փորձել հետ պահել Ձեր ընտրած վտանգավոր ուղուց:

- Երբեք նրան չեմ ասել՝ քեզ սիրում եմ: Մինչև ամուսնանալն ասել եմ՝ հնարավոր է դժբախտություն պատահի: Ինչո՞ւ՝ հարցրել է: Որովհետև ես ամբողջությամբ նվիրվելու եմ Արցախի փրկության գործին՝ ասել եմ: Մելանյան պատրաստ էր ինձ հետ կրելու բոլոր դժվարությունները: Եվ, իրոք, երբեք չի տրտնջացել:

Բազմաթիվ անգամներ մոտս և՛ արկեր են պայթել, և՛ փամփուշտներ են ոտքերիս մոտով, կողքովս թռել-անցել, բայց ինձ չեն կպել, բախտի բերումով ողջ եմ մնացել:

Լաուրա Մարտիրոսյանը 1988-ին Խնապատի դպրոցում պատմություն էր դասավանդում: Նա Ասկերանի շրջանի ներկայացուցիչներից կազմված պատվիրակության կազմում մեկնել է Երևան:

- Ս. Առուշանյանը գաղափարի մարդ է: Իր գիտելիքներով, պատմական մտածողությամբ ու ազգանվեր գործերով մեծ թափ է հաղորդել Շարժմանը: Երբ ինձ հայտնեցին, որ պատվիրակության կազմում պիտի մեկնեմ Երևան, անակնկալի եկա, բայց քանի որ Սլավիկին անվերապահորեն վստահում էի, չտատանվեցի: Նախաձեռնող խմբի որոշման ճիշտ լինելու մեջ կրկին համոզվեցի հենց հայոց մայրաքաղաքում՝ տեսնելով, թե Թատերական հրապարակում հավաքված ժողովուրդն ինչպես է ոգևորվել ու խանդավառվել մեր ներկայությամբ ու խոսքով, ժողովուրդ, որը մեր ցավը ազգինը համարեց և երդվեց նեցուկ լինել մեզ ու պաշտպանել ազատ ապրելու մեր իրավունքը:

* * *

- Ձեր կատարածը երբեմն շրջանցում են: Մտավախություն չունե՞ք, որ Ձեր կրավորական պահվածքը կարող է Ձեր արածի մոռացման պատճառ դառնալ:

- Հիմա կարող է թվալ, թե մեր արածը կարող է մոռացվել: Շարժման այդ կարևոր իրադարձությունները շատ լավ պատկերել է Կ. Դանիելյանը «Արցախը՝ չսանձած նժույգ» գրքում: Ես ինչ եղել է, այնպես էլ ասում եմ, ուղղակի խեղաթյուրում են:

- Ձեր հուշերը ե՞րբ եք տպագրելու:

- Որոշ բաներ գրել եմ, բայց դեռ մի կարգին չեմ զբաղվել: Տրամադրություն չկա: Շատ դժվար է գրելը, մանավանդ որ մեր ընկերների մի մասն արդեն չկա, և այսօր քչերին է հետաքրքրում, թե ինչպես է Շարժումը ոտքի կանգնել: Այսօր կարծես պահանջված է Շարժման թանգարան ունենալը: Բայց ոչ մեկին չի հետաքրքրում ցուցանմուշներ հավաքելը, թանգարան ստեղծելը, քանի որ շատերի միտքն այլ բաներով է զբաղված: Դրա համար եմ ասում, որ քչերին է հետաքրքրում:

* * *

Ալյոշա Գաբրիելյան, Շարժման՝ Ասկերանի շրջանի նախաձեռնող խմբի անդամ.

- Սլավիկը գաղափարներ էր առաջարկում, քննարկում էինք միասին: Վերջնական նպատակը Շարժման գաղափարը ժողովրդին հասցնելն էր: Սլավիկի նախաձեռնությամբ փետրվարին անցկացվող հաշվետու, հաշվետու-ընտրական ժողովներում հռչակագիրը քննարկման դրվեց ու արժանացավ հավանության: Դրանից հետո էր, որ Շարժման ալիքը հզորացավ այն աստիճան, որ Ադրբեջանը միջամտեց ու փորձեց ակտիվիստներին մեկուսացնել ժողովրդից: Եթե չլիներ համաժողովրդական զարթոնքը, ապա հալածանքներ կսկսվեին, և Շարժումը կմարեր:

ՀՈՒՇԻ ՊԱՏԱՌԻԿ

ԱՆՄՈՌԱՑ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Լրացավ հայ մեծ բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանի ծննդյան 100-ամյակը: Հայուհի, որի կյանքը մաքառում էր, պայքար, որոնումներ ու անմնացորդ նվիրում Հայաստան աշխարհին:

Հուշերս տարան ու հասցրին 30 տարի առաջ կայացած հանդիպմանը՝ կարճ, բայց հագեցած:

Հայաստանի բարձրադիր «Բյուրական» ճամբարում հանգստի հրավեր ստացանք: Շատ արագ Ասկերանի և Պատարայի միջնակարգ դպրոցների աշակերտներից ձևավորվեց խումբը: Ճամբարը տեղակայված էր Արագածի լանջին՝ Բյուրականի աստղադիտարանից որոշակի բարձրության վրա: Ճամբարի պետ Հարություն Հարությունյանը (մասնագիտությամբ՝ բժիշկ), և նրա տիկին Ռոզան ընդգծված ջերմությամբ շրջապատեցին Արցախից ժամանածներիս: Այստեղ երկարատև հանգիստն էին անցկացնում Լենինականի երկրաշարժից տուժած երեխաներ, որոնք բժիշկ Հարությունի օգնությամբ հաղթահարում էին հոգեկան ապրումները: Բժիշկը ապաստան էր տվել նաև Կիրովաբադից եկած հայկական մեծ գերդաստանի, ծնողազուրկ ու սակավարող ընտանիքների երեխաների:

Սա լոկ խոսքեր չեն, այլ իրողություն, երբ մռայլ ու մտախոհ բժիշկը ձգտում էր ուրախություն պարգևել երեխաներին, մեծերին: Անընդհատ խորհրդակցում էր մեզ՝ դաստիարակներիս հետ, ինչպես լավագույնս կազմակերպի երեխաների հանգիստը: Այդ ցանկը շատ բազմաբովանդակ էր... էքսկուրսիա Սևանա լիճ, Երևան, Ուջան, Աշտարակի ձոր, Բյուրականի աստղադիտարան, Մատենադարան, Ամբերդի ամրոց: Հարուստ սնունդը, առատ մրգեղենը, բանջարեղենը անպակաս էին սեղաններից:

Ճամբարում հանդիպեցինք Կաբարդինա-Բալկարիայից եկած մի կնոջ, որը 16 տարեկան աղջկան՝ Անժելիկային, բուժման համար բերել էր Հայաստան: Բժիշկներն անզոր էին օգնել աղջկան, և մայրը, թերթերից տեղեկանալով բժշկի մասին, որը բուժումներ էր կատարում խոտաբույսերով, ծաղիկներով, դիմել էր նրան: 10 օրվա ընթացքում առաջընթացն ակնհայտ էր, և մայրն աղոթում էր բժկի համար:

Բժիշկ Հարությունյանը պրպտումների մեջ էր, հազվադեպ էր լինում ճամբարում: Հերթական հանդիպմանը ներկայացրեց անելիքները:

Որոշել էր ճամբար հրավիրել բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանին, իսկ ավարտից հետո բարձրանալ Արագածի գագաթը՝ Քարե լիճը: Մտավախություն ուներ՝ կկարողանա՞նք ըստ պատշաճի ընդունել մեծ բանաստեղծուհուն:

Դաստիարակներս գործի անցանք: Մեզ միացան Արցախից ժամանած երկրորդ և Լենինականի խմբերի ղեկավարները՝ Ժիրայր Աթայանը, Սուսաննա Սևումյանը, Անահիտ Առնաուտյանը, Աշոտ Ներսիսյանը: Ծրագիրը հավանության արժանացավ: Եկավ հանդիպման օրը...

Ճամբարի պետի հետ իջնելով մեքենայից՝ բանաստեղծուհին գրկաբաց ընդունեց երեխաներին, համբուրեց մեկիկ-մեկիկ: Դաշտային ծաղիկների հոտից լիացած՝ դիտեց ասֆալտին կատարած նկարները, խրախուսեց երեխաներին: Խմբվելով շուրջը՝ լսում էինք նրա խորունկ խոսքը, պատգամները կյանքի, հայրենիքի, մարդկային անկեղծ հարաբերությունների, խաղաղության, սիրո մասին: Համերգային ծրագիրը, որը պատրաստել էին երեխաները, ընդունեց ջերմությամբ ու հպարտությամբ:

Իսկ երբ Պատարայի միջնակարգ դպրոցի աշակերտուհի Անահիտ Ղահրամանյանը կատարեց նրա խոսքերով գրված երգը՝ զուգակցելով պարով, բանաստեղծուհին հուզվեց և երկար ժամանակ Անահիտին բաց չէր թողնում: Օրը սահում էր ու սպառվում, սակայն հոգնածություն չէր զգում: Ընդհակառակը, բավականություն էր ստացել քայլելուց, զրուցելուց: Իսկ զրույցի թեման Արցախն էր, նրա ապագան: Խոսում էր հուզմունքով, ոգևորվածությամբ, լավատեսությամբ:

Երեկոյան տողանն ավարտվեց: Երեխաների հետ ընթրեց: Ասում էր. «Մի տեսակ տրամադրություն չունեի, բայց հիմա, Ձեզ հանդիպելով, Երևան վերադառնալ չեմ ուզում: Դուք ինձ հմայել եք»:

Մեր ուժերով տորթ-գիրք էինք պատրաստել, ինչը մատուցեցինք թեյի սեղանի շուրջ՝ Արցախից եկած դաստիարակներս: Չեմ հիշում, թե ով էր այդ պահին նկարել, բայց երբ մի քանի ամիս անց տիկին Ռոզան նկարները և նվերներն ուղարկեց մեզ, այն ժամանակ գնահատեցի պահի, հանդիպման արժեքը: Ինչպես կերգեր Վախթանգ Կիկաբիձեն, «Мои годы-мои богатства»:

Նկարում՝ դաստիարակ Ժիրայր Աթայանը (Ավետարանոցի միջնակարգ դպրոց), բժիշկ Հարությունյանը, տողերիս հեղինակը, բանաստեղծուհին, Մարիետա Բալասանյանը (Ասկերան), տիկին Ռոզան: Հիմնականում խոսում էր բանաստեղծուհին՝ փիլիսոփայությամբ, խորունկ ու անհաս: Լսում էինք նրան կախարդվածի պես: Լուսինը, աստղերը գերել էին մեզ, բաժանվելը դժվարացավ: Ուրախության արցունքներով նվիրեց իր գրքերից: Արդյո՞ք նորից կհանդիպենք... Բժիշկ Հարությունը կատարեց իր խոստումը՝ դաստիարակներին տարավ Արագածի գագաթ: Գիշերը: Ասում էր. «Գիշերվա խորհուրդն ուրիշ է»:

Քարի լճի սառը ջուրը, զով քամին, գիշերային լիալուսինը, որը կարծես կախվել էր լճի վրա, մեզ տարան կախարդական աշխարհ:

Տիկին Ռոզան մեղմիկ երգում էր. «Տեսնեմ Անին ու նոր մեռնեմ...»: Չէ, այս զարմանահրաշ երկրում ամեն ինչ ուրիշ է: Կարո՞ղ է, երբևէ կրկնվել այդ հրաշքը: Զարմանքից ու գեղեցկությունից ուշքի չէինք գալիս: Ավարտվեց մի գեղեցիկ հեքիաթ: Օրերն անցան աննկատ, ժամանակն էր վերադառնալու, Արցախն էր մեզ կանչում:

Շատ հուզիչ էր բաժանումը: Երեխաների մտերմությունը խորացել էր: Երկար ժամանակ նամակներ էին գրում, կապ պահում: Վերջին բացիկը ստացել եմ Սասունիկ ավանում ապրող երկու քույրերից: Խնդրում էին նորից հանդիպել:

Հետո եղավ այն, ինչին չէինք սպասում... Գոյամարտ...

Խառնվեց ամեն ինչ, տեղահանություն, փախստականներ...

Ժամանակավոր տեղափոխվել էինք Նորագյուղ, բարեկամներով, հարևաններով, տեղավորվել՝ ով ինչպես կարող էր: Շփոթված, ընկճված, բայց վաղվա օրվա նկատմամբ հույսով լցված, սպասում էինք իրադարձությունների ընթացքին: Իսկ այդ վաղը Շուշիի ազատագրումն էր, ինչն ընդունեցինք լացով, ուրախությամբ ու ցնծությամբ:

Օրերից մի օր Հակոբ Ղահրամանյանի ուղեկցությամբ (Ասկերանի ֆինբաժնի պետ) մեր բակն է մտնում մի զինվորական: Նայում էր ու ժպտում: Զարմանում էր, որ չճանաչեցի: Երկար ժամանակ չէր ներկայանում, ուղղակի ասում էր, որ մասնակցում է պաշտպանությանը, մարտերին, հետաքրքրվում էր, թե ինչպես է բնակչությունը դիմակայում դժվարություններին...

Բժիշկն էր: Լինելով Ասկերանում՝ հետաքրքրվել էր մեր խմբով, և Հ.Ղահրամանյանը նրան օգնել էր:

Հիշեցի նրա, տիկին Սիլվայի խոսքերը... «Արդյո՞ք նորից կհանդիպենք»:

Հարցրեց խմբի երեխաներից, օրվա դժվարություններից՝ ոտքի վրա, ժամանակ չուներ, չկարողացանք մի կարգին հյուրասիրել: Ահեղ ժամանակներ էին...

1993 թվականին Հայաստանի կանաչների միության հրավերով արցախցի պատգամավորների հետ մասնակցեցի միության համագումարին: Երկրորդ օրն օրակարգը ներկայացնելուց պարզվեց, որ նիստի աշխատանքներին մասնակցելու էր Սիլվա Կապուտիկյանը:

...Արդյո՞ք նորից կհանդիպենք... Ընդմիջմանը, մի կերպ մոտենալով, ողջագուրվեցինք, ու ասաց. «Տեսա՞ր, որ հանդիպեցինք»: Քանի որ շրջապատված էր լրագրողներով, հնարավոր չէր երկար խոսել, հրաժեշտ տվեց և շուռ գալով դեպի լրագրողը, որը հարց էր տվել Կանաչների միության գործունեության մասին, ասաց. «Երբ նրանց տեսնում եմ, ես էլ եմ կանաչում»:

Սվետլանա ԱՍՐՅԱՆ
ք. Ասկերան

Ս. Առուշանյանի մտքի թռիչքը պիտի ունենայիր, որ հնարը գտնեիր: Ելքը, այո, ժողովրդին հրապարակ դուրս բերելն էր: Դա եղավ փետրվարի 12-ին, երբ Բաքուն փորձեց շրջանի կուսակցական-տնտեսական ակտիվի ժողովում, շրջկոմի բյուրոյում ճնշում գործադրելով ընդունել տալ Շարժումը դատապարտող որոշում: Ձախողվեց: Դա փետրվարյան իրադարձությունների, թերևս, ամենակարևոր պահն է, երբ ժողովուրդը ոտքի ելավ՝ փրկելով ոչ միայն ակտիվիստներին, այլև Շարժման ճակատագիրը: Փետրվարի 12-ի երեկոյան որոշվեց հաջորդ օրը հանրահավաք անցկացնել Ստեփանակերտում: Ուրիշ բան չեմ ընդունում, ասում եմ այն, ինչ եղել է. հանրահավաք անցկացնելու մտահղացումը Սլավիկինն էր, կազմակերպիչը Սլավիկն էր, հանձնարարություն տվողը Սլավիկն էր: Եվ տեղի ունեցավ առաջին հանրահավաքը մարզկենտրոնում, ևս մի կարևոր պահ, որը նույնպես վկայում է Առուշանյանի ոչ ստանդարտ մտածողության, դրությունից դուրս գալու ուրույն միջոցներ գտնելու կարողության մասին:

Ս. Առուշանյանի դերը հսկայական է ոչ միայն Շարժման գաղափարները զանգվածների սեփականությունը դարձնելու, Շարժումը ոտքի կանգնեցնելու, այլև շրջանում ինքնապաշտպանական ջոկատների կազմավորման ու զինման գործում:

* * *

Ս. Առուշանյանը գոհ է ապրած տարիներից: Նրա կյանքի նպատակն արցախցիներիս փրկությունն էր ցեղասպանությունից, Արցախի ազատությունը, իսկ այն արդեն իրականություն է:

- Ձեր ապրած 70 տարիներն ի՞նչ են սովորեցրել:

- Ինչ իմ ծնողները սովորեցրել են, դրանով առաջնորդվել եմ՝ լինել ազնիվ, հայրենասեր, հարգել մարդկանց՝ անկախ նրանց պաշտոնից, կրթությունից, հասարակական դիրքից, աստվածաշնչյան 10 պատվիրանները պահպանել: Երբեք հարստանալու տենչ չեմ ունեցել: Միջին մակարդակով յոլա գնալն ինձ բավարարում է:

Ս. Առուշանյանը 1990թ. մայիսին ընտրվել է ՀԽՍՀ առաջին գումարման ԳԽ պատգամավոր, եղել է ԼՂՀ 2-րդ գումարման ԳԽ պատգամավոր: Տարիքը լրանալուն պես՝ 2012-ին, շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Ս. Առուշանյանին ուղարկել են թոշակի: Այսօր գործը հողի հետ է, այգի ու բանջարանոց է մշակում: Նրա և նրա նմանների փորձն ու գիտելիքներն ըստ երևույթին այլևս պետքական չեն:

Ա. Գաբրիելյան. *- Գոհ կլինեի, եթե պատկան մարմինները ճիշտ գնահատեին պահը, մարդկանց, չվիրավորվեիր, չափսոսայիր արածիդ համար, չնայած ոչ ոք դրա իրավունքը չունի. ժողովրդի համար ենք արել, հայրենիքի համար ենք արել: Իսկ Սլավիկը առաջամարտիկներից է ոչ միայն հանրապետությունում: Նա անչափ մեծ դեր է կատարել ազգային-ազատագրական պայքարի ամբողջ պատմության մեջ:*

* * *

Փետրվարի 13-ի հանրահավաքից հետո էր: Կուսշրջկոմի առաջին քարտուղար Վաչագան Գրիգորյանը մարզի ագրոարդյունաբերական կոմիտեի նախագահ Հենրիխ Պողոսյանի հետ Ասկերան էր գնացել՝ Ս. Առուշանյանի հետ քննարկելու մարզխորհրդի արտահերթ նստաշրջան անցկացնելու հարցը: Հ. Պողոսյանը, ծանոթանալով կուսշրջկոմի քաղլուսկաբինետի վարիչի հետ և տեղեկանալով, որ նա է մտահղացել ու կազմակերպել առաջին հանրահավաքը Ստեփանակերտում, ասել է. «Քո անունը ոսկե տառերով է գրվելու հայ ժողովրդի պատմության մեջ»: Իսկ Հ. Պողոսյանն այն անձնավորությունը չէր, որ խոսքեր շռայլեր:

Ս. Առուշանյանի՝ հայրենիքին մատուցած ծառայությունները, այո, գնահատվել են պետական պարգևներով, սակայն ցավում եմ, որ Շարժման մեջ նրա ու Ասկերանի նախաձեռնող խմբի տեղի ու դերի լիակատար ըմբռնումը չկա: Հապա պատկերացրեք, թե ինչ ընթացք կունենար Շարժումը և ինչ տխուր վերջաբան, եթե չլիներ Նորագյուղի գաղտնի ժողովը, առաջին ցույցը Ստեփանակերտում, քայլեր, որոնցով հաջողվեց Շարժումը դարձնել համաժողովրդական: Չշարունակեմ: Ասում են՝ ժամանակն ամեն ինչ դնում է իր տեղը, ժամանակի հետ ամեն ինչ զուլալվում է: Ավա՜ղ, միշտ չէ այդպես: Իրական հերոսները երբեմն մնում են ստվերում: Դժբախտաբար, արահետ բացողների արածի կարևորությունը գնալով նվազում է, քանի որ բացած արահետով քայլողները, շրջանցելով կամ մոռացության տալով, թե ինչ կա հետևում, իրե՛նց արածն են մատուցում: Բացած արահետով առաջ գնալ շատերն են կարող, բայց եզակիներն են պատրաստ և ունակ արահետ բացելու, այն էլ բռնատիրական ռեժիմի պայմաններում:

Ծովինար ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԵՐՀՈՒՇ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՔԱՌԱՍՈՒՆ ՏԱՐԻ ԱՆՑ

1974 թվականին ավարտելով Շահումյանի շրջանի հ.1 միջնակարգ դպրոցը, մանկավարժական միջին մասնագիտական կրթություն ստանալու նպատակով հայրս ինձ տարավ Շուշի քաղաքի: Հորս ընդունած որոշումը սրտովս չէր, բայց մեր ժամանակներն ուրիշ էին, և ես չհամարձակվեցի ընդդեմ գնալ նրա ցանկությանը: Մինչ այդ երբեք Շուշիում չէի եղել ու ինձ մոտ այնպիսի տպավորություն էր, որ այդ քաղաքը մշտապես մշուշապատ է՝ սառը, թախծոտ ու մելամաղձոտ: Ներքին զգացողությունն ինձ չէր խաբել: Առաջին հանդիպումը Շուշիի հետ իմ հոգում արթնացրեց պատմական հուշեր, որոնք գալիս էին դարերի խորքից և ինձ ծանոթ էին հայոց պատմությունն արտացոլող գրականությունից: Հինավուրց քաղաքը հպարտորեն բազմած էր լեռների գրկում և շրջափակված էր անսասան պարիսպներով: Մի կողմից անդունդով մուտքը դեպի քաղաքամրոց իրագործվում էր միայն մեկ ճանապարհով: Շուշիի սալապատ հին փողոցներից նախկինում շքեղ կյանքով ապրող հարուստ բնակիչներից մեր օրեր հասած դղյակների հարևանությամբ վեր էին խոյանում բարձրահարկ բնակելի շենքեր, աչք էին շոյում լայն և ընդարձակ ասֆալտապատ փողոցներ: Այսպես անցյալն ու ներկան, միաձուլվելով իրար, հյուսվում էր Շուշի քաղաքի բնակիչների բարեկեցիկ առօրյան: Իսկ բնակլիմայական պայմանները՝ մշուշն ու մառախուղը, ընդամենը եղանակի անցողիկ քմահաճույքներն էին:

Քննություններն ընդունող հանձնաժողովի անդամները միշտ փոխվում էին, բացի մեկից: Նա քառասունի մոտ, բարեկազմ կեցվածքով, բարի ժպիտով տղամարդ էր, որն ավելի մեծ ուշադրությամբ էր ընկալում հարցաթերթիկի մեր կողմից տրված պատասխանները և մեկ-մեկ էլ մեզ համար անհասկանալի լեզվով(ադրբեջաներեն) մտքերի հակիրճ փոխանակություն էր կատարում կողքին նստած խոժոռ դեմքով տղամարդո հետ: Դիմորդների քանակը շատ մեծ էր, իսկ ընդունելության տեղերը՝ քիչ: Քննությունների ընթացքում դիմորդներս ծանոթացել էինք միմյանց հետ, նույնիսկ հասցրել մտերմանալ: Հենց նրանից էլ տեղեկացել էի, որ բարեկազմ այն տղամարդը հայկական բաժնի տնօրենն է, հենց ինքը՝ Ալբերտ Խաչատրյանը: Քննություններն անհաջող հանձնողներ շատ կային: Կարճ ժամանակահատվածում մեզանից յուրաքանչյուրը հասցրել էր սիրել հինավուրց Շուշին և ստանալ նրա ջերմությունը: Բոլորս երազում էինք ընդունվել և սիրով շարունակել ուսումը: Ես այն հաջողակներից էի, ում ընդունելության բալերը համապատասխանել էին, և ուսանող կոչվելու իրավունք էր ստացել: Այսպես սկսվեց իմ ծանոթությունը մեր շատ սիրելի ընկեր Խաչատրյանի հետ, որը, դասախոսի բեղմնավոր աշխատանքին զուգահեռ, մեծ ջերմությամբ էր շրջապատում մեզ՝ հայ ուսանողներիս: Ասեմ, որ մեր ուսումնական և հանրակացարանի շենքերը գտնվում նույն տարածքում էին՝ դեմ դիմաց: Եթե մյուս դասախոսներն իրենց դասախոսություններն ավարտելուց հետո ցրվում էին տները , ապա ընկեր Խաչատրյանը մնում էր մինչև ուշ երեկո: Ցուցաբերելով հայրական վերաբերմունք՝ նա բացարձակապես ապրում էր մեր կյանքով ու առօրյայով: Պարապմունքներն ավարտվելուց հետո ևս մենք գտնվում էինք սիրելի մանկավարժի տեսադաշտում: Իր հոգատարության ու ջերմ վերաբերմունքի շնորհիվ նա հայրենի օջախ էր վերադառնում միայն այն ժամանակ, երբ մեր ննջասենյակներում հանգչում էին բոլոր լույսերը: Մենք արդեն գիտեինք, որ ամեն օր երեկոյան ժամը 8-9-ը ընկեր Խաչատրյանը գալու է հանրակացարան: Ննջարանի դուռը ծեծելուց անմիջապես հետո նա ձայն էր տալիս… «Աղջիկնե՛ր, կար՞ղ եմ ներս գալ»: Դուռը բացելով՝ ծիծաղելով դիմում էինք նրան.

- Ընկե՛ր Խաչատրյան, եթե ասենք չի կարելի, ներս չե՞ք մտնելու:

- Չէ՛, չեմ կարող: Ես պետք է համոզվեմ, որ բոլորդ տանն եք, և ձեզ հետ ամեն ինչ կարգին է:

- Ընկեր Խաչատրյան, կարող է՞ մենք կալանավորներ ենք, բայց տեղյակ չենք: Ինչո՞ւ չեք թողնում կյանքը մի քիչ ազատ վայելենք:

- Այդպես չի կարելի, աղջիկնե՛ր: Այստեղ ձեր բարոյական կյանքի լիազորը ես եմ: Այնպես որ, ուզեք թե չուզեք, պետք է հարմարվեք իմ կողմից սահմանված, բայց չգրված օրենքին: Կարգն է այդպես: Համոզված եմ, որ հետագայում շատ շնորհակալ կլինեք ինձանից:



Այսպես կատակելով, յուրաքանչյուրին որևէ թռուցիկ խոսք ասելով՝ անցնում էր բոլոր աղջիկների սենյակներով, բարի գիշեր մաղթում ու նորից վերադառնում ուսումնական շենք: Ընկեր Խաչատրյանի գրասենյակի լույսը հանգչում էր, երբ մենք վաղուց քնած էինք: Նա միայն այդ ժամանակ էր իր աշխատանքային օրն ավարտված համարում և արդեն հանգիստ վերադառնում հայրենի օջախ:

Մեր ուսանողական տարիներն անցնում էին նեղ շրջանակներում, բայց՝ ցասումնալից: Ընկեր Խաչատրյանը հաճախակի էր կազմակերպում խմբակային այց- համերգներ և կինոդիտումներ, էքսկուրսիաներ՝ հարևան հանրապետությունների մայրաքաղաքներ, դիտարժան վայրեր: Մասնակցում էինք Արցախում կազմակերպվող տարբեր մրցույթների, երգի ու պարի փառատոների:

Լարիսա Ղազարյանը, հայոց լեզու և գրականության դասախոսը լինելուց բացի, նաև ընկեր Խաչատրյանի կինն ու անփոխարինելի կողակիցն էր: Բոլորս շատ էինք սիրում նրան և սերտ կապված էինք բարի հոգի ունեցող այդ մանկավարժի հետ: Ազնվորեն խոստովանեմ, որ անձամբ ես ընկեր Ղազարյանից հարազատ մոր ջերմություն էի ստանում, որը փոխադարձ էր: Բոլոր միջոցառումների հայերեն լեզվով հաղորդումը վարելու պատասխանատվությունը նա ինձ էր հանձնարարում: Ես էլ իմ հերթին ձգտում էի հուսախաբ չանել նրան և պատվով էի կատարում ինձ տրված հանձնարարությունը:

Ամեն նոր ուսումնական տարվա առաջին երկու ամիսներին մենք մասնակցում էինք բերքահավաքին: Սկզբից ավտոբուսներով տեղափոխում էին Մարտակերտի շրջան: Մեկ ամիս մնում էինք տեղի դպրոցի դասասենյակներում(դպրոցներում նույնպես դադարեցվում էին պարապմունքները): Առավոտ շուտ մեզ տեղափոխում էին խաղողայգիները՝ բերքահավաքի, ուշ երեկոյան նորից բերում կացարան: Հոկտեմբերի սկզբներին այնտեղից տանում էին մասնակցելու բամբակահավաքին: Ամենուր ընկեր Խաչատրյանը մեզ հետ էր: Նա երբեք մեզ չէր ստիպում շատ աշխատել, ընդհակառակը, խորհուրդ էր տալիս ծանրություն չբարձրացնել, շատ չհոգնել, բոլորի աչքից հեռու որևէ հով տեղ հանգստանալ: Եթե մեզանից որևէ մեկը անտրամադիր էր լինում, անպայման բացահայտում էր պատճառը, հոգ տանում: Խորհուրդ էր տալիս անգամ չնչին չափով վատ զգալու դեպքում դուրս չգալ դաշտ, այլ մնալ և կազդուրվել: Նման սրտացավ վերաբերմունքից հարազատի ջերմություն էինք զգում և յուրաքանչյուր անհեթեթ հարցով դիմում էինք նրա խորհրդին: Իսկ նա համբերությամբ լսում էր մեզ, իրեն հատուկ ժպիտով հուշում, թե ինչպես կարողանալ դուրս գալ ստեղծված իրավիճակից: Տեղացի երիտասարդ տղաների համար մեր աղջիկները միշտ անհասանելի են եղել, որովհետև մենք ընկեր Խաչատրյան ունեինք, որն իր բարի թևերով միշտ հովանի է եղել մեզ: Ուսանողական տարիներին մենք չէինք հասկացել Խաչատրյան ամուսինների մեր նկատմամբ տածած մեծ հոգատարության իմաստը: Ավելի անկեղծ լինելով՝ ավելացնեմ, որ նույնիսկ հոգնում էինք ցուցաբերած չափից դուրս ուշադրությունից: Հետագայում գիտակցելով, թե ինչ արժեք ուներ նրանց տածած վերաբերմունքի խորը իմաստը, այսօր խոնարհվում եմ ընկեր Խաչատրյանի հիշատակի և ընկեր Ղազարյանի առաջ, հայտնում իմ երախտագիտությունը:

Տասնամյակներ են անցել այն ժամանակներից: Իրար հաջորդելով՝ գլորվում են մեր օրերը, իրենց հետևից փակելով ապրած կյանքի էջերը: Ամեն մի էջ մի վառ հետք է թողել մեր կենսագրության հյուսվածքում: Հետադարձ հայացք ձգելով իմ անցած կյանքի ուղուն՝ շատ եմ կարոտում ուսանողական տարիները, ընկերուհիներիս, դասախոսներիս: Հոգուս խորքում նրանց հետ հանդիպելու հույսեր էի փայփայում:

1992 թվականին Շահումյանի շրջանի բռնի տեղահանումից հետո իմ ընտանիքը բնակություն հաստատեց ՌԴ Մոսկվա քաղաքում: Այստեղ բնակվելու տարիներին հայրենիքի նկատմամբ ունեցած սերն ու կարոտն ավելի են մեծացել: Երազում էի գերի մնացած հայրենիքիս կարոտն առնել Արցախ աշխարհից, զմայլվել հայրենի լեռնաշխարհի հմայքով, այցելել Շուշի, հանդիպել սիրած դասախոսներիս հետ ու նորից հարազատի ջերմություն ստանալ նրանցից:

2017թ. օգոստոս ամսին, քառասուն տարի անց, իրականացավ իմ վաղեմի երազանքը: Այցելեցի Արցախ՝ Շուշի: Այստեղ ոչինչ առաջվանը չէր: Փոխված էին փողոցները, շենքերը, նույնիսկ՝ մարդիկ: Միայն Խաչատրյան ամուսիններն էին մնացել նույնը՝ հոգեհարազատ, պարզ, առույգ: Ընկեր Խաչատրյանն ու ընկեր Ղազարյանն իրենց հատուկ ջերմությամբ մեզ հյուրընկալեցին: Սեղանի շուրջը ջերմ մթնոլորտ էր ստեղծվել, որից ինձ հետ եկած մարդիկ հիացմունք էին ապրում: Անհնար էր զսպել ուրախությանս արցունքները, չէի հագենում դասախոսներիս հաճելի զրույցներից, քաղցր հիշողություններից: Հերթով նայեցինք իմ ուսանողական տարիների լուսանկարների ալբոմները: Ամեն մի նկարի հիմքում յուրովի ու գեղեցիկ պատմություն էր ամփոփված: Ընկեր Խաչատրյանը պատմեց իր հեղինակած գրքերի, նոր ծրագրերի մասին: Այնուհետև նա մեզ ուղեկցեց այգի, որտեղ աճում էին տարբեր տեսակի բազմաթիվ պտղատու ծառեր, հետո ցույց տվեց իրենց բնում «ճեմող» սիրամարգերին: Ապա եղանք ծաղկանոցում, որի խնամքով ինքն անձամբ է զբաղվում: Գունագեղ ու բուրումնավետ ծաղիկների հմայքից չէի կարողանում աչքս թարթել: Եվ այս ամենն իմ հրաշալի դասախոսների ջանասիրական աշխատանքի արդյունքն էր: Մեր հանդիպումից արբեցած՝ չզգացինք, թե ժամանակն ինչպես թռավ: Հրաժեշտի պահը ծանր էին թե՛ իմ և թե՛ Խաչատրյանների համար: Հուզմունք էին ապրում նաև իմ ուղեկցորդները, որոնք հետդարձի ճանապարհին իրենց հիացմունքն էին հայտնում:

- Ես չէի պատկերացնում, որ հորքուրի այցն այսքան մեծ ուրախություն կպարգևի նրանց,- ասաց եղբորս աղջիկը՝ Քնարը, որը ստեփանակերտցու հարս է:

- Մա՛մ, ընկեր Խաչատրյանը իրո՞ք ութսուն տարեկան է, - հարցրեց ավագ որդիս՝ Դավիթը:

- Իհարկե, ուղղակի չի փոխվել, միայն մազերն են ճերմակել:

- Ես զարմացած ու հիացած եմ: Ինչքա՜ն եռանդ կա այդ մարդու մեջ: Նա հզոր մարդ է: Մենք շատ բան ունենք նրանից սովորելու:

Ես ոգևորվել էի իմ հարազատների անկեղծությունից և հպարտությամբ շարունակում էի պատմել իմ դասախոսների մասին՝ նրանց ներկայացնելով տարբեր իրավիճակներում:

Ընկեր Խաչատրյանը մեծատառով Մարդ է: Նա ջանք չի խնայել մանկավարժի իր հարուստ գիտելիքները մեզ հաղորդելու, մեր մեջ գիտության գաղտնիքներին տիրապետելու ունակություն սերմանելու, մեզ բարձրորակ մասնագետներ դարձնելու համար:

Մեր նկատմամբ ցուցաբերած հայրական հոգատարության շնորհիվ ինքնըստինքյան հարազատացել էինք, մեր միջև ստեղծվել էր սերտ կապ: Ահա թե ինչու մեր հանդիպումն այսքան ջերմ էր: Քառասուն տարի հետո տեսա նույն գործունյա և եռանդով լի մարդուն, որը չէր ընդունում ոչ մի տարիք: Նա անընդհատ պրպտումների մեջ էր, արարում էր, ստեղծագործում, անմահացնում արժանի մարդկանց, այդով հանդերձ՝ անմահացնելով նաև իրեն և իր կատարած գործը: Խաչատրյանն իր բովանդակալից զրույցի ժամանակ մանրամասնորեն պատմեց հայ ժողովրդի քաջարի զավակների սխրագործությունների, Շուշիի ազատագրման մասին: Խորհելով ընկեր Խաչատրյանի ասածների շուրջ՝ ես հասկացա, որ այդ եռանդուն ու կենսախինդ մարդու հոգու խորքում կան չսպիացած վերքեր, որոնք նրան հանգիստ չեն տալիս: Երևի հենց այդ ներքին ցավն էր, որ կտրեց մեր շատ սիրելի մանկավարժ Ալբերտ Խաչատրյանի կյանքի թելը: Չարագույժ մահը նրան խլեց մեզանից՝ մեր հոգում թողնելով դառնություն, ցավ, կսկիծ, ինչպես նաև նրա հետ կապված քաղցր հիշողություններ: Մարդ, որ ինչպես երկրային կյանքում ապրեց գեղեցիկ, հեռացավ նույնքան գեղեցիկ:

Քանի դեռ բաբախում են մեր զարկերակը, Ալբերտ Խաչատրյանի՝ մեծ մանկավարժի հիշատակը վառ կմնա մեր սրտերում:

Հավերժ փա՛ռք ու խնկարկում նրա վեհ մարդկային կերպարին:

Մեր հարգարժան Ալբերտ Խաչատրյանը մեզ տվել է անսպառ բարություն, զգայուն սրտի մարդասիրության, վառ հայրենասիրության օրինակ: Լույս, հավատ ու մաքառում կա նրա տվածի մեջ, որոնք դրսևորվեցին մեր աշխատանքային ծփանքի մեջ: Կյանքի դասեր քաղեցինք, նվիրվեցինք ամբողջ ջերմությամբ տված նրա պատգամներով:

Մարդ, որ կյանքի նկատմամբ առանձնահատուկ գնահատում ուներ: Միշտ բարի, ջերմ, երիտասարդ:

Վարսենիկ ԲԱԲԱՅԱՆ-ՍԱՆԹՐՈՍՅԱՆ
ք.Մոսկվա

ՇՆՈՐՀԱՎՈՐԱՆՔ

ԽԱՂԱՂ ԵՐԿՆՔԻ ՏԱԿ՝ ԲՈԼՈՐԱՆՎԵՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

Կյանքի վեց տասնամյակը բոլորեց Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ.3 միջնակարգ դպրոցի զինղեկ Վլադիմիր Խաչատրյանը: Նա նվիրված է դպրոցին և իր ողջ գործունեության ընթացքում աչքի է զարնում բոլորաներ աշխատասիրությամբ:

Զինղեկ Վ. Խաչատրյանն ունի մարդկային բարձր հատկանիշներ: Ցանկացած ուսուցչի հետ կարողանում է առնչվել քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կազմակերպման իր իմացությամբ: Բազմափորձ մանկավարժ է, հմուտ հոգեբան, ջերմ հայրենասեր, հարգված գործընկեր ու հավատարիմ ընկեր:

Ծնվել է 1959թ. փետրվարի 8-ին Ստեփանակերտում: 1976թ. ավարտել է քաղաքի հ.1 միջնակարգ դպրոցը, 1985թ.՝ Խարկովի ռազմական ուսումնարանը: Հետագայում ստացել է ակադեմիական և մանկավարժական կրթություն:

Արցախյան պատերազմին մասնակցել է կամավորական հիմունքներով, Կրկժանի, իսկ ՆԳՆ հատուկ գումարտակի կազմում՝ Սարսանգի, Գյուլիջայի, Ֆիզուլիի, Թալիշի պաշտպանությանը:

2003 թվականից աշխատում է հ.3 միջնակարգ դպրոցում՝ ցուցաբերելով իր ողջ կարողությունները մատաղ սերնդի ռազմահայրենասիրական դաստիարակության պատվաբեր գործում, որի համար էլ բազմիցս արժանացել է տնօրինության և նախարարության խրախուսանքներին, պարգևատրվել պետական և գերատեսչական մեդալներով:

2014թ. Վ. Խաչատրյանն արժանացել է «Լավագույն զինղեկ» կոչման և երկու տարի անընդմեջ (2014թ., 2015թ.) ճանաչվել է դպրոցների քաղաքաշտպանության «Լավագույն շտաբի պետ»:

Նա մշտապես զբաղվում է ինքնակրթությամբ, որն էլ իր կազմակերպած դասերի և միջոցառումների հաջողության գրավականն է:

Վ. Խաչատրյանը լավագույնս ապահովում է դպրոցի կապը շեֆ-զորամասի և Ք.Իվանյանի անվան ռազմամարզական վարժարանի հետ:

Նա իր ակտիվությամբ և պատասխանատվությամբ մասնակցում է ռազմամարզական բոլոր միջոցառումներին և ապահովում առաջնակարգ մրցանակային տեղեր:

«Արծվիկ» ռազմամարզական մրցույթներում երեք անգամ (2003թ., 2009թ., 2010թ.) նրա նախապատրաստած թիմերը դարձել են հանրապետական հաղթողներ:

Հանրապետական մրցույթներում հաղթող են ճանաչվել նրա պատրաստած 43 աշակերտներ «Արծվիկ» խաղերից բացի՝ հրաձգությունից, ռազմականացված կրոսից, հնգամարտից:

Զինղեկ Խաչատրյանը, օժտված լինելով անսպառ էներգիայով, իր հաջողություններով դեռ պետք է ուրախացնի ու զարմացնի շատերին:

Այսօր դպրոցի ողջ մանկավարժական կոլեկտիվը շնորհավորում է հոբելյարին՝ ցանկանալով խաղաղ երկնքի տակ առողջ ու երջանիկ կյանք, ընտանեկան երջանկություն և անսպառ ջանասիրությամբ հայրենիքին բոլորանվեր ծառայություն՝ ի փառս մեր ազգի ու հայրենիքի:

Ստեփանակերտի Ա. Գրիբոյեդովի անվան հ. 3 միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ԲԱՐԻ, ՀԱՄԲԵՐԱՏԱՐ

Բնավորությամբ համեստ ու բարի, համբերատար ու ազնիվ ուսուցչուհին շուրջ 30 տարվա բեղուն գործունեության ընթացքում ուժ ու եռանդ չի խնայում, նվիրումով ու պատասխանատվությամբ է կատարում իր առաքելությունը:

Ստելլա Բաբայանը ծնվել է 1959թ. փետրվարի 8-ին Ասկերանի շրջանի Ավետարանոց գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է գյուղի դպրոցում 1966-1976թթ.:

1976-1981թթ. սովորել է Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի ֆիզմաթ ֆակուլտետի «Ֆիզիկա» բաժնում:

1984-85 ուստարում աշխատել է Ստեփանակերտի հ. 1 դպրոցում՝ որպես դաստիարակ: 1990-93թթ.՝ Ստեփանակերտի հ. 10 դպրոցում՝ որպես դաստիարակ:

1993-99թթ. աշխատել է Ասկերանի շրջանի Մադաթաշենի 8-ամյա դպրոցում՝ որպես ֆիզիկայի և մաթեմատիկայի ուսուցչուհի:

1999 թվականից առայսօր աշխատում է Զրաղացների հիմնական դպրոցում՝ որպես ֆիզիկայի, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ուսուցչուհի:

Ս.Բաբայանը հմուտ մանկավարժ է, լավ գործընկեր, սիրող մայր, հոգատար տատիկ: Նա վաստակել է աշակերտների, ծնողների և գործընկերների սերն ու հարգանքը: Հոգով միշտ երիտասարդ, եռանդուն, ակտիվ, միշտ պատրաստակամ օգնելու, խորհուրդ տալու և կազմակերպելու տարբեր միջոցառումներ ու էքսկուրսիաներ:

Մեր սիրելի՛ գործընկեր, շնորհավորում ենք Ձեր 60-ամյա հոբելյանը, մաղթում առողջություն, ուժ և կորով, ջերմեռանդ աշխատանք մատաղ սերնդի ուսուցման ու դաստիարակության պատվաբեր գործում:

Զրաղացների դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՆՎԻՐՈՒՄ

Անգնահատելի են ուսուցչի նվիրումն ու սերը, որոնք մասնագիտական բարձր որակների հետ մեկտեղ ամբողջացնում են նրա կերպարը, հաղորդում նրան անմոռանալի փայլ, որն անջնջելի հետք է թողնում մեզանից յուրաքանչյուրի կյանքում: Այս իմաստով առանձնանում է առաջին ուսուցիչը, որը նվիրյալ մանկավարժ լինելուց զատ, դրսևորում է մայրական քնքշանք, հոգատարություն, սեր: Եվ, թերևս, երջանիկ է այն երեխան, որը փոքր-ինչ առանձնանալով մայրական խնամքից՝ առաջին անգամ դպրոցում զգում է նույնքան փաղաքշանք, սեր ու ջերմություն, որոնք միաժամանակ ուղեկցվում են գիտելիքների յուրացմամբ, ունակությունների և կարողությունների ձեռքբերմամբ:

Ռաիսա Գրիգորյանն իր եզակի անհատականությամբ, մանկավարժի իր կոչմանը հավատարիմ, շատ ջերմ ու հեքիաթային է դիմավորում և ընդունում երեխաներին, որոնք առաջին անգամ են ոտք դնում դպրոցական կյանք: Դրա համար էլ նրա բոլոր սանիկները սերտ կապված են իր հետ: Միայն շնորհակալություն հայտնելը չի բավականացնում երախտագիտության այն զգացումը, որն ունեն աշակերտներն ու ծնողները Ռաիսա Գրիգորյանի հանդեպ. նրա վերաբերմունքից աշակերտներն իրենց զգում են հարազատ վայրում, որտեղ իրենք կարող են ստանալ անսահման գիտելիքներ: Երբ սիրում ես ուսուցչուհուդ, պատրաստ ես բոլոր ջանքերդ ներդնել սովորելու համար: Այդպիսին պետք է լինի մանկավարժը, որի անշահախնդիր, բարի ու պահանջկոտ էությունը ազգային արժեքներով ու հայրենասիրությամբ կարող է բազմաթիվ սերունդներ կրթել: Նա նաև լավ մայր է, տատիկ, սիրված ու գնահատված հարս և կին: Ռաիսա Գրիգորյանը արարում է, ապրում դպրոցով և ուրախանում իր սաների հաջողություններով: Նա իր մանկավարժական գործունեության տարիներին պարգևատրվել է պատվոգրերով և շնորհակալագրով: Նա ոչ միայն լավ մանկավարժ է, այլ նաև՝ լավ հոգեբան: Յուրաքանչյուր աշակերտի ցուցաբերում է անհատական մոտեցում՝ հոգու խորքում պահելով և հաճախ վերհիշելով նրանց անաղարտ մանկությունը: Նրա բնավորության երկու գծերի՝ բարության ու համբերատարության միաձուլումը ստիպում է սիրել ու հարգել նրան ամբողջ հոգով ու սրտով:

Հունվարի 29-ին վաղ առավոտից դպրոց էին շտապում ուսուցիչներն ու աշակերտները՝ առաջինը շնորհավորելու սիրելի ուսուցչուհու 60-ամյակը: Տարիներն ասես ձգվել ու կենտրոնացել էին մեկ տեղում:

Դպրոցի մանկավարժական կոլեկտիվը սրտանց շնորհավորում է սիրելի դասվարի, համեստ մարդու, բարեկիրթ ու բարի Ռ. Գրիգորյանի հոբելյանը, մաղթում առողջություն, հաջողություն:

Ձեզ անսպառ ուժ ու նվիրվածություն: Մաղթում ենք նորանոր հաջողություններ Ձեր շնորհակալ և հայրենանվեր առաքելության Ճանապարհին:

Քերթի Կ.Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցի մանկավարժական կոլեկտիվ

ՕՐԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՊԱՇՏՊԱՆԻ ՀԵՏ

Մարտունու շրջվարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի նախաձեռնությամբ հունվարի 28-ին Հայոց բանակի կազմավորման 27-րդ տարեդարձի և Հայրենյաց պաշտպանի օրվա առթիվ Մարտունու մշակույթի կենտրոնի մեներգիչները և արվեստի դպրոցի սաները տոնական համերգով հանդես եկան շրջանի տարածքում տեղակայված՝ գնդապետ Կարեն Գրիգորյանի ենթակայության տակ գտնվող Ն զորամասում:

Օրվա կապակցությամբ շնորհավորանքի ու բարեմաղթանքի խոսքերը, հայրենիքին ու զինվորին ձոնված երգերն ու պարերն ապահովեցին զինվորականների տոնական տրամադրությունը: Իրենց կատարումներով հյուրերին միացան զորամասի շնորհաշատ զինվորները:

Շրջվարչակազմի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի առաջին կարգի մասնագետ Գևորգ Սարգսյանը բարձր է գնահատում բանակ-հասարակություն ամուր կապը և նշում, որ նման այցելություններն ու միջոցառումները մեծ ոգևորություն և ուրախություն են պարգևում զինվորներին, բարձրացնում նրանց հայրենասիրական և մարտական ոգին: «Հայոց բանակի սպաներն ու զինվորները գիշեր ու ցերեկ ապահովում են մեր երկրի անվտանգությունը, կյանքի գնով անառիկ պահում մեր սահմանները: Տոնական միջոցառումների միջոցով մեր շնորհակալությունն ենք հայտնում նրանց՝ անձնվեր ծառայության և մեզ խաղաղ այգաբացներ պարգևելու համար»,- ասաց նա:

Բանակ-հասարակություն ամուր կապի և հանրակրթական դպրոցներում ձևավորված ավանդույթի համաձայն՝ այս տարի նույնպես Մարտունու արհեստագործական ուսումնարանի, հ.1 և հ.2 դպրոցների ուսուցիչներն ու աշակերտները համատեղ ուժերով պատրաստել էին քաղցրավենիքի ծանրոցներ կրթօջախների շեֆ-զորամասերում ծառայող, սահմանի ամենօրյա անդորրը պահպանող հայրենյաց պաշտպանների ու շրջանի տարածքում տեղակայված զինվորական հոսպիտալում բուժում ստացող զինվորների համար:

Տոնական օրվա կապակցությամբ աշակերտները նամակներ ու շնորհավորական բացիկներ են ուղարկել, մեր պաշտպաններին մաղթել առողջություն և միմիայն հաջողություններ: «Մատաղ սերունդը պատրաստակամ է թիկունքից օգնել սահմանին կանգնած զինվորներին, իսկ հարկ եղած դեպքում նույնիսկ հերթափոխել նրանց»,- ընդգծում է հ.1 դպրոցի դաստիարակչական աշխատանքների գծով կազմակերպիչ Դիանա Մարտիրոսյանը:

Նշենք, որ նման այցեր շեֆ-զորամասեր կատարել են նաև շրջանի այլ դպրոցների սովորողներ:

Ձևավորված ավանդույթն ինքնին արիության դաս է դպրոցականների համար, հավատ, վստահություն և պարտավորություն հայրենի երկրի խաղաղությունը երաշխավորողների հանդեպ:

Անուշ ԱՍՐԻԲԱԲԱՅԱՆ
Ք. Մարտունի

ԳԵՂԱԴԻՏԱԿ

ԲԱԺ ԴԱՍ՝ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՄՈՏԻՎՆԵՐՈՎ

Ո՞րն է իրական հայրենասիրությունը: Ես կասեի՝ հայրենասիրությունն առաջին հերթին մարդու ամուր կապվածությունն է իր հողին ու ջրին, հարազատ հողում խոր արմատներ ձգելը, և որքան խորն են դրանք, այնքան երկիրն ավելի կանգուն ու անսասան է: Իրական հայրենասիրությունը քո հարազատ ծննդավայր վերադառնալն է, թեկուզ և ամբողջությամբ ավերված ու հրկիզված, և քո ամուր ու անսասան կամքը՝ ցանկացած գնով այն կրկին վերականգնելու, վերահաստատելու…

Ասկերանի շրջանի Խրամորթ գյուղը, որը մեծապես տուժել էր մեզ պարտադրված պատերազմում, իր նվիրված, պատվասեր ու գործունյա ժողովրդի շնորհիվ այսօր արդեն ապրում է առօրյա հոգսերով: Օրվա ցանկացած ժամի Խրամորթում պարապ մարդ չես տեսնի: Իսկ Գառնիկ Ավանեսյանի անունը կրող դպրոցը, որն ուսում տալուց բացի նաև աշխատասիրություն, հարազատ բնակավայրի հոգսերով ապրելու հմտություններ է ներարկում, հայրենասիրական ու հայրենապահպան գաղափարներ է մատուցում սովորողներին: Այս տեսանկյունից դպրոցի տնօրեն Անուշ Գաբրիելյանը հպարտորեն նշում է, որ դպրոցի բոլոր աշակերտները ոգևորությամբ ու պատրաստակամորեն են մասնակցում կազմակերպվող բոլոր միջոցառումներին:

2019-ը հայերիս համար նշանավորվում է մի շարք մշակութային և գրական գործիչների հոբելյանական տարեդարձերով: Այս առումով Խրամորթի միջնակարգ դպրոցն առաջիններից մեկը օրերս նշեց Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակը: Այն նշանավորվեց Մեծն Լոռեցու լավագույն ստեղծագործությունների ներկայացմամբ: Միջոցառմանը, որը կազմակերպել էր դպրոցի դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Հասմիկ Անդրյանը, ընդգրկված էին 10-12-րդ դասարանների բոլոր աշակերտները: Այն կազմակերպվել էր բաց դասի տեսքով, որի ժամանակ աշակերտները ներկայացրին «Թմկաբերդի առումը» պոեմը, նրա գլխավոր գաղափարը՝ բարի գործի անմահությունը, որն ավելի խոր և ամբողջական է դառնում շնորհիվ պոեմում արտահայտված մյուս գաղափարների՝ հայրենասիրության և դավաճանության հակադրության, սիրո ոգևորող և կործանիչ ուժի հաստատման, մարդկային կյանքի անցողիկության:

Հ. Անդրյանը, ներկայացնելով նոր նյութը՝ «Փարվանա» բալլադը, կանգ առավ հավերժական սիրո գաղափարի, լավի, գեղեցիկի, վեհի որոնման ու ձգտման մեծ խորհրդի վրա:

Ապա դպրոցականները բեմադրեցին «Անուշ» օպերան՝ յուրաքանչյուր վառ ու գեղեցիկ դրվագներով, հեզաճկուն պարով, Սարոյի և Մոսու կոխի տեսարանով: Նրանք ներկայացրին նաև Սարոյի սպանությունն ու մոր ողբը: Աշակերտները, ոգևորված թումանյանական ոգով, ներկայացնում էին գյուղական կյանքն՝ իր բարքերով, հայի կերպարը:

Պոեմը մի կողմից բացահայտում ու քննադատում է հայ գյուղի բացասական կողմերն ու արատավոր երևույթները, նահապետական կյանքի հետամնացությունը, խավարամտությունը, մյուս կողմից դրվատում է այդ միջավայրից առանձնացող և հարկադրվող կապանքներին ընդդիմացող հերոսներին, ներկայացնում նրանց մարդկային բարձր արժանիքները, մաքուր ու հավերժական սերը, որը գեղեցկացնում ու ազնվացնում է մարդու հոգին: Այնպիսի մեծ վարպետությամբ էին աշակերտները կատարում իրենց դերերը, որ ներկաների մոտ հուզմունքի ալիք առաջացրին:

Ուսուցանող նյութի այսպիսի մատուցումն անհնարին է, որ երբևէ մոռացվի: Մտովի տեղափոխվեցի ութսունականների վերջերը, երբ հարազատ կրթօջախիս բարձր դասարանցիները գյուղական ակումբում բեմադրել էին Թումանյանի «Անուշը», որը դիտելու էին եկել կոլտնտեսության դաշտերում խոնջացած խրամորթցիներն ու հոգնատանջ աշխատանքից հետո իրենց խաղաղ հանգիստն էին վայելում…

Գրում եմ Թումանյանական օրերի մասին, որոնք մեկնարկել և ընթացիկ տարում նշվելու են հայաբնակ բոլոր վայրերում և մտովի զրուցում Ամենայն հայոց բանաստեղծի, հանճարեղ մարդու, մեծ հումանիստի հետ և հպարտանում ազգիս հանճարներով:

Անահիտ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՅՈՑ 12 ԳՈՀԱՐՆԵՐԻ ԳՈՎՔԸ

Օրերս Մարտունու Ն.Ստեփանյանի անվան միջնակարգ հոսքային դպրոցի նիստերի դահլիճում տեղի ունեցավ միջոցառում՝ նվիրված հայոց մայրաքաղաքներին: Մասնակցում էին 6-10-րդ դասարանների աշակերտները: Այն կազմակերպել էին դպրոցի պատմության ուսուցչուհի Քնար Բաղալյանը, դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ Դիանա Մարտիրոսյանը և դպրոցի գրադարանավար Արևիկ Սարգսյանը: Միջոցառումը նպատակ էր հետապնդում հիշատակել մայրաքաղաքների պատմամշակութային արժեքը: Հայաստանի պատմական մայրաքաղաքներ. տասներկու քաղաքներ, որոնք պատմական տարբեր ժամանակահատվածներում եղել են համահայկական պետությունների վարչաքաղաքական, տնտեսական, կրոնական-մշակութային կենտրոններ: Դրանք են՝ Վան, Արմավիր, Երվանդաշատ, Արտաշատ, Տիգրանակերտ, Վաղարշապատ, Դվին, Բագարան, Շիրակավան, Կարս, Անի, Երևան: Միջոցառման հաղորդավարները յուրաքանչյուր մայրաքաղաքի մասին տեղեկություններ հաղորդեցին, հանդես եկան նաև այն աշակերտները որոնք մարմնավորեցին Սարդուր, Արգիշտի, Արտաշես, Տիգրան Մեծ, Խոսրով Կոտակ արքաների կերպարները: Հայաստանն աշխարհի ամենաշատ մայրաքաղաքներ ունեցող երկիրն է: Այսօր անկախ երկիր է՝ բազմաթիվ պատմական հուշարձաններով, շնորհաշատ երիտասարդներով, որոնք ամուր թելերով կապված են աշխարհի տարբեր ծայրերում ապրող հայրենակիցների հետ: Հայաստանն առաջինը պետականորեն քրիստոնեությունն ընդունած երկիրն է: 301 թվականից առայսօր Հայ եկեղեցին իր շուրջն է հավաքել հայությանը: Աշխարհի որ ծայրում էլ ապրեն, անպայման իրենց շուրջն ստեղծում են մի կտոր Հայաստան՝ Արարատ լեռան պատկեր, խաչքար և, իհարկե, Աստվածաշունչ: Իսկ մեր այսօրվա Երևանը ոտքի կանգնեց նախ և առաջ տաղանդավոր ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի շնորհիվ. վեր հառնեց մեր Երևանն իր լայնահուն պողոտաներով, վեհաշուք վարդագույն շենքերով, պարիսպներով, այգիներով, կինոթատրոններով: Մենք իրավունք ունենք հպարտանալու մեր մայրաքաղաքով, նրա պողոտաներով, որ ճառագայթների նման ճյուղավորվում են տարբեր ուղղություններով:

Դ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Մարտունու հ.1 դպրոցի դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ

ԲՈՒՐԱՎԵՏ, ԳՈՒՆԵՂ

Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվան հ.1 հիմնական դպրոցի դահլիճում «Արցախի բուրմունքն ու հացի բույրը» խորագրով օրերս կայացած միջոցառումը նախադպրոցական տարիքի երեխաների կարողությունների ևս մեկ գեղեցիկ ներկայացում էր, որը բացահայտվեց ստեղծական միտք, վառ երևակայություն ունեցող, իր գործին նվիրված ու ջանադիր աշխատող դաստիարակի շնորհիվ: «Ժպիտ» խմբի դաստիարակ Զոյա Ավագիմյանի և իր փոքրիների 4-5 ամսվա համատեղ աշխատանքի արգասիքն էր դա, որի քաղցր պտուղները վայելեցին օրվա հանդիսականները՝ ԱՀ կրթության, գիտության և սպորտի նախարարության, քաղաքապետարանի ԿՍ բաժնի ներկայացուցիչներ, այլ դպրոցների նախադպրոցական խմբերի դաստիարակներ, զինվորներ, հյուրեր:

Բարձր տրամադրություն էին հաղորդում և՛ երեխաների ազգային տարազն ու կոլորիտը, և՛ նրանց թոթով լեզվով հնչող խոսքը՝ ուղղված Արցախ աշխարհին, նրա պաշտպանությունն ու բույրը պահող հայ զինվորին, գյուղացուն, ուսուցչին, բժշկին, շինարարին, բոլոր-բոլորին, որոնցից ամեն մեկն իր գործով շենացնում է երկիրը: Ի դեպ, հանդիսատեսը ոչ միայն լսեց երեխաներին, այլև տեսավ նրանց այդ բոլոր տեղերում: Երեխաներն իրենց դաստիարակի գլխավորությամբ «մասնագիտական» էքսկուրսիայի էին գնացել դաշտ՝ հողի աշխատավորին մոտիկից ծանոթանալու, Շուշիի «Եգնիկ Մոզյան» արհեստագործական ուսումնարանի «շինհարթակ», «խրամատում կռվել» հայ զինվորի հետ միասին, սպիտակ խալաթ հագած՝ «օգնել» բժշկին, որպես զբոսաշրջիկ այցելել Արցախի տեսարժան վայրեր, և քանի որ միջոցառման գլխավոր թեման հացն էր, «մասնակցել» են հնձին, եղել հացաթխման արտադրամասում և շատ այլ վայրերում, պարել Շուշիի պարիսպների վրա և այլն: Արցախի բույրը զգացել են ամենուրեք և այն ավելի հարստացրել՝ իրենց բույրն ու գույնը խառնելով: Այդ ամենում հանդիսատեսը համոզվեց՝ դիտելով նրանց ստեղծած տեսաֆիլմերը:

Ավարտն ավելի քան խոսուն էր. հայկական «Քոչարին» պարահրապարակ բերեց նաև ծնողներին. միասնական շուրջպարն ասես ամփոփեց ծնող-ուսուցիչ-երեխա սերտ հարաբերությամբ աշխատանքի արդյունքը:

Միջոցառումը կայացել էր: Դաստիարակ Զ. Ավագիմյանը գոհ էր երեխաներից և ինչպես խոստացել էր, նրանց հետ ֆուտբոլ կխաղա միջոցառումից անմիջապես հետո: Ասել է թե՝ անակնկալները շարունակվում են…

Միջոցառման մասին իրենց հիացմունքն արտահայտեցին շատերը: Մեջբերենք նրանցից մի քանիսի խոսքը.

Ալինա Բաղդասարյան, դպրոցի փոխտնօրեն.

- Իսկապես, հիացած ենք երեխաներով և դաստիարակով: Ամեն ինչ գեղեցիկ էր՝ թե՛ երեխաների հագ - Լուսինե Ղարախանյան, հոգեբան.

- Դաստիարակը կրեատիվ է, նախաձեռնող, մեծ կազմակերպիչ, ինչը ժամանակակից կրթական համակարգի պահանջն է:

Կառլեն Մարգարյան, Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի վարիչ.

- Չնայած ընկեր Ավագիմյանը մանկավարժական երկար ճանապարհ չի անցել, բայց արդեն ունի իր ձեռագիրը. ստեղծագործ դաստիարակի ճանապարհն է գծում: Շնորհակալություն նրան, նման մանկավարժների կերպարով սերունդներ են դաստիարակվում:

Իրինա Գրիգորյան, ԱՀ ԿԳՍ նախարարի խորհրդական.

- Միջոցառումն ունի դաստիարակչական մեծ նշանակություն, երեխաները հայրենասեր են մեծանում: Հաճելի էր, որ ծնողները նույնպես ընդգրկված էին, ապահովված էր ծնող-դպրոց կապը: Խոսքս հղեմ երեխաներին՝ միջոցառման հանգույն.

- Շող ու շափաղ հինչը օնիմ,
Լոխ ձեզ մատաղ.
Միշտ ծեր տանը ուրախություն ինի,
Միշտ խոխոխցը սասը զնգա,
Պըտրծակերն էլ լիգը կենա…

Անահիտ ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ստեփանակերտի քաղաքապետարանի ԿՍ բաժնի մասնագետ

ԼՈՒՍԱՐԱՐ
ԽՄԲԱԳԻՐ՝ Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ
✉ Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 95, ☎ 94-38-99, E-mail: gorctert@mail.ru: www.lusarar.info
Մեջբերումների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում:
Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպաքանակ՝ 3050: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ:
Ստորագրված է տպագրության՝ 09.02.2019թ.:
«Լուսարար» թերթը տարածվում է միայն բաժանորդագրությամբ: